

3637

891.995  
U-22



1848

**БЕРЕГИТЕ КНИГУ!**

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.



891.990.

Մ-22

կ

ՄԱՆՐ ՎԵՊԵՐ

591

871

ՈՒ

ԴԱՍԵՐ

ԳԱՂՈՒՄԸ

ՄԱՆՐ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ

Մ 22/7.

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



2004

3466

Զմիշտնիս

ՏՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1876

1-154



5298



3018

9 41

## ՄԱՆՐ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ


Հնազանդութիւն չըրաւ : Բոյնէն դուրս ելնել ուզեց . մինչեւ  
ծայրը հասաւ , ախ , անմիտ թռչնիկ , հիմակ վար պիտի  
լինի . . . վայ , ահա կ'իյնի . . . ծխանին մէջ ընկաւ :

Եւ երբ հայրն ու մայրն ետ դարձան , բոյնին մէջ մինակ  
երեք հատ թռչնիկ գտան :

Եւ այս երեք թռչնիկներն սկսան ճրվճրվալ . այս ըսել  
կ'ուզէին . « Մեր եղբայրը կորաւ , ծխանին մէջ գլորեցաւ » :

Այն ատեն հայր , մայր ու երեք թռչնիկները շատ ու շատ  
ցաւեցան :

Ինչու որ մէկուն անհնազանդութիւնն բոլոր ընտանիքին  
դժբաղդութիւն կ'ըրէ :







Գ.

ԳԻՐԻՐ

Անդամ մը փոքրիկ տղայ մը կար. անունն էր Զարեհ :  
 Չորս ու կէս տարու էր Զարեհը : Հատ անգամ իր մօրը  
 քովը կ'նստէր, և անոր կ'ըսէր .

«Մայրիկ, կ'աղաչեմ, ինձ բան մը պատմէ» :

Մայրն ալ շատ աղօթ պատմութիւններ կ'պատմէր անոր :  
 Օր մը Մեծին Ներսիսի պատմութիւնն ըսաւ. այս Սուրբ  
 Ներսէս զպրօցներ հաստատեց, որբանոցներ շինեց և փոք-  
 րիկ տղաքներ ժողովելով՝ անոնց կարգալ ու գրել սորվեցուց :

Երբոր մայրիկն իր խօսքը լսեցուց, Զարեհ հարցուց ա-  
 նոր .

«Մայրիկ, միթէ կ'ճանչնամ Սուրբ Ներսէսը :



— Չէ, տղաս, չեմ ճանչնար, պատասխանեց մայրը .  
 Սուրբ Ներսէս շատ տարիներ կայ որ մեռած է :

— Ուրեմն, մայրիկ, ըսաւ տղան, ո՞ր դիտես անոր ը-  
 րած գործերը :

— Գրքի մը մէջ կարդացի», պատասխանեց մայրը :

Ուրիշ օր մ'ալ մայրը Մեծին Վարդանին պատմութիւնը  
 պատմեց : Պատմեց թ ինչ ազնիւ, քաջ, հայրենասէր մարդ  
 էր, ինչպէս Հայաստանը թշնամիութենէն ազատելու համար  
 քաջութեամբ ռահատակ եղաւ :

Երբոր այս պատմութիւնը վերջացուց, Զարեհ իր մօրը  
 հարցուց .

«Մայրիկ, Մեծն Վարդանը տեսած ես :

— Չէ, տղաս, տեսած չեմ, պատասխանեց մայրը : Մեծն  
 Վարդան շատ, շատ տարի կայ որ մեռած է :

— Ուրեմն ինչպէս իմացար Մեծին Վարդանի ըրածներն,  
 հարցուց մանկիկը :

— Գրքի մը մէջ կարդացի», պատասխանեց մայրը :

Ուրիշ անգամ մ'ալ Զարեհին մայրն իրեն պատմեց որ  
 տառն տառն ճամբորդներ մեծ նաւեր մանր ու ծովով ուրիշ  
 երկիր մը դացեր են, ուր միտակ աւաղ կայ դետիրը. այս  
 երկիրն բնակիչները սև են, խոշոր չորքոտանի կենդանիներ



կան այն տեղ, ծառեր կան որ անուշահամ պտուղներ կը բերեն, և ուրիշ շատ բաներ պատմեց այնպէս որ Զարեհին հետաքրքրութիւնը շատ զրգռեց :

Զարեհ նորէն հարցուց .

«Մայրիկ, միթէ այդ երկիրը դաջած ես :

— Ո՛հ, չէ, պատասխանեց մայրը, շատ հեռու է :

— Այն ատեն ի՞նչպէս զիտես որ այդպիսի բաներ կան այն տեղ, հարցուց մանկիկը :

— Գրբի մը մէջ կարգացի այդ բաները », պատասխանեց մայրը :

Օրին մէկը Զարեհին մայրը դուռն ելեր էր . Զարեհ մինակ էր, սիրար կ'սեղանար քանի կ'մտածէր որ մայրը չկար որ իրեն պատմութիւն մը բռնէ :

Այն ատեն ինքնիրեն ըսաւ . «Որովհետեւ իմ մօրս ըսած զրոյցները զիբբերուն մէջ կը գտնուին, ես ալ կրնամ փընտռել ու գտնել » :

Հուռ մը գնաց զիբբ մը առաւ սեղանին վրայէն ու բացաւ . . . բայց անոր մէջ սե նշաններ տեսաւ ճերմակ թղթի վրայ :

Գիբբը գոցեց և ուրիշ երես մը բացաւ . նորէն ճերմակ թուղթ ու սե սե գծեր գտաւ :

Գրբին երեսներն ասոյիս անդին դարձուց . բայց մէկ ծայրէն միւս ծայրն մի և նոյն բանը տեսաւ :

Այնպէս որ մանկիկը բան մը չէր հասկընար . այն ատեն զիբբը սեղանին վրայ դրաւ, ձանձրոյթ զգաց և մինչև մօրը գալը քնացաւ :

Երբոր լսեց որ մայրը դարձեր է, աչքերը բացաւ և աւար վրայ վազեց :

«Մայրիկ, ըսաւ անոր, ի՞նչ պէտք է ընել որ զրբիդ մէջ եղած պատմութիւնները հասկընամ :

— Տղաս, պատասխանեց մայրը, պէտք է կարգաւ սորվիլ » :



Դ.

#### ՌՈՆՈՒԱԾ ԹՈՉՆԻԿԸ

Փոքրիկ աղջիկ մը կար որ իր կնքամօրը տունը գացեր էր :

Այս կնքամօր սենեկին մէջ վառարան մը կար ուր բնաւ կրակ չէին վառեր, ինչու որ օդը տաք էր . Գարնան ժամանակ էր :

Յանկարծ վառարանին մէջ շշուկ մը կը լսուի որ լըւ, լըւ կ'ընէր :

Փոքրիկ օրիորդն ուղեց վախէն պահուրտիլ, բայց իր կնքամայրը ձեռքէն բռնեց ու անոր ըսաւ .

«Եկուր նայիմ ինձի հետ, եկուր նայինք ի՞նչ է այն որ վառարանին մէջ լըւ, լըւ կ'ընէ :

Փոքրիկ աղջիկը դէմ չկեցաւ . իր կնքամօր բովը գնաց



և վառարանին խողովակէն վեր նայեցաւ . ինչ տեսնէ աղէկ .  
Թռչնիկ մը , որ թռեալը զարնելով վար բնկաւ :

Իր թռեալը զարնելուն համար էր որ լըւ . լըւ ձայն կը  
հանէր :

Փոքրիկ օրիորդ . թռչնիկը բռնեց . շատ ուրախ էր զայն  
ձեռք ձեռքուն համար . բայց կըքամայրն անոր ըսաւ .

«Այս թռչնիկը դո՛ճ չէ , ինչու որ իր ծնողքէն բաժնուեր  
է . ծնողքն ալ շատ տրտում ախար են անշուշտ որ իրենց  
զաւակը կորուսին» :


Այն ատեն փոքրիկ աղջիկն՝ որ բարի սիրտ մը ունէր , իր  
կնքամոր ըսաւ . «Որեմն իր ծնողացը զրկենք այս թռչնիկն  
... բայց չլրնար թռիլ . դեռ ոյժը չբաւեր ... » :

Այն ատեն թռչնիկն վանդակի մը մէջ դրին , դուռը բա-  
ցին ու վանդակը պատու հանն կախեցին . քիչ մը ետք՝ իր  
հայրն ու մայրը գալով՝ սկսան վանդակին բոլորտիքը թռչնիկ ,  
վերջը ներս մտան և իրենց դատած զաւակին կառուցով կերակուր  
տուին :

Անկից ետք՝ երբ թռչնիկը բաւական մեծնալով՝ կարող ե-  
ղաւ թռեալու , թռաւ դնաց : Բայց երբոր մութը կոխեց , ու  
թռչնիկը քնանալ ուզեց , իր բոյնը չգնաց , ծառերուն ճիւ-  
ղերուն մէջ պատսպարան չփնտռեց . հասաւ դարձաւ , բարի  
կնքամոր պատու հանը զարկաւ և իր առջին վանդակին մէջ ե-  
կաւ թառեցաւ :

Եւ ամէն ատու , իր անուշ սիրուն երգն երգելէն ետե՛  
կ'մեկնէր , բայց իրկունը դարձեալ կ'դառնար իր վանդակը :

Ինչու որ բոլոր կենաց մէջ իրեն ինչ բարիք որ ըրեր էին  
կ'յիշէր :



Ե

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՌԱՐ

Անգամ մը պղտիկ եղբայր ու պղտիկ քոյր մը կային : Եղ-  
բայրը Տիւրան կ'իւղուէր , իր քոյրը Չարուհի :

Կաղանդ օր մ'էր , այսինքն՝ այն օրն որ կաղանդ չէք կ'առ-  
նեն կ'տան : Այս փոքրիկ տղայ ծնողքը հարուստ չէին , բայց  
աղքատ ալ չէին , այնպէս որ եղբայր ու քոյր , ոչ միայն  
աղ որ կաղանդ չէքներ առին , այլ և նոյն օրն ամէն մէկը  
տանն Փրանք ժողովեց , և անով կրնային ուզածնին առնել :

Պատերնին երկուքն ալ խաղալիկ ծախող մարդու մը խա-  
նութը տարաւ և անոնց ըսաւ . «Ինչ որ կ'ուզէք ընտրեցէք» :

Չարուհին որ պէպէսներու համար հոյի կ'տար , և որչափ  
ունենար դո՛ճ չէր լինէր , իր տանն Փրանքը տուաւ ու պէ-  
պէկներ գնեց : Ամէն տեսակէն կային , տիկիներ , իր զա-  
ցիներ , մանկիկներ , փոքր մարդիկներ , բոլորը մէկ անդ  
տանն չորս հատ , այսինքն տանն չորս հատ պէպէկ :

Չարուհին այս ամէն բաները ձեռքը բռնելով շփոթեւ  
էր , իր Տիւրան եղբայրն անոր ըսաւ .

«Շատ կ'փափարիմ կառք մը ծախու առնուլ բոլոր այդ  
պէպէկներն անոր մէջ գնելու համար :

— Ա՛հ , շատ լաւ պիտի ընես , փոքրիկ եղբայրս , պա-  
ռաց Չարուհին , մէկ տեղ պիտի խաղանք : Կառք մը գնէ՛ ,  
բայց աղտոր կառք մը :



— Հա՛, աղւոր մը», պատասխանեց Տիգրան: Խաբը՝ վաճառականին դառնալով ըսաւ. «Պարոն, կ'աղաչեմ, աղւոր կառք մը հանէ նայիմ»:

Խաղաղիկներու վաճառականն շուտ մը սիրուն կառք մը հանեց, այս կառքին երկու ճերմակ ձիեր լծուած էին, որոց թամբն ոսկեգոյն մետաքսէ էր: Նստարանին վրայ խոշոր կառապան մը կար զանդուր մազերով, կարմիր զգեստով, դեղին վարտիքով և սպիտակ գուլպաներով: Կառքին ետեւն երկու պայիկ կային նոյնպէս հագուած շքուած:

«Է՛հ, ո՛րչափ աղւոր է այս կառքը, պողպտին երկու մանկիկները: Ի՞նչ է այս կառքին դինը, հարցուց Տիգրան:

— Տասն ֆրանք է, պարոն:

— Ահա քեզի տասն ֆրանք», ըսաւ Տիգրան սեղանին վրայ դնելով երկու հատ հինգ ֆրանքնոց:

Ապա՝ քոյր ու եղբայր շուտ մը կառքին մէջ դնելու ելան պէպէկները:

Բայց իրենց յոսը պարապ ելաւ, երբոր տեսան որ միայն չորս հատ պէպէկ անոր մէջ կ'ողմէին:

«Հապա միւսներն ի՞նչ ընենք, հարցուց Չարուհի յուսահատ դէմքով մը, և իր եղբորն երեսը նայեցաւ:

— Իբաւ, միւսներն . . . », պատասխանեց Տիգրան նոյնչափ վշտանալով և իր քրոջն երեսը նայեցաւ:


Այն ատեն իրենց բարի պապն որ հետերին եկեր էր, ըսաւ.

«Կառք մը գնելու տեղ, ինչո՞ւ համար համակառ մը չէք գներ. այնչափ աղւոր չէ, բայց ձեր բոլոր պէպէկները կըրնան անոր մէջ մտնել»:

Եւ իբաւ, մթերանոցին մէջ մեծ համակառ մը կ'գտնուէր, որ բոլորովին ճշմարիտ համակառներու կ'նմանէր. այս համակառները մէկ զըռու առնլով քաղքին մէկ ծայրէն միւս ծայրը ճամբորդներ կը տանին կ'բերեն:

Քոյր ու եղբայր իրարու երես նայեցան. վարաներ մնացեր էին և իրարմէ խորհուրդ կ'հարցընէին: Ի՞նչպէս ձգէին այն կառքն որ այնչափ աղւոր էր. բայց համակառն ալ այնքան օգտակար էր: Մէկ կողմէ չորս հատ երջանիկ պէպէկ, միւս կողմէ տասն չորս հատ. ի՞նչ որոշում պիտի ընէին:

«Հիմակ, իմ փոքրիկ բարեկամներս, դուք ի՞նչ խորհուրդ պիտի տաք. Տիգրան ու Չարուհի ո՞ր կառքը գնեն . . . ինչ որ դուք որոշէք»:










Նէշէն հեռացաւ և մարդագետնին միւս ծայրը փախաւ, շուտ շուտ վազվզելով և բոլոր ուժովը վրնջելով. «Եւնջ, եւնջ, եւնջ, եւնջ» :

Եւ այն կոշտ մարդը նոյն տեղը մնաց : Իր տունը դառնալու համար ստիպուեցաւ կամ մինչև զօտին թրջուիլ կամ սպասել որ ջուրը ցամբի :

Երբ տան տէրն իր սպասաւորին բարեկամն է, սպասաւորն ալ այն ասան միայն տան տիրոջ բարեկամը կ'դառնայ :



Է

#### ՆՈՐԱՆԻ ՄԵ ՀԱՏԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը պղտիկ աղջիկ մը կար որու անունը Սիրուն էր : Ճշմարիտը՝ այնքան անուշ ու սիրալիր աղջիկ մ'էր որ ամէն մարդ զինք կը սիրէր :

Անուշ Սիրունին մայրն փոքրիկ դեղին թռչնիկներ ունէր որ Գէղձաձիկի ցեղէ իջեր էին . ասոնք ամենէն առաջ՝ Ափրիկէի մօտ կղզիները (Գանադէա) ծնած են, այն տեղ որ շատ տաք է օդը : Սիրունն էր որ այս թռչնիկները կ'ինամէր, որ անոնց կերակուր կը տար, որ ամէն օր վանդակնին կ'մաքէր : Եւ որովհետեւ բնաւ անոնց վախ չէր ազդեր, ինք ալ անոնցմէ չէր վախնար . մանաւանդ շատ կ'ուրախանային երբոր իրենց քովը գար, և շորհակալ լինելու համար իրենց ամենէն դեղնցիկ եղանակները կ'երգէին :

Երբոր վանդակը բացուէր, թռչնիկներն իրենց տիրուհւոյն մասներուն վրայ, ուսերուն վրայ կ'ընչտէին, և մեզմիկ անոր ձեռքը կ'կտցէին, որպէս թէ պաղնել ուզէին :



Բնաւ դժգոհ չէին որ վանդաւն են, ինչու որ անոր մէջ ծներ էին, և երկար ժամանակ իրենց հօր ու մօր խնամօք կերակուր դտեր էին:

Գեղձանիկներն որ արեն երկար ատեն երեցող երկրէ մի են, շատ կ'սիրէին Սիրունը: Ասոր համար Սիրունն ալ պատահանէր դուրս բեռուէ մը կ'կախէր վանդաւն որ թռչնիկները քիչ մը արեւը վայելեն:

Գեղձանիկները հազար, մկնականջ, կանեփհատ և կորեակ կ'ուտեն: Օր մը Սիրուն տեսաւ որ կորեակի հատեր վանդակէն վար թափեր էին, ուղեց զանոնք աւելլ, բայց մայրն ըսաւ անոր.

«Աղջիկս մի աւելի այդ կորեակները, թող մնան հողին վրայ, ետքէն աղ որ բան մը պիտի տեսնես . . . »:

Սիրունն հլու աղջիկ մ'էր, մօրն ըսածն ըրաւ և կորեակի հատիկները չաւելց:

Այն ատեն դարուն էր, այս եղանակին մէջ բոլոր տունկերը կ'սկսին բուսնիլ: Գրեթէ ութ օր ետք՝ Սիրուն դիտեց հատիկներուն մէկուն ընկած տեղը պղտիկ խոտի ծայր մը, այնչափ պղտիկ որ հողին հետ հաւասար էր: Սիրուն մատ չգպցուց բնաւ. կ'ուզէր տեսնել թէ Բնջ պիտի բուսնի այն տեղ: Հետեւեալ օրն խոտին ծայրը մեծցեր էր, հողէն քիչ մը վեր ելեր էր, և անոր ծայրը կ'տեսնուէր կորեակի մը հատին փեճեկը: Բայց փեճեկը բաց ու պարապ էր, անոր մէջինը հողին տակը մնացեր էր որ բուսնը բուսնի:

Միւս օրն Սիրուն նորէն եկաւ որ նայի, արդէն երկու պղտիկ տերեւներ սկսեր էին ձլլիլ:

«Ա՛հ, ըսաւ Սիրուն, այս տեղ կորեակի տունիկ մը պիտի բուսնի. ուրեմն պիտի տեսնեմ թէ Բնջպէս կ'շինուին այն աղ որ ողկոյններն որ այնքան ախորժելի են իմ թռչնիկներուս: Ա՛րքան գոհ եմ»:

Հատ կ'փափաքէր որ իր փոքրիկ սիրական տունիկն քովէն

չհեռանայ, այս տունին այնչափ տկար էր որ Սիրուն անոր վրայ կ'դողար, կ'վախնար որ չկորսուի. խեղճը չգիտէր որ Աստուած՝ ինչպէս ամենէն փոքրիկ բոյսերն, նոյնպէս այն կորեակն ալ պիտի խնամէր ու մեծցընէր:

Բայց պէտք էր զպրոց երթալ, և այս խելօք աղջիկը բնաւ չէր ուղեր իր պարտքը թերի թողուլ: Բայց երբ ամէն իրկուն տուն դառնար, Սիրուն կ'վազէր իր բոյսին վրայ կ'ծուէր որ մօտէն տեսնէ. և ամէն իրկուն կ'տեսնէր որ ցօղունը քիչ քիչ կը բարձրանար: Արդէն երկու պղտիկ տերեւներն երկնցեր էին, ասոնց վրայ ուրիշ տերեւներ ալ ելեր էին, և ուրիշ երկու հատ նոր տերեւներ կային որ սկսեր էին բուսնէր դուրս ձլլիլ: Բունն ալ կէս կանգուն բարձրացեր էր, և բարեսիրտ Սիրունն պէտք չունէր ծոխլ լաւ մը նայելու համար:

«Ա՛հ, իմ թռչնիկներս, կ'ըսէր նա իր դեղձանիկներուն, երբեցէք, երբեցէք: Հատիկ մը ցանեցիք որ ահա կ'բուսնի. եթէ ողկոյդ մը հասնի, ձեզն պիտի տամ որ փտէք»:

Բայց ողկոյդ չէր բուսնէր, կամ եթէ կ'բուսնէր՝ ներսի կողմէն էր, դեռ չէր տեսնուէր: Սիրունին համբերութիւնը քիչ քիչ կը հասնէր:

«Ապասէ, դատրիկս, կ'ըսէր անոր մայրը, սպասէ, ամէն բանի համար ժամանակ պէտք է. Բնջ որ շուտով կ'ընէ մարդ, միշտ քեզ կ'ընէ»:

Եւ որովհետեւ փոքրիկ աղջիկը հլու էր, կ'համբերէր:

Վերջապէս օր մը երկու ուրիշ տերեւներ բացուեցան և անուշիկ Սիրունն այս երկու տերեւներուն մէջ տեսաւ . . . Բնջ բան . . . ողկոյդ մը, այնչափ ժամանակ իր սպասած ողկոյդն էր այն: Թէ որ իրեն մնար պիտի բրցընէր որ իր գեղին սարկիկներուն տայ, բայց եկու նայէ որ ողկոյդը շատ դաւար էր: Սիրունը մտածեց որ դեռ հասած չէր, ուստի չկտրեց, հապա թողուց որ հասնի ու գեղնի:



Քիչ քիչ տերեւներն աւելի բացուեցան, ողկոյղը բոլորովին դուրս ելաւ, մեծցաւ և բունին մէկ քառորդին չափ երկընցաւ: Այս ողկուզին վրայ շատ մը մանր մուշր գնդիկներ կային: Սիրուն կարծեր թէ ասոնք պտուղներ էին, բայց առտու մը բոլոր այս փոքրիկ գնդիկները բացուած լինելով՝ Սիրուն տեսաւ որ անոնց մէջէն պղտիկ ծաղիկ մը կ'բուսնի: Գնդիկները պտուղ չէին, հապա կոկոններ էին միայն: Այս կոկոնները բացուելով՝ ողկոյղը բոլորովին ծլեր ծաղիկեր էր: Սիրուն կ'զարմանար և շատ կ'տրտմէր որ դեռ այն ողկուզին փափաքելի հատիկները չէին հասած: Այնպէս կարծեց որ սխալներ էր և կորեկ չէր այն, ուստի սկսաւ լալ: Բայց մայրիկը զինք մօրթարեց, ըսաւ որ իրօք կորեկի ցօղուն մ'էր այն: Ըսաւ որ այսպէս զրեթէ բոլոր տունկերն առաջ ծաղիկներ կ'բերեն և ապա այս ծաղիկներուն տեղ պտուղներ կը հասնին: Մայրիկը վարձեալ հասկըցուց որ հատիկները պիտի հասնին, բայց պէտք է քիչ մը համբերել, ըսաւ: Սիրուն շատ երկար կ'զանէր, անոր համար քիչ մը սրդողեցաւ, և ըսաւ որ պիտի երթայ շուտ մը ողկոյղը կտրէ: — «Շատ աղէկ, զնա կտրէ, ըսաւ անոր բարի մայրիկը, միշտակ զիտցի՛ր որ ձեռքդ բան մը չպիտի հասնի, թռչնիկներդ կորեկ պիտի չունենան»: Սիրուն զգաց մէկէն որ յանցաւոր էր այսպէս խօսելուն, աղաչեց իր մայրիկն որ իրեն ներէ, խօսք մտիկ ըրաւ և ողկոյղը չկտրեց:

Եւ շատ աղէկ ըրաւ, ինչու որ քանի մը օրէն ետքը՝ պղտիկ ծաղիկները թափեցան, ասոնց տեղ ցորենի պէս հատիկներ երեցան, առաջ փոքրիկ, կաւուղ ու կանաչ էին. քիչ քիչ խոշոր եղան: Այն ատեն եղանակն ամառ էր, ամառը դաւումէն ետքը կ'զայ: Արեւ շատ տաք էր, հատիկներն այս տաքութենէ հասունցան, զեղին, կարծր դարձան. վերջը ողկոյղն այնքան աղ որ էր, այնքան ծանր էր որ իր բունը կ'ծուէր: Վերջապէս մայրիկն ըսաւ Սիրունին, — «Սիրելի

աղջիկս, հիմակ կտրէ նայիմ ողկոյղը. թողուցիր որ հասունայ, ահա նայէ հասուն է»:

Սիրունը շատ գոհ ու զուարթ էր որ կորեկի հատիկները հասեր էին: Շնորհակալ եղաւ իր մօրը տուած օգտակար խրատներուն համար, ետքը՝ ուրախութեամբ զնաց կորեկի ողկոյղն կտրեց և իր սիրական թռչնիկներուն տարաւ որ ուտեն:







Ը

## ՊԱՐՏԻՔԻՆԵ ԱՅԾԻԿԸ

Ատենօք պղտիկ աղջիկ մը կար որ իր հայրիկին հետ քաղ-  
քին մեծ պարտէզը կ'երթար ժուռ գալու համար։ Այս պղտիկ  
աղջիկին անունն Աննիկ էր։ Աննիկ ուրախութենէ կ'թուէր  
երբոր այսպէս ժուռ գալու կ'ենէր իր հօրը հետ, ինչու  
որ այն պարտիզին մէջ գառապիղ մը կար, ուր տեսակ տե-  
սակ կենդանիներ կ'դառնային, առիւծներ, անաւութներ,  
փիղեր, թռչուններ, շատ ու շատ սիրուն այծիկներ և ու-  
րիկներ։

Աննիկը մէկ զբոշ ունէր. պարտիզին դուռը կին մը կար  
որ խաղալիկ ու անուշեղէն կ'ծախէր։ Աննիկ ուղեց որ իր  
ստակովը բան մը ծախու առնէ։

Բայց ինչ պիտի առնէր. մէկ զբոշով շատ բան չ'առ-  
նուիր։ Իր հայրիկը թողուց որ Աննիկ ուզածը դնէ։ Աննիկ  
մտքովն ըստ. — Թէ որ շաքար առնեմ և ոտեմ, ձեռքս

բան մը չպիտի մնայ։ Թէ որ սրինգ մը առնեմ, կրնայ ծայ-  
րի թաղանթը կոտրիլ, ասկից զատ ասորժելի ձայն մը չու-  
նի այս նուապարանը։ Թէ որ օդապարիկ մը առնեմ, կրնայ  
պայթիլ. . . եկու շարժուն պէպէկ մը առնեմ, հասկա թէ  
որ թեւերն ու ոտքերը կոտրին. . . հա՛, հա՛, միտքս աղէկ  
բան մ'եկաւ. այս տեղ հաճարէ հացիկներ կան, կենդանի-  
ները հացը կ'սիրեն»։

Աննիկն ալ չ'անանար. հացիկ մը կ'դնէ որ փակուած կեն-  
դանիներուն տայ ու զուարճանայ։ Տեսէք այս փոքրիկ սիրուն  
աղջիկն ինչ բարի սիրտ ունէր։

Առաջ Աննիկն ու իր հայրիկը փղին մօտ կ'երթան և հա-  
ցէն կտոր մը անոր կ'տան։ Այս խոշոր կենդանին երկար  
պատիճ մը ունի. անոր ծայրովն հացին կտորը ճարպիկու-  
թեամբ առաւ ու բերանը տարաւ, այն մեծ բերանն որ տանն  
երկու հատ մէկէն կրնար կլլել։ Ետքը անաւութին քովը  
կ'երթան, և որովհետեւ այս կենդանին չէր կրնար իր վեղը  
վանդակին մէջէն դուրս հանել, հացիկը հովանոցի մը ծայ-  
րը գրին և անոր տուին. անաւութն առաւ հացիկն իր եր-  
կու սիրուն շրթունքովը։

Ասկից ուղտին գացին, յետոյ յամփրին, ջայլեամին և ա-  
տնց ամէն մէկն իր բաժինն առաւ։

Բայց արի տես որ հաճարէ հացը խոշոր չէր, և պա-  
տաւ մը միայն մնացեր էր երբոր Աննիկ սպիտակ այծերու  
աղոր խումբի մը առջև եկաւ կեցաւ։

Այս փոքրիկ կենդանիները ծառաստանի մը մէջ հաւա-  
քուեր էին. բարակ խոտ մը կ'ծածկէր այս ծառաստանը,  
որու չորս դին վայելուչ սրտանէշ մը քաշուեր էր ցանցա-  
կերպ։ Այս ծառաստանին մէջ տեղն փայտէ տնակ մը կար,  
որու տանիքը խողանէ շինուած էր. իսկ ներսի կողմը մետր  
մը կար որ լեցուն էր ակորժելի և հաճաւէտ խոտով։ Շատ  
մաքուր և կոկիկ էր այծերուն այս փոքրիկ ընտանիքը։



Տնակին դրան առջևը հայրը պառկեր էր, գլուխը վեր բռներ և աչքերը կէս մը դոցեր էր, այնպէս կ'երեւէր որ այս ամերուն հայրը մէկ կ'հսկէր, մէկ կ'քնանար:

Այն տեղ կար ուրիշ մ'ալ, եղջիւրները նոր կ'բուսնէին, ասդիս անդին, իր հօրը բոլորակէր կ'ցատկւտէր. նոյն միջոցին իւր եղբայրը մօրը ծիծը կ'ուռէր թաթիկները զարնելով. իսկ մայրը կարծես թէ անհոգ էր, իր երկու ոտքն պաննէ շին վրայ դրեր էր, կ'մայէր որ անցնող դարձողն իրեն դպուէ կամ ուտելիք մը տայ:

Այս տեսնելուն՝ Աննիկ պուռաց. — «Այ, սիրուն այծ, այս հացի կտորը քեզի պիտի տամ, առ նայիմ. . . առ, մի վախնար. . . բայց ինչո՞ւ չես առներ. . . »:

Առաջ այծն իր ցուկն երկնցուց, հացը հոտուտաց, աւոր վրայ փչեց և յանկարծ ետ ետ դնաց գլուխն օրելով, ըսել կ'ուզէր. — «Զէ, չէ, չեմ ուտեր»:

Աննիկ կ'զարմանար կ'մնար ու կ'ըսէր. — «Այ, հացս չուղեր. արդեօք այծերը հաց չեն ուտեր»:

Բայց անկից ուրիշ տղայ, ետքը պարոն մ'ալ անցաւ, ետքը արիկին մը, ասոնք ալ այծին հացի կտորներ տուին, այծը չմեծեց, անոնց տուածը ուրախ զուարթ կ'երաւ: Աննիկ երկրորդ անգամ իր հացն երկնցուց, այծը նորէն վրան փչեց և գլուխն օրելով, «Զէ, չէ» ըսաւ:

Այն ատեն փոքրիկ աղջիկն երեսը կախեց. չէր կրնար հասկընալ որ այծն ինչո՞ւ համար ուրիշին հացը կ'ուտէր և իրենը կ'մեծէր. քիչ մնաց պիտի բարկանար այս պղտիկ անբանին դէմ. . . Բայց ինքզինք բռնեց, հացը ծախող կնկան գնաց և արտունջ ըրաւ ըսելով թէ իր հացը լաւ չէր, այծը չէր ուզեր ուտել:

Հացավաճառ կինը պատասխանեց. «Ի՞նչ կ'ըսես, աղջիկ, իմ հացս լաւ չէ՞ կ'ըսես. մինակ այծի՞ն տուիր, ուրիշ կենս դանիի չտուիր»:

— Հապա տուի, պատասխանեց Աննիկ, փղին, անալուծին, թռչուններուն տուի, ամենուն տուի:

— Ամենքն ալ չկերան:

— Հա՛, ամենքն ալ կերան:

— Ուրեմն կ'նայիս որ հացս չէ պատճառն որ. . . բայց քան մը պիտի հարցընեմ քեզի, աղջիկս, մի սրդողիր. . . երբեմն մարդ մուսցիկոտ կ'լինի: Ըսէ ինձի, մաքուր են արդեօք ձեռքերդ»:

Աննիկ ձեռքերը նայեցաւ և տեսնելով որ մաքուր չեն, շատ ամչցաւ: Խեղճ աղջկան երեսները կարմրցան, ինչու որ իր ձեռքը միշտ լուալու սովորութիւն ունէր. մինակ այն օրն, հացավաճառին ըսածին պէս՝ մոռցեր էր:

Աննիկ հարցուց անոր. «Ինչո՞ւ համար ուրեմն այծը միայն հացս մեծեց, երբոր բոլոր միւս կենդանիները տուածս կ'երան»:

Կինը պատասխան տուաւ. — Պատճառն ըսեմ քեզի, աղջիկս. այծերն այնքան շատակեր չեն, միւս կենդանիներէն աւելի փափկասուն են: Աւելի աղէկ ունին զրկուիլ ուտելիքէ մը քան թէ չախորժածնին ուտել: Նայէ, աղջիկս, այս տեղ ջուր կայ, ձեռքդ լուս, ետքը դնա՛ այծերուն տուր հացդ, և պիտի տեսնես թէ ինչպէս պիտի ուտեն»:


Աննիկ ձեռքը լուաց, ապա ճերմակ այծին մօտ գնաց. իր հացին կտորն անոր ցցուց և այս անգամ այծին ամենայն խորթանօք կ'երաւ:

«Շնորհակալ եմ, սիրուն այծիկ, ըսաւ այն ատեն անուշիկ աղջիկը, շնորհակալ եմ որ ինձի դաս մը տուիր: Այդ դասդ ականջին օղ պիտի լինի, ըսաւ պիտի չ'մոռնամ»:

Դուք ալ մի մոռնաք այս գասը, իմ սիրուն զաւակներս, շատ անտարբեր մարդիկ կան որ ձեր յանցանքին վրայ կըրնան աչք դոցել. ճշմարիտ բարեկամ մը միայն ձեզի խրատ կ'տայ. դուք ալ մի սրդողիք այդ բարեկամին դէմ, հապա



Հնորհակալ եղիք, ձեր պակասութիւնը շտկեցէք, ինչպէս որ Սննիկն իր յանցանքը ճանչցաւ և սպիտակ այծիկին Հնորհակալ եղաւ :



Թ

ԱՅՈՒ

Ատենաք տղեկ մը կար, որու անունն էր Յուսիկ :

Օրին մէկն այգեպանն եկաւ այս տղեկին քեռւոյն տունը այգին յօտելու համար : Յուսիկ այգորդին հետ այդին գնաց որ ինքն ալ աշխատի և յօտէ իր երեք հատ որթերը զոր քեռին իրեն տուած էր :

Այգեպանին ձեռքը զանակի նման՝ կլոր կոթով, ծուռ սայրով բան մը կար՝ կտրոցի պէս : Այս կտրոցը յատոցիկ մ'էր :

Այգեպանն այգեստանը ծուռ եկաւ . ամէն մէկ որթի առջեւ կ'կենար, կ'նայէր նորածիլ բողբոջները : Ապա իր յատոցիկովը կ'կտրէր ինչ որ պէտք էր կտրել :

Եւ որթերուն վրայ շատ քիչ ուռք կ'թողոր :

Յուսիկ հարցուց . — «Բարի այգեպան, ինչո՞ւ համար բոլոր այգ ոստերը կ'յատանես : Եթէ այգպէս ոստերը կտրես, խաղող պիտի չբերեն :

— Ինչո՞ւ չէ, իմ փոքրիկ Յուսիկս, պատասխանեց այգորդը . որչափ շատ ձիւղ կտրեմ, այնչափ շատ խաղող պիտի ստանանք, և շատ ալ գինի պիտի ունենանք հնձանին մէջ . մինակ որթը քան յօտելու՝ քերուր գինեալ պէտք է » :

Յուսիկ չհարցուց այգորդին թէ լաւ կտրելու կերպը որն



է, և իրօք որթերը խելքին փշածին պէս կտրեց կարծելով թէ ինքն աւելի լաւ կտրել զիտէ քան թէ այդեպանը :

Գարունը հասաւ . այդ ինքերը ծլան ծաղկեցան :

Ետքը ամառն եկաւ և խաղողները հասան :

Երբոր աշունը մտան՝ բոլոր տնեցիք այդ եկաւ թընելու դային :

Այդ ինքերը շատ փառաւոր էին . որթերը ծանր ողկոյզներու տակը կ'ընէին : Այնչափ խաղող բնաւ տեսած չունէր Յուսիկ :

Յուսիկ մտքովը կ'ըսէր . արդեօք իմ այդիս որչափ աւելի շատ , շատ խաղող տուած է :

Առաւի վաղեց շիտակ իր որթնետունները դանկու : Բայց , ափսոս , յոյր պարապ ելաւ . աչերը մեծ մեծ բացաւ . ապուշ մնաց . իր որթերը խառն 'ի խուռն ճիւղերով ծածկուեցին . շատ տերեւներ ունէին , հապա խաղող . . . խաղող չկար , կամ բոլոր որթերուն վրայ հաղիւ քանի մը հատ ճիւղեր կ'տեսնուէին :

Այն ատեն Յուսիկ քիթը կախեց , արտամ ախտը էր . դնաց այդեպանին քովը . աղէկ հասկըցեր էր որ որթերը լաւ չէր կտրած :

« Կիրակոս եղբայր , բտաւ Յուսիկ այդեպանին , կ'աղաչեմ ըսէ ինձ . ինչ ընել պէտք է որ այդիս առատ խաղող տայ :

— Իմ տղաս , պատասխանեց Կիրակոս , պէտք է յօռել « րէկ » :



Ժ

### ՀԱՆՆ ՈՒ ԻՐ ՋԱԳԻԿՆԵՐԸ

Ատենօք կարուակ մը կար որ իր երկու զաւակներովը ճերմակ անակի մը մէջ կ'ընակէր . այս տակը քաղքին ծայրն էր արաի մը մէջ :

Կարուակն օրն 'ի բուն կ'աշխատէր իր փոքրիկ կրպակին մէջ . հին կօշիկներ կ'կարկատէր , երբեմն ալ նոր մուճակներ կ'շինէր . . . :

Կարուակը հաւ մ'ունէր , այնպէս խնամք տարեր ու ընտանի ըրեր էր այդ հաւն որ շատ անդամ իր տիրոջը մօտ՝ պատահանին եղը կ'զար կ'թառէր և կարուակն իր ձեռքն երկնցընելով զայն կ'փայփայէր :

Բայց քանի մը օրէ 'ի վեր հաւը հաւնոցէն դուրս չէր ելներ . թախս նստեր էր տասն երկու հաւկթի վրայ : Վայրկեան մը չէր հեռանար , հաղիւ կերակուր ուտելու համար պահ մը դուրս կ'եւնէր իր բոյնէն՝ երբոր սաստիկ անօթնար , իր կարկամ թաթիկները կ'ձկտէր , իր թևերը կ'ընար կ'ցնցէր , ետքը շուտով կ'վազէր հաւկթներուն վրայ կ'կզկտէր որ տաքնան ու ծիկծիկներ գոլոս գան :



Կարուակին որդին Յակոբ կ'կոչուէր, արդէն մեծկակ տղայ մ'էր և իր հօրը հետ կ'աշխատէր :

Պզտիկ աղջկան անունը Մաքրուկ էր : Քիչ մը աղէտ էր իրաւ, այս խեղճ աղջիկը, ինչու որ գպրոց չէր երթար, թէև յանցանքն իրը չէր, որովհետև այն թաղին մէջ գպրոց չկար : Բայց Մաքրուկ ուշագիր աղջիկ մ'էր, քիչ կ'իտասէր, գիտող էր, կ'մտածէր և ասոր համար այնպիսի օգտակար բաներ կ'սորվէր որոց շատ տղաք անտարբեր են :

Առաջին անգամն էր որ Մաքրուկ իր հային թուխս նստելը կ'անեսէր : Ուստի շատ հետաքրքիր էր գիտնալու թէ ինչ պիտի լինին այն հաւկիթները : Հայրն ըսեր էր իրեն որ երեք շաբաթէն ետք՝ ամէն մէկ հաւկիթէն ծիծիկ մը պիտի դուրս գայ, թէ որ թխամայրն միշտ տաք պահէ ձուերը, ուստի Մաքրուկ անհամբեր կ'սպասէր :

Բայց Մաքրուկ հոգ մը, մամուռք մունէր, ինքնիրեն կ'ըսէր.

«Երբոր ատենը դայ, ո՞վ պիտի բանայ հաւկիթներն որ ծիծիկները դուրս ելնեն. հայր պիտի չկրնայ բանալ, և ձագիկները պիտի խղրտին : Բայց եթէ կեղեկն դուրս ալ ելնեն, ինչ պիտի լինին : Անոնց ո՞վ կերակուր պիտի տայ : Իրենց մայրը պիտի չկրնայ կերակրել, ինչու որ ձեռք չունի : Եւ ինչպէս պիտի վարժեցնեն իր ձագիկները բան ուտելու, քանի որ խօսիլ չգիտէ : Աստուած ոչ ձեռք տուեր է կենդանիներուն ոչ լեզու : Հիմակ որ հաւն այսչափ համբերութեամբ թուխս նստեր է, ետքէն պիտի չկրնայ ոչ ձագիկները հանել, ոչ կերակրել և ոչ մեծցընել : Խեղճ կենդանիներ, ո՞րչափ կ'յախմ վրանին» :

Եւ Մաքրուկ՝ Աստուծոյ բարութիւնը չգիտնալով՝ արտում ախուր կ'սպասէր որ երեք շաբաթն անցնի :

Վերջապէս երեք շաբաթն անցաւ : Առաւօտ մը՝ Մաքրուկ զիտեց որ հաւն քիչ մը անդէն ելաւ, և կառուցովն հաւկիթ-

ները կամացուկ մը դարձուց : Հաւկիթ մը ճեղքուեալ էր, վրան պղտիկ ծակ մը բացուեր էր : Հաւն՝ միշտ իր կտուցովն՝ այդ ծակն սկսաւ մեծցընել, շատ մեծ գգուշութեամբ : Քիչ քիչ հաւկիթը բացուեցաւ, ճիչ մը լսուեցաւ, հայր սիրով պատասխանեց այս ձայնին : Վերջապէս փեճկեն երկու կտոր եղաւ և մէջէն ողջ ձագիկ մ'ելաւ, որ արդէն ճիւ ճիւ ձայն կ'հանէր և իր տոտիկներուն վրայ կենալու կը ջանար : Մայրը շատ գոհ կ'երևէր որ իրեն մէկ ձագիկը ծներ էր, բայց գեռ շատ գործ ունէր ընելու : Գեռ տասն մէկ հատ հաւկիթ կար. պէտք էր հոգ տանիլ որ անոնք ալ բացուին : Ուստի առաջին ձագիկին իր թեկն տակը պահեց և նորէն գործի սկսաւ : Հաւկիթները կ'դարձնէր և ամէն անգամուն որ վառեկիկ մը ներսէն փեճկը ծակէր, թխամայրը կ'օգնէր անոր որ դուրս ելնէ և իր թեկերուն ներքե կ'պահպանէր :

Մաքրուկ հային ըրածը կ'գիտէր և զարմանալով կ'ըսէր ինքնիրեն. ո՞վ սորվեցուց ձագիկին իր պատանքը ծակելու և իր մայրն ինչպէս սորվէր էր համբերութեամբ ու ձարպիկութեամբ նոյն պատանքը բանալու :

Վերջապէս տասն երկու ծիծիկներ մէկիկ մէկիկ իրենց հաւկիթէն դուրս ելան. մայրերնին քանի մը ժամ իր թեկերուն տակը տաքցուց որպէս զի իրար ճանջան և քոյց օդին ապրելու վարժին. վերջը՝ կէս օրէն ետք՝ հայր ոտք ելաւ : սկսաւ կամաց կամաց դրդալ, իր փոքրիկ ձագերն այս ձայնը լսելով բոյնէն դուրս եկան :

Բարեմիտ կարուակը քիչ մը կորեակ նետեց անոնց առջև : Մաքրուկ տեսաւ որ թխամայրը կ'մոէր կորեկի հատիկները կառուցը կ'առնէր և իր ձագիկներուն տալով՝ կ'ըրգար : այնպէս որ ըսիւ կ'աղէր. «Կերեք» : Եւ ծիծիկներն սկսան ուտել, կարծես թէ իրենց մօրն ըսածը կ'հասկնային :

Փոքրիկ աղջիկը քանի կ'նայէր զարմանքով կ'աւելնար, Էր-



դէն ութ օր կար որ վառեակները ծներ ու վրայ եկեր էին : Իրենց մօրը քովէն չէին հեռանար և մայրն ալ շարունակ անոնց հողը կ'տանէր ինքզինքը զրկելով :

Օր մը կոշկակարն իր աղջկան ըսաւ . « Մաքրուկ , այսօր օգն աղոր է , առ գործդ և վառեակները տար դաշտերը պտըտցնուր » :

Մաքրուկ ճամբայ ելաւ հաւր կանչելով : Հաւն անոր ետեւէն գնաց իր ձաղիկները կանչելով և քիչ ատենէն դաշտը հասան : Թխմայրն սկսաւ հողը փորել իր թաթերովն որպէս զի հոնտեր կամ որդեր փնտռէ :

Երբոր թխմայրը բան մը ցանէր , ուտելու տեղ՝ իր ձաղիկները կ'կանչէր , ձաղիկներն ալ կ'վազէին կ'ուտէին և իրենց մօր պէս հողը կ'փորէին :

Մաքրուկին աչքն անոնց վրայ էր . և ինքնիրեն կ'հարցընէր . արդեօք բարերար Աստուած այս կենդանիներուն լեզու մը տուած չէ՞ որ իրար հասկընան :

Նոյն միջոցին քանի մը կաթիլ անձրև վազեց : Հաւն իր ձաղիկները կանչեց . ձաղիկները վազեցին եկան : Մայրն ծառի մը տակը տարաւ , վերջը թեւերը տարածեց և շուտ մը ձաղիկներն անոնց ներքև դացին պատսպարուեցան : Երբոր անձրևը դադարեցաւ , մայրն ոտք ելաւ . և վառեակներն՝ որ բնաւ թրջած չէին , սկսան դաշտին մէջ պտըտիլ իրենց մօրը հետ :

Եւ Մաքրուկ անդադար կ'նայէր այս սիրուն վառեակներուն :

Երբոր վառեակներն առդիս անդին կ'վազվզէին , հողը կը փորէին , արձակ համարձակ խաղեր կ'խաղային՝ յանկարծ հաւը ճիկ մը հանեց որ իր սովորական ձայնէն տարբեր էր : Այս ձայնը լսելով բոլոր վառեակներն իրարմէ կ'բաժնուին , չորս կողմը կ'ցրուին , իրենց մօրը քովէն կ'հեռանան , և այս աղօսի մը մէջ , այն հողակոյտի մը տակ , մէկ քանին տե-

րեններու և խոտերու տակ անշարժ կ'կենան , ձայն ձիւն չեն հաներ բնաւ ու կ'սպասեն :

Մաքրուկ բան մը չէր հասկընար այս անցած դարձածէն : Ինչո՞ւ համար վառեակներն իրենց մօրը քովէն հեռացան , քանի որ միշտ միասին , անոր բոլորտիքը կ'ըջէին . ի՞նչ կը նշանակէր այս փախուստը :

Հաւը վեր կ'նայէր . Մաքրուկ զլուխը վերուց և խոշոր թռչուն մը տեսաւ որ կ'թռէր , կ'հեռանար , նորէն կ'մօտենար , բան մը փնտռելու պէս օդին մէջ կ'դառնար : Մաքրուկ դիտեց որ այն գորշ թռչունն ուրիշ մ'է : Ուրուրներն զիշակեր թռչուններ են որ թռչնիկներ ուտելով կ'պարին : Երբոր չեն կրնար հաւ մը բռնել , վառեակներ կ'կողոպտեն ու կ'ուտեն : Այն ատեն Մաքրուկ հասկըցաւ որ եթէ հաւն իր քովը պահէր ձաղիկները , պիտի չկրնար բոլորն ալ պաշտպանել , ուրուրը մէկ քանին պիտի սպաննէր . ասոր համար ասդին անդին ցրուեց . ուրուրը չէր տեսներ վառեակներն և չգիտեր թէ ո՞ր են :

Այն ատեն հաւը թեթեւ ճիչ մը կ'հանէր և իր ձաղիկներուն ըսել կ'ուզէր . « Դուրս մի՛ ելնէք , դեռ թխմային չգնաց » : Եւ ձաղիկները կ'հասկընային , ինչու որ իրենց տեղէն չէին շարժեր :

Վերջապէս խոշոր թռչունը միայն հաւը տեսնելուն՝ ձգեց գնաց . և երբոր մայրն անոր երթալը տեսաւ , իր ձաղիկները կանչեց . . . ասոնք ալ շուտ մը վազեցին և իրենց մօրը քով բոլորը մէկ թափեցան . վտանգն անցեր էր :

Այս բաները տեսնելով՝ Մաքրուկ բոլորովին հաւատաց որ հաւն ու իր վառեակներն իրարու խօսք կ'հասկընային . բայց անոնց ի՞նչ սորվեցուցեր էր , ո՞վ . . . : Մաքրուկին խելքը չէր հասներ այս բանին . ափսոս , խեղճ աղջիկը դպրոց չերթալուն համար տղէտ էր . . . :

Մաքրուկ միտքը դրաւ իր հօրը հարց ու փորձ բնել : Հաւն



ու վառեակները տունը բերաւ : բոլոր տեսածները հօրը պատմեց, և հարցուց անոր թէ ի՞նչ կերպով այս կենդանիներն իրար կ'հասկընային, քանի որ լեզու չունէին :

«Զաւակս, Աստուած որ մեզի խօսելու կարողութիւն տուաւ, ամէն մէկ տեսակ կենդանիներու ալ կերպ մը լեզու տուաւ, որով իրարու կ'իմացնեն իրենց պիտոյքը, իրենց ցաւերը, իրենց փափաքները : Օրինակի համար, երբոր շուն մը ծեծեալ կ'սկսի պոռալ, այն ատեն կ'հասկընանք որ կ'ուզէ ըսել. ցաւ կ'զգամ : Երբոր բոյնի մը մէջ թռչնիկներ կան, և երբ մայրերնին անոնց սնունդ կ'ընեն, այնպէս թեթեւ, անուշ ու սրտաշարժ ձայնով կ'խօսի որ շուտ մը կ'գուշակենք որ զգուշելով կ'ըսէ անոնց որ բերած կերակուրն ուտեն :

«Աղջիկս, բարի Աստուած հեռատես, արդար, վեհանձն է. այն դիտէ թէ իր ստեղծած ամէն մէկ արարածն ի՞նչ բանի պէտք ունի և ամէն մէկուն օգտակար կամ պիտանի եղած բանը կ'ձարէ» :



ԺԱ

ԱՐՄԻ

Ատենօք պղտիկ աղջիկ մը կար որ մօրը հետ պարզ անակի մը մէջ կ'ընակէր :

Մայրն այրի էր, աղջիկն որը, և երկուքնին ալ շատ աղքատ էին :

Մայրն՝ օրուան հացը ծարելու համար՝ առտուընէ մինչև իրիկուն շարունակ կ'աշխատէր. և պղտիկ աղջիկն ալ՝ իր մօրը քով նստած՝ իր մանր մասերովը բոլոր ճիւղ կ'ընափէր որ կար կարէ և անոր օյնէ :

Բայց ի՞նչ օգուտ, մայր ու աղջիկ այսչափ յոգնեւէն ետե՛ս՝ չէին կրնար բաւական շահիլ իրենց բոլոր պէտք եղածը հոգալու համար, և շատ անգամ խեղճ մայրն իր ակույէն կ'կտրէր զաւակին կտար :

Մայր ու աղջիկ բոլոր հոգով իրար կ'սիրէին և իրարմէ չէին զատուեր : Աղջիկը միշտ աղէկ կ'վարուէր որ մօրը սիրտը չցաւցնէ, և մայրն իր ձեռքն եկածը կ'ընէր որ զաւակը կրթէ ու զուարճացնէ :

Մայր ու աղջիկ շատ կ'սիրէին ծաղիկները, բայց պարտեզ չունէին, ասոր համար փայտէ փոքրիկ սնտուկի մը մէջ շեփորուկի հունտեր ցանք էին և այս սնտուկը պատուհանին մէջն էր և արև կ'տեսնէր :

Երբոր շեփորուկներն սկսան բուսնիլ, մայր ու աղջիկ շատ ուրախ եղան : Անոնց վրայ հոյ տարին, ջուր տուին և



Ճճիները վճռակցին որ փոքրիկ բոյսերուն Քուս չհասնի :

Ետքը մանր փայտեր առին ու սնտու կին մէջ տնկեցին . այս փայտերը դերձանով փաթթեցին և ծայրերն պատուհանին վերի կողմը կապեցին , այնպէս որ շեփորուկները մեծնալով՝ այս դերձաններուն վրայ մաղլջի ելան և քիչ ատենէն իրենց սիրուն տերեւներն՝ դալարի շամփրակի ձևով՝ պզտիկ պատուհանին բոլորտիքը ծածկեցին :

Բայց հերքք չէ մեծնալ , պէտք է ծաղիկը , և շեփորուկներն իրենց սրտածե սիրուն տերեւներուն մէջէն առթիւ կոկոններ հասնեցին :

Առաջ այս կոկոններն կանաչ մոլորակ կաղնիներու կ'նմանէին : Բայց քիչ քիչ արեւուն ճառագայթներն անոնց վրայ զարնելով մեծցան , և առտու մը պատուհանը բանալով՝ մայրու աղջիկ տեսան որ իրենց տունը ծաղիկներով ծածկուեալ էր :

Աքանջելի՝ ծաղիկներ էին ասոնք , զանազակի ձև ունէին , կերպ կերպ գոյներով էին . սպիտակ , վարդապոյն , բաց ու մութ կապոյտ : Եւ այս ծաղիկներուն թերթիկներն այնքան բարակ , թաւշնի էին , իրենց գոյներն այնքան անուշ ու փայլուն էին որ այս տեսնելով երկու պարտիզպանուհիներն՝ ուրախութենէ թռելով՝ իրարու դիմին ընկան և պագրուեցան : Ինչ աղոր բան է ուրախութիւնը , մանաւանդ երբոր ուրիշներն ալ այս ուրախութիւնը մեզի հետ կ'զգան :

Մայր ու աղջիկ շարունակ , ա՛ , ինչ աղոր է , ինչ սիրուն է կ'ըսէին և ծաղիկներն իրարու ցոյց տալով . «Մէկը կ'ըսէր նայէ՛ սա կարմիր ծաղիկը , միւսը կ'ըսէր , նայէ՛ սա կապոյտ սիրուն ծաղիկը . . . » :

Արեւն բոլոր այս ծաղիկները բացուեցան : Օրն այսպէս խնդութեամբ անցուցին մայր ու աղջիկ և ատեն ատեն կարը թողով՝ այս անուշ բոյսին վրայ զնայելով կ'խօսակցէին :

Բայց այս երջանիկ օրն ալ ուրիշ օրերու պէս պիտի անցնէր : Մութը կոխեց և փոքրիկ աղջիկը դիտեց որ մէկիկ մէ-

կիկ կ'ողորէին այն ծաղիկներն որ առաւօտէն 'ի վեր բացուեալ էին :

Օրիորդն ապշելով երկինքը նայեցաւ , արեւ փնտռեց , բայց արեւ չկար , արեւ մարը մտեր էր :

«Ա՛խ , մայր իմ , պոռայ աղջիկը , ա՛լ արեւ չկայ , և տես անգամ մը մեր ծաղիկները կ'ըստին , մեղք եղաւ մեր ծաղիկներուն : Արեւ մարեցաւ և մեր ծաղիկները մեռան :

Մայրն անոր ըսաւ . — Զառակ , հոգ մի՛ ըներ : Արեւ մարած չէ և մեր ծաղիկները չմեռան : Այս ժամուս արեւն ուրիշ ծաղիկներ բանալու գնաց ուրիշ երկիրներու մէջ , և մերինները կ'ընան ասինքն : Եւ որովհետեւ արեւ դառնայ : Վաղն առտու արեւը պիտի երևի , և վաղն առտու պիտի տեսնենք որ նոր նոր ծաղիկներ պիտի բացուին » :

Իրօք հետեւեալ օրն արեւն ելաւ . նոր ծաղիկներ բացուեցան որ առջի օրուան ծաղիկներէն աւելի շատ ու գեղեցիկ էին :

Այն ատեն աղջկան սիրտը հանդիպեալ , մայրը վանի իր ծունկերուն վրայ առաւ և գրկելով ըսաւ .

«Աղջիկս , պէտք է դիտես որ արեւն ողորմած Աստուծոյ տեսանելի պատկերն է : Ատեն ատեն կարծես թէ մեզմէ երես կ'զարձընէ . բայց միշտ կ'դառնայ և մեզ բնաւ երեսի վրայ չթողուր : Ինչպէս որ դիշերն անցնելէն ետե՛ , ցերեկը կ'զայ , այնպէս ալ Աստուած նեղութենէ ետք՝ մեզ վարձք պիտի շնորհէ :

«Առտի աշխատինք , իմ փոքրիկ աղջիկս , աշխատինք , համբերութեամբ մեր ցաւերը կրենք , և ինչպէս որ ծաղիկներն իրենց յոյսն արեւուն վրայ դրած են , մենք ալ մեր յոյսն Աստուծոյ վրայ դնենք » :







ԺԲ

## ԱԶՆԱԳՈՒՆ

Հովիկ անուն թեթե ու չարասէր տղայ մը կար, որ բնաւ տունը հանդարտ չէր նստեր և իր ընկերները կ'նեղէր ու կը չարչրէր: Մայրը միշտ խրատ կ'աւար անոր որ վարըր փոխէ ու ամենուն հետ սիրով վարուի: Բայց Հովիկ խօսք մտիկ չէր բռնէր, չարութիւնները կ'շարունակէր: Ասոր համար իր ծնողաց աչքէն ելեր էր ու ընկերներուն ատելի էր:


Օր մը Հովիկ մէկ քանի աղայ հետ աչիապուկ կ'խաղար պարտիզի մը մէջ: Նորէն սկսաւ կռուիլ և ասոր անոր հետ ըմբաւ: Երբոր իր աչքերը կապելու կարգն եկաւ, ընկերները շատ ուրախ եղան և մէջերէն խօսք ըրին որ չլուծուին: Հովիկ աչքերը կապած՝ ասդին անդին կ'վազէր որ մէկը բռնէ



և կ'բարկանար երբոր չէր յաջողեր: Վերջը դետնէն փայտ մը դտաւ առաւ ու պուաց, ով որ ձեռքիս հանդիպի պիտի ծեծեմ: Այս սպառնալիքը լսելով ընկերները լռիկ մնջեկ պարտիզին մէկ անկիւնը քաշուեցան և Հովիկը մինակ թողուցին: Այն ատեն Հովիկ իր բոլորակը ձայն ձիւն չլսելով՝ աչքին կապը քաշեց հանեց ու իր ընկերներուն վրայ վազեց ծեծելու համար: Նոյն միջոցին ոտքը քարի մը եկաւ ու գլուխը ծառի մը զարնելուն՝ ճակատը ծակուեցաւ: Հովիկ վայնասուն մը ձղեց երբ ճակատին վազած արիւնը տեսաւ: Շիտակ տունը գնաց որ իր մօրը գանգատի: Մայրը՝ զաւկին այս վիճակը տեսնելուն՝ սիրտը խաղաց ու շուտ մը պէտք ետ դած դարմանն ըրաւ. ապա անոր բտաւ:

«Չաւակս, քեզի քանի անգամ պատուիրած եմ որ հանապարտ խաղաս ու ընկերներդ սիրես: Անոնք յանցանք չունին, իրաւունք չունին գանգատելու: Թող այդ ճակատդ վերքը քեզի գաս լինի: Չարն իր պատիժը կ'գանէ»:





ԺԳ

## ԳՆՏՆԱԽՆՁՈՐ

Ո՛վ կ'սիրէ գետնախնձորն, ամէն մարդ կ'սիրէ. ինչու որ լաւ ու սնդարար կերակուր մ'է և հարուստ ու աղքատ կրճտան աժան գնով ստանալ և ուտել: Իմ տղայքս, զիտէք ինչպէս է գետնախնձոր բերող տունկը: Այն կանգունի չափ կ'մեծնայ այս տունկը. աստղաձև, մանիշակի կամ սպիտակ գոյն մ'ունի իր ծաղիկն որ վերջէն կանաչ պտուղ մը կ'դառնայ, գնդակի պէս խոշոր. այս կոկոսին մէջ կ'դառնի հունտը: Այս պտուղը չուտուի, և գետնախնձորն, որ Էլանի կ'ըսուի հողին մէջ՝ բոյսին ստորոտը, արմատին թերերուն մէջ կ'աճի: Հիմակ ասոր վրայ ձեզի վէտ մը պիտի պատմեմ: Ատենօք մարդ մը կար որ երեք հատ զաւակ ունէր:

Առջինեկին անունը Մարկոս էր, երկրորդինը Լեոն, և փոքրիկ աղջիկը Հեղինէ կ'ըսուէր:

Օր մը, այս մարդը դաշտ մը ծախու առաւ, ապա իր զաւակաց ըսաւ. «Այս հողը վար ու ցան պիտի ընեմ. ձեզի ալ մէյմէկ կտոր պիտի տամ որ անոր մէջ ուղածնիդ ցանեք»:

Մարկոս՝ որ կարմիր գոյնը կ'սիրէր, վայրի կակաչ ցանեց.

Լեոն՝ որ դեղին գոյնը կ'սիրէր, հրանունկ ցանեց. և Հեղինէ՝ որ ճերմակ գոյնը կ'սիրէր, ապրիմ մեռնիմ ծաղիկ ցանեց:

Բայց հայրիկն՝ որ իր փոքրիկ ընտանիքը հոգալու պէտք ունէր, իր արտին մէջ գետնախնձոր ցանեց:

Երբոր ամառն եկաւ, կակաչ, հրանունկ և ապրիմ մեռնիմ շուտ մը ծլան, այնպէս որ փոքրիկ տղայք այս փայլուն ծաղիկներուն վրայ կ'զմայլէին:

Գետնախնձորներն ալ ծաղկեցան. բայց ասոնց համետ ծաղիկները՝ որ մութ տերեւներու տակ կէս մը ծածկուէր էին, շատ անգոյն կ'երևէին արտին միւս ծաղիկներուն մօտ: Եւ փոքրիկ տղայք իրարու կ'ըսէին. «Մեր հայրիկն՝ որ այնքան խելացի մարդ մ'է, ինչու համար այս տխուր բոյսը սնկեց: Այս դաշտն ո՛րչափ աւելի աղոր պիտի երևէր եթէ բոլորն ալ կակաչ, հրանունկ և ապրիմ մեռնիմ ծաղիկներով լեցուն լինէր»:

Ամառն անցաւ, բոլոր ծաղիկները թառամեցան, ոչ միայն հայրիկին գետնախնձորներն այլ և աղոց սիրուն ծաղիկները: Ամէն թուամաճ ցօղունները գետինը ծոցեցան և երեք տղայք միայն մէյմէկ չոր խոտի արցակներ կը ցան քաղելու: Բայց հայրիկը բանուրներ բերաւ գաշտը: Այս բանուրներն երկաթի ակիշներով ակօսներ բացին, և հողէն հազարաւոր պատուական գետնախնձորներ հանեցին, որ դեղին, բարակ կեղև ունէին:

Այս գետնախնձորները մեծ տոպրակներու մէջ դրին և տոպրակները սայլակի մը վրայ տեղադրեցին: Այնչափ առատ էր գետնախնձորն որ փոքրիկ ընտանիքը բոլոր տարիք կրնար ուտել:

Իսկ տղայք՝ որ շատ կ'սիրէին գետնախնձորը՝ պզտիկ ընկան, իրենց հօրը իրաւունք տուին և խոստովանեցան որ յանցաւոր են իրենց հայրը մեղադրելուն համար:




«Հայրիկ, ըսին անոր, մեզի ներէ, ինչու որ ծուռ մտածեցինք: Կարծեր էինք որ մենք քեզմէ աւելի խելք ունինք, բու մշակած բոյսդ մերինէն զիշ դտեր էինք, այս խելճ բուներն արհամարհէր էինք և չէինք գիտեր որ անոնց ստորտը գետնախնձոր կ'բուսներ:

— Սիրելի զաւակներս, պատասխանեց Հայրը, սրտով կը ներեմ ձեզի, բայց պայման մը պիտի դնեմ. . . կ'ուզեմ որ այս պատահածը ձեր բոլոր կենացը մէջ յիշէք, և բնաւ մի և նոյն յանցանքը չընէք. կ'հասկընաք ըսածս»:

Տղայք պատասխան տուին. — Հայր, ասկից ետք այդպիսի բան մը չպիտի ընենք, ինչու որ հիմակ գետնախնձորն ինչ է գիտենք:

— Ամենքն ալ չէք գիտեր, իմ զաւակներս, ըսաւ Հայրը: Այս աշխարհը դաշտի մը կ'նմանի. այս դաշտին մէջ ամէն տեսակ բոյս խառն 'ի խառն կ'բուսնին: Կան մարդիկ որ կ'փայլին, ձեր տեղած փաշփլուն ծաղիկներուն պէս. կան ուրիշ անձեր ալ որ իմ օգտակար գետնախնձորներուս պէս՝ խոնարհ ու անյայտ կ'ապրին ու կ'մնանին:

«Եւ սովորաբար մարդիկ ալ ձեզի պէս կ'մտածեն ու կը դատեն: Անձ բանի տեղ կ'դնեն աչքի զարնող բաները, կ'արհամարհեն կամ չեն փնտռեր հեղ ու խոնարհները: Ա՛հ, դուք այսպէս մի ընէք, իմ սիրելի զաւակներս: Սիրեցէք զեղեցիկ բաները, ինչու որ աչքի զուարճութիւն կ'տան, բայց առաքինիներն ալ պատուեցէք, որ առանց ձայն հանելու բարեք կ'ընեն: Դուք բարին ու առաքինին փնտռեցէք, ինչու որ երբ հոնձքի ատենը դայ, և այս ատենը մեզի համար մեր կենաց վերջին ժամն է, Աստուած պիտի դայ և ինչ պիտի գտնէ քաղելու համար: Զոր խոտերու խորձ մը պիտի գտնէ փաշփլուն ծաղիկներուն տեղ. իսկ ակօսին մէջ խոնարհ գետնախնձորներ, բարի դործերու դանձ մը պիտի գտնէ»:



Ժ.Դ.

ԹԻԹԵՈՆԻԿ

Թիթեոնիկ մը կար որ ծաղիկներու վրայ կ'թռնէր: Տղեկ մը տեսաւ այս Թիթեոնիկն՝ որ շատ սիրուն էր, և բռնեցու համաց անոր ետէն վազեց: Բայց տղեկը քանի Թիթեոնիկին մօտնար, այս կ'փախչէր և օդին մէջ վեր վեր կ'ենէր:

«Սիրելի տղաս, ըսաւ մայրը, թող տուր որ Թռի այդ Թիթեոնիկը, մի վազեր ետէն, եթէ անոր դպչիս իր աղւորութիւնը պիտի կորսնցընէ և սիրուն տեսքէն պիտի զրկուիս»:

Տղեկը խօսք մտիկ ըրաւ. Թիթեոնիկին ետէն չվազեց. հապա դնաց պարտիղին մէջէն այծիտերեկի ոտ մը կարեց՝ որ նորաբոյս ծաղիկներով լեցուն էր, և կամացուկ մը Թիթեոնիկին մօտ գալով՝ անշարժ կեցաւ այս ոտը բռնած. . . : Քիչ մը ետք՝ Թիթեոնիկն անվախ եկաւ այծիտերեկի ճիւղին վրայ նստաւ, և տղեկը զմայրելով մօտէն գիտեց զայն:

Սիրուն զեղին Թիթեոնիկ մ'էր այս. ատամնաձև, Թառչի պէս էին Թեներն որոց վրայ մարգարտի նման կարմիր ու սև



բիծեր կային : Չորս հատ թե ունէր , և այս թեւերն այնչափ թեթեւ էին որ՝ թէ և շուտ շուտ կ'շարժէին , բայց շուտ մը չէին հաներ : Թիթեռնիկը թռելու ատեն՝ իր թաթիկները կը ծալէր , և երբ ճիւղի վրայ թառէր՝ կ'ցուցնէր :

Փոքրիկ աղան դիտեց որ երկու կողմէն երեքական թաթիկ ունէր : Վերջը տեսաւ որ թիթեռնիկը մետաքսի պէս բարակ պատիճ մը երկնցուց . այս պատիճն՝ որ բոլորաձև էր և իր բերանին տեղը կ'բռնէր , ծաղիկներուն մէջ կ'մղէր և իր կե-  
րակուրը կ'ծծէր առանց մնաս մը տալու :


Բայց թիթեռնիկներն անհանդարտ են . չեն կրնար նոյն տեղը մնալ երկար ատեն : Ուստի թիթեռնիկն այծիտերէր թողուց և ասդիս անդին թռաւ , օդին մէջ օձուտ շրջաններ րնելով և ծաղիկէ ծաղիկ անցնելով այնպէս թեթեւ որ տե-  
րեւ մ'անգամ չէր շարժեր իր ծանրութենէ :

Տղեկը չէր կշտանար այս զմայլելի թիթեռնիկը դիտելով : Աչքն անոր վրայ տնկած կ'նայէր : Վախցաւ որ թիթեռնիկը պիտի թռի երթայ . այնչափ մեծ փափաք ունէր զայն բռնե-  
լու որ իր մօրը խրատը մոռցաւ . . . : Ուստի երբոր թիթեռ-  
նիկը վարդի մը բաժակին վրայ հանդարտ կեցած կ'ծծէր ,  
փոքրիկ աղայն զայն բռնեց . . . ետքը ձեռքը բացաւ . . . ափ-  
սոս , ինչ եղեր էր այն շնորհալի միջատը . . . փոքրիկ աղուն  
մատերուն վրայ փափուկ ու փայլուն փոշի մը միայն կ'երևէր ,  
խեղճ թիթեռնիկը կէս մը ձգմուտէր էր և իր պատառուն թե-  
ւերը դողդողալով կ'շարժէր :

Տղեկն այս տեսնելով սիրտը թռնտ ելաւ . ետքն սկսաւ  
օսատիկ լալ և վազելով գնաց իր մօրը դիմին ընկաւ :

Մայրը չյանդիմանեց իր որդին երբոր տեսաւ անոր ցաւը ,  
արտառութեւն ու զղջումը , այլ մխիթարեց ու ըսաւ .

«Որդեակ իմ , նայէ որ ասիկեց ետք Աստուծոյ տուած հա-  
ճոյքով դո՛հ լինիս , և մի մոռնար որ մեր չունեցած բաները  
ստանալու փափաքելով ինչպէս դու կ'փափաքէիր , շատ ան-  
գամ մեր վայելած բաներն ալ վրայ կ'տանք» :



ԺԵ

ՇՐՆԾՈՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Աղջիկ մը կար որ օր մ'իր ընկերուհոյն կ'ըսէր .

— Ես դիւզացի փոքր աղջիկ մ'էի . իմ պարտէզս ոչ  
դուռ ունէր , ոչ վանդակ , ոչ ցանկ , ոչ պատ : Իմ պար-  
տէզս արտերն էին , մարդերն ու պուրակներն : Իմ ծաղիկ-  
ներս ինքնիրեն ազատ կ'բուսնէին , ուր որ հովը ցանէր : Վար-  
դեր ունէի և այծիտերներ թփերու մէջ , վայրի յակինթներ  
լօռերու մէջ : Հին պատերու վրայ շահաբրաններ ունէի , ա-  
ռուակին մօտ՝ հիւրիկներ , ուղիներու եզրն ունէի զարնան ծա-  
ղիկներ ու մանիշակներ :

«Ախ , որչափ թարմ ու անուշահոտ էին իմ պարտէզին  
ծաղիկները . ձեռքս չէր երթար որ բրբբեմ ու փունջեր շի-  
նեմ . հապա շատ անգամ կամայեակ մը կ'վերցընէի որ լա-  
մը տեսնեմ այն ծաղիկներն ու հոտորտամ» :

«Օրին մէկն — և այս բանս ինձի համար մեծ բան մ'էր  
— մայրս զիս առաւ ու քաղաքը տարաւ :



«Մեծ փողոցներէ կ'անցնէինք և փալիւրն խանութները կ'դիտէի: Յանկարծ աչքիս դարկաւ պատուհան մ'որ փառաւոր ծաղիկներով զարդարուած էր: Ամէն տեսակ զոյնով կար, կարմիր, կապոյտ, դեղին ծաղիկներ սրով խոշոր փունջեր կապեր և ոսկեզօծ յախճապակէ ամաններու մէջ դրեր էին:

«Այն ատեն հիանալով պոռպայի. «Վայ, մայրիկ, այս ինչ աղւոր ծաղիկներ են»: Եւ մօրս ձեռքը թողլով վազեցի պատուհանն որ մօտէն տեսնեմ:

«Ատոնք մեր ծաղիկներէն առելի խոշոր ու փայլուն են, կ'ըսէի նայելով: Ինչ վառվառն զոյններ ունին, արդեօք ինչ անուշ հոտ ունին:


«Եւ մօտենալով բացուած ծաղիկներէն մէկը հոտուրտացի, բայց արմանքս տարաւ երբոր անուշ հոտ մը չառի:

«Կ'երեւի թէ այս անհոտ ծաղիկ մ'է, ըսի մտքովս, միւսը նայիմ:

«Բայց ոչ այս, ոչ միւսն և ոչ մէկն հոտ չունէին: Ապա շա՛տ և շատ պզտիկ մնայի:

«Այն ատեն մայրս ինձի ըսաւ. — Աղջիկս, այս ծաղիկներն՝ որ այնքան քաղւոր կ'երեւին քեզի՝ մեր արտերուն ծաղիկներուն չեն նմանիր: Իրաւ է որ ատոնք շատ ատեն պիտի պահեն իրենց թարմ զոյնն քան թէ մերիներն որ այսօր կը բացուին և արդէն միւս օրը կ'իծմրին. բայց ատոնք կենդանութիւն չունին, շինծու քաղցրէր են: Արուեստադէտը՝ թէ և շատ փափուկ կերպով բնական ծաղիկներուն զոյնը տուեր է ատոնց, բայց չէր կրնար տալ նաև կեանք և անուշ հոտ:

«Ինչ որ բնական չէ անուշ հոտ չունի»:



ԺԶ

## ԾԵՐ ԱՐԵՆԱՍԻՆ ԽՈՒՐՁԸ

Փոքրիկ աղջիկ մը կար. Վարդուհի էր անունը. օր մը իրենց զիւղին մօտակայ անտառը կ'սլաքէր իր պղտիկ կառքը քաշելով:

Ճամբուն վրայ ծաղիկներ քաղելով կառքը լեցուցեր էր և այս ծաղիկայ անկողնին վրայ իր պէպէկը դրեր էր:

Վարդուհի Աիրակոսին հանդիպեցաւ, ծեղճ ծերուկ մ'էր այն օր փայտէ խորձ մը շալկած տունը կ'տանէր:

Աիրակոս յոգնած էր, վասն զի ծեր էր, բեռը շատ ծանր էր. հազիւ կրնար քաշել:


«Բարի Աիրակոս, ըսաւ անոր Վարդուհին, շատ յոգնած կ'երեւիս, բեռդ ծանր է. իմ կառքիս մէջ զիր, ես տունդ պիտի տանիմ»:

Աիրակոս աղջկան խնդիրը կատարեց. իր բեռն իջեցուց և փոքրիկ կառքին վրայ դրաւ:

Այն ատեն Վարդուհի քաշեց կառքն և մինչև ծերուկին տան դրան առջևը տարաւ:

Երբոր հասան, խեղճ Աիրակոս օրտով շնորհակալ եղաւ աղջկան իր բարեսրտութեանը համար: Խաբըր գնաց պարտէզն և վարդեր ու կակաչներ ժողվելով խոշոր փունջ մը շինեց և փոքրիկ աղջկան կառքը դրաւ: Վարդուհի շատ դո՛հ էր, և ուրախ զուարթ տուն դարձաւ ու գեղեցիկ փունջն իր մօրն ընծայեց:





ԺԷ

## ԹԻԹՈՒՐՆԵՐ

Ասեմք փոքրիկ աղջիկ մը կալ սրու անունն էր Լուսիկ : Հինգ շաբթի օրերը Լուսիկ իր հանիին տունը կ'երթար անցընելու, և այն տեղ աղւոր մեծ պարտէզ մը գտնելուն՝ փոքրիկ աղջիկը կ'վազէր, կ'ցատկէր, և աղւոր պարտիզին անուշահոտ օդը լեաքերան կը ծծէր :

Լուսիկ բան մը չէր աւեր, ծաղիկ մը չէր դպչեր : Օք մը պղտիկ գեղձիկ մը վրայ հասած գեղձ մը կ'տեսնէ : Այս գեղձը ճերմակ, վարդագոյն, մանիշակագոյն, թաւշի պէս էր և զմայելի կ'երևէր : Լուսիկ տեսնելով այս գեղձն իր հանին կ'յիշէ և այս աղւոր պտուղն անոր տանելու համար, ձեռքը կ'երկնցընէ և կ'բրբրէ : Բայց իր փոքրիկ մատերը կակուղ ու ճամուկ բանի մը կ'հանդիպին գեղձին տակը, Լուսիկ կ'նայի, գեղձը գետինը կ'նետէ ձիւ մը ձգելով և բուրբ ուժովը կ'վազէ կ'փախչի :

Այս կակուղ բանը . . . Բնչ էր . . . Թրթուր մ'էր : Ծեր պարտիզանն որ քիչ մը հեռուն կ'աշխատէր, շուտ

մը աղջկան մօտ վազեց և սրտադող հարցուց անոր թէ Բնչ պատահեցաւ :

Լուսիկ այնչափ դող ելեր էր որ չլրջաւ պատասխան տալ . այլ մատովը գեղձը ցցուց, որ աւազին վրայ դլորեր էր և Թրթուրը դեռ վրան էր :

«Բնչ կայ, ըսաւ ծեր պարտիզանը, այս պղտիկ Թրթուրն է որ քեզի այդչափ վախցուց . ամօթ քեզի . անմեղ ու անփնաս կենդանի մ'է այն :

— Այ, շատ ու շատ տղեզ է, պատասխանեց Լուսիկ զգուանօք :

— Ամենն ալ այսպէս տղեզ չեն, ըսաւ պարտիզանը, շատ սիրուն Թրթուրներ ալ կան : Իս այս ալ այնչափ դէշ չէ : Նայէ անդամ մը, յարեց պարտիզանը փոքրիկ աղջիկը գեղձին մօտ տանելով և միջատն ու պտուղը ձեռքին մէջ բռնելով, նայէ, սիրուն աղջիկս, Բնչ փայլուն գոյներ ունի այս Թրթուրը : Կարծես թէ գորշ շրջագետս մ'ունի, ոսկեգոյն ժապաւեններով և մարդարտէ կրկին պսակով : Աստուած միայն այսպիսի աղւոր գոյներ կ'շնորհէ :

— Վայ . . . իրաւ է», ըսաւ Լուսիկ զլուին երկնցընելով, բայց մարմինն ետ ետ կ'տանէր և ձեռքերը կ'պահէր ետևը :

Ետքը՝ քիչ մը սիրտ առաւ պարտիզանին քովը դանուելուն և սկսաւ հետաքրքիր աչքով քննել Թրթուրն որ գեղձին բոլորտիքը կ'շրջէր :

«Ա՛, Մըկը եղբայր, ըսաւ Լուսիկ, հիմակ այդ Թրթուրը հանիին գեղձը պիտի ուտէ :

— Ո՛չ, աղջիկս, Թրթուրները պտուղ չեն ուտեր, այլ տերևներ կ'ուտեն, կոկոններ, ծաղիկներ կ'ուտեն, և շատ անդամ ծառերը կ'չորցընեն :

— Կ'նայիս ուրեմն, Մըկը եղբայր, որ այս կենդանիները չար են :



— Ամենքն ալ չար չեն, զաւակս : Չար լինիլ, չարութիւն ընելու կամք ունենալ է : Բայց այս թրթուրներն չար կամք չունին : Անոնք ալ մեղի պէս կ'ուտեն, վասն զի ապրելու համար ստեղծուած են, և մեղի պէս իրենց պէտք եղած բաները կ'ընտրեն : Իս որովհետեւ իրենց կերակուրն մեր ուտելիքին կ'իմասեն և չեն թողոր որ պատուիրը հասնին, զանոնք կ'առակեցընենք, ինչու որ աւելի զօրաւոր ենք . . . : Կ'նայիս, իմ փոքրիկ աղջիկս, մենք աւելի չարասէր ենք քան թէ թրթուրները :

— Իրաւ է, ըսաւ Լուսիկ :

— Ուրիշ չարիք ալ կ'ընենք : սիրուն աղջիկս, շարունակեց պարտիպանը, և այս ընելով աւելի անդամ չենք սեպուիր : Թրթուրներուն պէս մենք ալ պարտաւոր ենք մեր պիտոյքը հոգալ, մենք ալ անոնց պէս մեղի պէտք եղածը ձեռք կ'ձգենք Աստուծոյ մեղի տուած ճարտարութեամբ :

— Արդեօք բարի Աստուած թրթուրներուն ալ ճարտարութիւն տուաւ, հարցուց Լուսիկ :

— Անշուշտ, ամէն արարածներուն, մեծէն բոնէ մինչև պղտիկը, Աստուած սորվեցուց ինչ որ պէտք է զիտնալ ապրելու համար : Թէ ոչ ինչ պիտի ընէինք, մենք ալ ինչ պիտի կ'ընայինք հնարել :

— Ուրեմն թրթուրներն ինչ կ'ընեն :

— Չգիտեմ :

— Ո՛չ, չգիտեմ :

— Նախ անոնք կ'աշխատին :

— Իրենց աղոյց համար :

— Ո՛չ, թրթուրները զաւակ չունին :

— Ուրեմն ինչո՞ւ համար կ'աշխատին :

— Իրենց միւս կենաց համար :

Այս խօսքը լսելով փոքրիկ աղջիկն իր աչքերը մեծ մեծ բացաւ պարտիպանին վրայ և դարմանալով անոր երեսը նայեց :

ցաւ : Արդէն լսեր էր որ մարդու հոգին չմոռնիր, անմահ է, ուրիշ կեանք մ'ալ ունի, բայց թրթուրներուն համար չէր այդ անմահութիւնը :

«Քեզի բան մը ըսեմ, իմ սիրուն աղջիկս, ես շատ կը սիրեմ թրթուրները, թէև պարտիպան եմ, և շատ անգամ իմ բարկութիւնս կ'ըրգուն աւրելով իմ տունկերս : Բայց իրենց կեանքն որ մեղի արհամարհելի կ'ենրեի, ո՛րչափ սրտաշարժ է : Մտածէ անգամ մ'որ այս փոքրիկ միջատներն այս աշխարհիս մէջ բնաւ զուարճութիւն մը չունին : Ոչ զաւակ, ոչ ընտանիք և ոչ բոյն մ'ունին զիշերներն պատսպարուելու համար :

Այս թրթուրներն դարնան կ'ըացուին դրեթէ մերկ ճիւղերու վրայ, ծանր ծանր կ'սողան քիչ մը կերակուր փնտռելու համար : Իրենց կարճ ու ճանկաւոր թաթիկներն ոտքի մը կ'կապուին, ոչ ծաղիկներուն զեղեցիկութիւնը գիտեն, ոչ օդին անուշութիւնը, ոչ թափառական կեանքի մը հաճոյքը : Գրեթէ ամենուն զրուանք կ'պատճառեն, ինչպէս քեզի պատճառեցին : Բայց թրթուրները չեն վհատիր, և իրենց զորքը կ'շարունակեն : Այս աշխարհէս կ'անցնին տանց դադար առնելու, որպէս թէ այս փոքրիկ կենդանիները կ'զգան որ քիչ մը ժամանակ ունին միայն այս կեանքին մէջ : Անդապար տերևներ ու բողբոջներ կ'ուտեն, բայց իրենց պէտք եղածը քաղելու համար է, ինչպէս որ իմ կինս բուրգ ժողովելով կ'մանէ իր աղէկատին վրայ : Ետքը երբոր թրթուրները բաւական բան կ'ըացեն, իրենց կերակուրը կ'լնեցնեն և մանելու կ'սկսին :

— Ի՞նչպէս կարելի է որ կնկանք պէս բուրգ մանեն, հարցուց Լուսիկ :

— Ո՛հ, ո՛չ, փոքրիկ խեղդուկ, անակ մ'ունին իրենց համար : Նախ հանգարաւ անդ մը կ'ընտրեն, որ իրենց աշխատութենէն չարդիւլ լին : Դատի մը ճիւղէն կ'կախուին կամ



պատի մը ճեղքէն : Ետքը քիչ քիչ իրենց թելովը կ'փաթ-  
թուին և այնպիսի լաւ դոյուած փոքրիկ պատեան մը կ'շի-  
նեն որ վերջապէս թրթուրն անտեսանելի կ'լինի : Այն ա-  
տեն կ'այլակերպի, ալ թրթուր մը չէ այն, այլ բոժոժ մը .  
բան մ'որ ոչ գլուխ, ոչ ոտք ունի և ոչ ինչ, այլ սակայն  
երբոր գպչիս կ'շարժի : Չես կարծեր թէ կենդանի մ'է . այլ  
աւելի հունտի մը, տեսակ մը պտուղի կ'անանի : Վերջապէս  
տղեղ բան մ'է :

— Այս է ուրեմն իրենց երկար աշխատութեան վարձքը,  
հարցոց փոքրիկ օրիորդը :

— Է՛հ, այս վիճակը շատ չքշեր կ'անցնի : Պատրաստու-  
թիւն մ'է այս իրենց երկրորդ կեանքը մտնելու : Իբր որ  
ցուրտը, ձիւնը, գէշ օդն բոլորովին անցնին, երբոր արեւն  
կենդանութիւն կ'տայ երկրիս վրայ դառնաւ բաներուն, բը-  
ժոժները կ'բացուին, և հին թրթուրները բայ օղին կ'թուին  
կ'երթան, փալիլուն թիթեռնիկները դառնալով :

«Անայիս, աղջիկս, այն ատեն իրենց քաջութեան, համ-  
բերութեան վարձքը կ'ընդունին : Ատեն մը խեղճ միջասն տե-  
րեներու տակ կ'սողար, այսօր ծաղիկներու վրայ կ'թուփուի :  
Անոնց անուշ հոտով կ'անանի, ցօղին կայլակները կ'լսէ :  
Երբ թրթուրը թիթեռնիկ կ'դառնայ, ալ ծանր աշխատանք,  
տուանձնութիւն, մինակութիւն չքաշեր : Ծաղկած պարտեզ-  
ներու վրայ կ'իջնէ, դալարուտ մարդերու վրայ : Օղին  
մէջ կ'թուի իրեն պէս զուարթուն և թեթեւ ընկերներու հետ :  
Ամենուն աչքն անոր կ'նայի, դարնան խիստ շնորհալի բանն  
է, ամէն մարդ կ'զմայի անոր վրայ, թէ և ատեն մը կ'ար-  
համարհէր : Այն ատեն իր բոլոր քաջած զոյանքը փոխարի-  
նելու համար կարծես թէ ամէն տեսակ ուրախութիւններ կը  
վայելէ, և իր նոր ձեռքն ընտանիք և մանր զաւակներ ունի :

— Ուրեմն փոքրիկ թիթեռնիկները խոշորներուն զաւակ-  
ներն են, հարցոց Լուսիկ :

— Ո՛չ, սիրուն աղջիկս, պատասխանեց Մըկը պարտեզ-  
պանը, խոշոր, պղտիկ, ճերմակ, դեղին թիթեռնիկներն սար-  
բեր տարբեր տեսակ են, որ քիչ շատ ատեն կ'այլին և կը  
բացուին : Թիթեռնիկներու զաւակները փոքրիկ հաւկիթներ  
են, իրենց մայրերն տունկերու կեղևին վրայ զանոնք կ'փակ-  
ցընեն և երբ ժամանակն հասնի մանր թրթուրներ պիտի լի-  
նին : Այս թրթուրներն իրենց ծնողայ պէս կ'ապրին առաջ,  
և երբ իրենց աշխատանքը վերջացընեն՝ նոյն կերպով կ'այ-  
լափոխին ու իրենց վարձքը կ'դոնեն :

— Իրաւունք ունիս թրթուրները սիրելու, եղբայր Մըկը,  
ըսաւ աղջիկը, վասն զի կ'նայիմ որ քաջ կենդանիներ են :  
Տո՛ւր, անգամ մը մօտէն տեսնեմ :


Այս ըսելով՝ փոքրիկ օրիորդը դեղձն ու թրթուրն առաւ  
անլախ՝ ծեր պարտեզպանին ձեռքէն և սկսաւ լուրի մեջիկ  
դիտել :

«Չարմանալի՛ բան է, ըսաւ փոքրիկ օրիորդը քիչ մը  
խորհելէն ետեւ, թրթուրի պատմութիւնդ շատ կ'անանի մօրս  
ըսածին մեր յատուկ պատմութեան վրայ : Քաջ դիտեմ որ  
մենք մարդ ենք, և թրթուրներն անասուն են, մեզի պէս լե-  
զու ու հոգի չունին, բայց անոնք ալ, ինչպէս կ'ըսէ մայրս,  
մեզի պէս կ'աշխատին այս աշխարհիս մէջ, մեզի պէս կը  
մեռնին և ապա յարութիւն կ'առնեն . . . :

— Հա՛, աղջիկս, պատասխանեց պարտեզպանը, յարու-  
թիւն կայ, և եթէ մենք մեր պարտքն արիւթեամբ կատա-  
րենք . . . յախտեանական վարձք պիտի ունենանք . . . » :







ԺԸ

## ԶՈՒԹԱԼԸ

Ատենօք պարոն մը կար որ ջութակ կ'ածէր :

Այս պարոնը որդի մ'ունէր որու անունը Գալուստ էր : Գալուստ շատ կ'ուրախանար երբոր իր հայրը զիտցած եղանակները կ'նուագէր, ինչպէս Կոստան, Զէքեան, Գարուն :

Այն ատեն Գալուստ կ'երգէր և հայրն իր ջութակին ձայնն անոր մեղմիկ ձայնին կ'յարմարեցնէր : Շատ սիրուն էր այս, և բնաւ դժուար չէր երևեր :

Ինչ կ'ընէր հայրը, միայն ջութակին վերի կողմն ծնօտին ու կուրծքին վրայ կ'դնէր, իր ձախ ձեռքովը նուագարանին կոթը կ'ընէր, մասերովն հետզհետէ թեւերուն կ'զայէր, ետքը աջ ձեռքով կ'անտոցը կ'առնէր և այսպէս թեւերուն միջևը վեր վար, վեր վար կ'շարժէր, և ջութակն ուղածդ կ'երգէր : Այս բանս ընելն այնչափ պարզ, զիւրին կ'երևէր որ տղեկն ալ ուզեց ջութակն անել :

«Հայր իմ, տո՛ւր ջութակը, ըսաւ տղեկը, տուր որ ես ալ խաղամ, նուագեմ, Զէքեան, Գարուն» :

Ինչ հայրը տուաւ ջութակը, և տղեկն իր հօրն բրածին պէս ճարպիկութեամբ ջութակը տեղաւորեց, վերի կողմն ծնօ-

տին ու կուրծքին վրայ, կոթը ձախ ձեռքը, կ'անտոցն աջ ձեռքը, մէկ, երկու, և ապա սկսաւ խաղալ . . . :

Բայց ինչ ահաւելի ձայն հանեց : Ջութակը չէ թէ առուշ, սիրուն երգ կ'նուագէր, այլ կ'ընծաւէր, կ'խորդար, կ'զոչէր, կ'խանչէր, կ'ոռնար . . . : Այնքան ահաւելի կերպով ականջները կ'ընդունէին՝ որ տղեկն ահ ու դող ելած՝ վազեց հօրը մօտ և ջութակը տալով անոր ըսաւ .

«Բայց հայրիկ, ինչ պէտք է ընել որ ջութակն աղւոր եղանակներ նուագէ :

— Շատ պարզ բան մը, զաւակս, պատասխանեց հայրիկը, պէտք է երգել տալու արուեստը սորվել :

Ուրեմն պէտք է որ աղայք միտքը կրթող փափուկ զուարճութեանց վարժին, և չէ թէ կոշտ խաղերու՝ որ միտք աւերա կ'աւրեն ու կ'խանդարեն :







Ի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՏՈՐ ՄԷ

Փոքրիկ աղջիկ մը կար վեց տարեկան։ Այս աղջիկն՝ ուրու անունն էր Ֆուլիկ, շաքար շատ կ'սիրէր։

Օր մ'իւր մայրն առաւ զինքն ու պտըտելու համար դուրս ելաւ։ Ֆուլիկ փոքրիկ զամբիւղ մ'ունէր ձեռքն և անոր մէջ շաքարի կտոր մը կար։

Համբան երթալու ատեն՝ կոյր աղքատ մարդ մը տեսան որ քարի մը վրայ նստեր էր և իր քովը շուն մ'ունէր։

«Մայրիկ, ըսաւ Ֆուլիկ, այս խեղճ կոյր մարդուն բան մը տալ կ'ուզէի»։

Մայրն, որ ունեւոր և բարեսիրտ կին մ'էր, հարիւրնոց մը առաւ Ֆուլիկին որ ինք անձամբ աղքատին տայ և սիրտը զոհ լինի։

Աղքատը Ֆուլիկին ոտքին ձայնը լսեց ու բարձր ձայնով ըսաւ .

«Աղջիկս, Աստուած օրհնէ և պահպանէ քեզ, որ ինձի պէս կոյր ու ապիկար տնանկին ողորմութիւն կ'ընես»։

Ֆուլիկ իր մօրը քովը դարձաւ և անոր հարցոյց .

«Ի՞նչ կ'ուզէ ըսել այս աղքատը»։

— Աղջիկս, կարծէ թէ իրօք դու ես ողորմութիւնը տուողը։

— Ի՞նչ ըսել է ողորմութիւն տալ։

— Երբ ունեցածէդ բան մը տաս աղքատին օգնելու համար, ողորմութիւն կ'ընես»։

Մայր ու աղջիկ քանի մը քայլ առին։ Ֆուլիկ կ'մտմտար։ Յանկարծ Ֆուլիկ աղքատին կողմը վազեց և իր շաքարի կտորը տալով .

«Բարի մարդ, ըսաւ, երբոր մեծնամ և ստակ ունենամ՝ քեզի պիտի տամ. բայց հիմակ փոքր եմ, մինակ այս շաքարի կտորն ունիմ և ահա քեզի կ'տամ, վասն զի դժբաղդ ես»։

Աղքատը քթին տակէն խնդաց, և սրտովին աղօթք ըրաւ . «Ես Աստուած անոր երկայն արեւ տայ»։







ԻԱ.

## ՄԱՆԻՇԱԿ ԳՈՒՆՔԸ

Փոքրիկ աղջիկ մը կար Սաթինիկ անուն, որ իր մօրը հետ պարտեղը կ'երթար ծուռ դալու համար:

Արդէն մարտ ամիսը հասեր էր, ծառերն սկսեցին ծլել, դարունը կ'մօտենար:

Պարտեղին դուռն խեղճ կ'ին մը կեցեր մանիշակի փունջեր կ'ծախէր: Ո՛վ որ անցնէր ձեռքը կ'երկնցընէր և իր թարմ ծաղիկները ցոյց տալով կ'ըսէր. «Մանիշակ, մանիշակ, անուշ, շատ անուշ հոտ ունի. փունջը քսան փարայ է»:

Անցորդներէն մէկ քանին փունջ մը ծախու կ'առնէին, բայց շատեր այս սիրուն ծաղիկներուն վրայ աչք մ'անդամ չնետելով կ'անցնէին և խեղճ ծաղիկավաճառ կ'ինը պարագտեղը կ'կրկնէր. «Անուշահոտ, անուշահոտ»:

«Մայրիկ, ըսա Սաթինիկ, ինձի փունջ մը կ'առնեն»:

— Բոլոր սրտով, իմ անուշիկ աղջիկս», պատասխանեց մայրը:

Եւ շուտ մը զրպանէն քսան փարայ հանեց և պատու կրն»

կան տուաւ, որ՝ այս ստակին փոխարէն՝ իր ամենէն աղոր փունջն աղջկան յանձնեց:

Բայց Սաթինիկ փունջն առնելուն պէս՝ սկսաւ թերթիկները փետել և իր փոքրիկ ձեռքը ասղիս անդին ցանկել, ինչպէս որ ապրիմ մեռնիմ ծաղիկը կ'ընեն:

Մայրն անոր պիտի ըսէր որ ծաղիկները չարէ, երբոր պատու կ'ինն առելի շուտով պտայ:

«Ա՛յ, աղջիկս, ի՛նչ կ'ընես. ինչո՞ւ համար այդպէս կը փետես իմ խեղճ ծաղիկներս»:

— Բայց, պատասխանեց փոքրիկ օրիորդն, միթէ հիմակ իմն չէ՞, քանի որ դիմը վճարեցի»:

— Իբրաւ է, ըսաւ պառաւն, ստակով առիր այդ ծաղիկները, և տուած քսան փարայիդ չափ աչքիդ չեն, բայց ես, օրիորդ, զանոնք կ'սիրեմ, ինչու որ Աստուած այս պարզ ծաղիկներէն առելի սիրուն բան մը չէ ստեղծած, և թէ որ դու ալ ինձի չափ զիտնաս թէ ինչ են, դու ալ ինձի պէս պիտի սիրէիր և չպիտի առէիր»:

— Բայց դիտեմ ինչ են մանիշակները, ըսաւ Սաթինիկ բոլորովին զարմանալով. դիտեմ որ մանիշակները վարդ չեն, վայրի կակաչ չեն, հասար միայն մանիշակ են»:

— Ե՛հ, կ'հասկընամ ինչ ըսել կ'ուզես, պատասխանեց կ'ինը, դու դիտես մանիշակին զոյնը, ձեք, տերեւները և շատ շատ ասոնք արործելի են քեզի... բայց չես ճանչեր անոնց յատկութիւններն ու բնութեան թիւնը, և եթէ դիտնայիր այն ատեն պիտի սիրէիր»:

— Արդեօք ծաղիկները բնութեան թիւն ունին, հարցուց Սաթինիկ իր մօրը. միթէ ծաղիկները յատկութիւններ ունին»:

— Մտիկ ըրէ, պատասխանեց մայրը, մտիկ ըրէ այս բարեսիրտ կնկան ըսելերը. կ'երեւի թէ մանիշակներուն պատմութիւնը դիտէ»:

Այն ատեն փոքրիկ օրիորդը հարցուց.



«Մանիշակներուն պատմութիւնը կ'ուզէ՞ք ինձի ըսել :

— Ամենայն սիրով, պատասխանեց բարեսիրտ պառաւը, վասն զի մարդ իր սիրած բանին վրայ խօսելէ չկշտանար :

— Բայց առաջ հոտուրտս իմ փոքրիկ ծաղիկներս, ըսաւ պառաւը, միթէ ասոնց հոտին պէս անուշ հոտ մը կայ :

«Լաւ, մանիշակները բնաւ չեն պարծիր այս բանին վրայ : Ինքզինքնին չեն ցուցներ, չեն դովուր, այլ կ'պահուին :

«Փոխանակ աչքի երևելով՝ ամենուն գովեստը ըսելու, վարդերուն պէս, որ արևու ու լոյսի պէտք ունին, այս սիրուն մանիշակները թանձր անտառներու, ստուերոտ, ամայի տեղեր կ'աճին հանդարտիկ :

«Իրենց տերեւներով կ'սքողին, իրարու հետ լնկերութեամբ կ'ապրին և ուրիշ բան չեն պահանջեր :

«Աւառօտան ցօղին՝ իրենց պէտք եղածը միայն արևու նշոյլ մ'է որ տերեւներէն կ'անցնի :

«Ես որ քեզի կ'խօսիմ՝ հիմակ, ես որ դիտեմ թէ ո՞ր կողմերը բուսնելու կ'ախորժին, պէտք է որ օդին մէջ դանոնք փնտռեմ իրենց անուշ բուրումը շնչելով, վասն զի հոտէն աւելի շուտով կ'դուշակենք զայն տեսնելէն առաջ, և այս դմայելի համեստութիւնը նոր շնորհ մը կ'տայ անոնց :

«Երբոր ծաղիկը թարմ ու կենդանի է, ու կ'վայելենք իր անուշ հոտը, կ'քաղենք, անոր ջուրը կ'հասնենք : Հոտարարներն եղերու հետ կ'խառնեն որով ձեր մաղերը կ'օժէք, այլ և այլ հոտաւետ ջրեր կ'շնեն անով և ձեր թաշկինակները կ'հոտաւետէք : Եւ մանիշակին այս անուշ հոտն ամէն մարդ կ'սիրէ, ոչ ոք անկից չվախնար, վասն զի թէ անմեղ է և թէ քաղցրահոտ : Բնաւ գլխի ցաւ չտար, ինչպէս ուրիշ հոտեր որ անտանելի դարձած են :

«Վերջապէս՝ երբոր այս խեղճ ծաղիկը կ'թուամբ ու կ'չորնայ, վասն զի ափսոս, ամէն բան կ'մեռայ, դարձեալ մեր

ցաւերն ամոքելու զօրութիւնն ունի : Զաւակս, եթէ հազաս, եթէ մայրիկդ ջերմ ունենայ, ու կոկորդը ցաւի, մանիշակի քանի մը չոր ծաղիկներ առ մատերովդ, տաք կաթի մէջ նետէ, և տուր որ մայրիկդ խմէ, այն ատեն պիտի տեսնես որ հազը պիտի դադրի, կոկորդի ցաւը պիտի մեղմի, վասն զի մանիշակը դեղեցկութիւն, թարմութիւն, հոտ չունի իրաւ, բայց այն ընտիր ու բարեշնորհ անձերուն կ'նմանի, որ՝ երիտասարդութեան փայլը կորուսելէ ետեւ՝ դարձեալ բարութիւնն կ'պահեն, և այս է սրտի մշտատեղեցկութիւն մը :

— Իրաւ է, բոլոր ըսածներդ իրաւ են, ըսաւ փոքրիկ օրիորդն երբոր փունջեր ծախող կինը խօսքը լմացոյց : Գիտէի այդ. բայց իմ փունջս անխոհեմութեամբ փետեցի, արեցի . . . » :

Եւ փոքրիկ օրիորդն այն տեղ կ'կենար անշարժ, և տըրտում ականջը կ'նայէր այն մանիշակի կտորներուն որ հողին վրայ ցլի ու ցան թափեր էին :

«Զաւակս, ըսաւ բարեսիրտ ծաղկավաճառ կինն որ անոր զգջումը կ'տեսնէր, ահա քեզի մանիշակի ուրիշ փունջ մը : Ընդունէ զայն . . . : Յուսամ որ այդ փունջը պիտի պահես, այնպէս չէ՞. և միտ դիր, զաւակս, որ այսուհետեւ քան զի քեզ արամեց փայլաւոր » :







ԻԲ

## ՅՈՐԵՆԻ ՀԱՍՆԵՐԸ


Փոքրիկ տղայ մը կար, Պօղոս անուն, որ օրին մէկն իր հօրը հետ դաշան ելաւ։ Իր հայրը հողագործ էր և կ'ուզէր նայիլ թէ արդեօք ցորեններն հասունցէր են։

«Հայրիկ, ըսաւ տղեկը, ինչո՞ւ համար կան քանի մը ցորենի բունեն որ ծուած են, կան այնպիսիներ ալ որ շիփ շիտակ կ'իկենար։ Կ'երևի թէ այն բուններն որ շիտակ են, ամենէն լաւ հասիկն ունին, իսկ անոնք որ ծուած են լաւ հասիկեր չունին»։

Հողագործը շուտ մը երկու հասի կտրեց, և իր որդւոյն ըսաւ.

«Նայիր, զաւակս, նայիր. այս հասին որ այնպէս համասունթեամբ կ'ծուէր, շատ աղւար ցորենի հատիկներով լեցուն է, ընդ հակառակն՝ այն որ զուռզուլթեամբ զլուխը կը բարձրացընէր բոլորովին պարտալ է։

Նոյնպէս ունայնամեկ մարդը Բոտոյ է, Բիտոյ մարդը համարու



ԻԳ

## ԹՈՎՄԱՍԻՆ ՇՈՒՆԸ

Ասեմօք փայտահատ մը կար որու անունն էր Թովմաս։ Այս փայտահատն մեծ անտառի մը մէջ կ'ընտելէր Հայաստան։ Խեղճ մարդ մ'էր, փայտ կտրելով խորձեր կ'ընէր ու կը ծախէր որ իր ընտանիքը նայի։ Իր կինն էր Շուշան, և երկու տղայ ունէր։ Առջինեկը մանչ էր, սե մաղեր ունէր, եօթն տարու էր, Օհաննիկ կ'իւղուէր, իսկ երկրորդ զաւակն դեղձան մաղերով սիրուն աղջիկ մ'էր, Նունիկ անուանով։

Թովմաս սե շուն մ'ալ ունէր, մաղերը գանգուր էին, քթին ծայրը ձերմակ, այն տեղոյն ամենէն լաւ շունն էր, փամբ դե իր աէրը շատ կ'սիրէր, և այս շան անունն էր Սեւուկ։ Հայաստան շատ ձիւն կ'ույ, լեռներն ու հովիտները կը



ծածկէ. և երբ ձիւները կ'զիզուին անտառներուն մէջ՝ դայլերն ուտելու բան չգտնելով անկից կ'եւնեն որ կերակուր փնտռեն: Այսպիսի ձիւնոտ ժամանակ ժողովուրդն ալ նեղութիւն կ'բաշէ և չկրնար աշխատիլ:

Թովմաս չէր վախնար դայլերէն երբոր իր տապարն ձեռքն ունենար, և ամէն օր կանուխ կ'եւնէր ու իր գործին կ'երթար:

Աւաւօտ մը իր կնոջ ըսաւ.

«Զուշան, մի թողուր որ Օհաննիկն ու Նունիկը դուրս ելնեն խաղալու, վտանգ կայ. պէտք է որ դայլերը հալածեն. Սեուկն ալ տունը պահէ»:

Թովմաս իրիկուն մը ուշացաւ տուն դառնալու: Զուշան դուռն ելաւ, ասդիս անդին նայեցաւ, ներս մտաւ, և նորէն դուրս գնաց, և երբ էրիկը չտեսաւ հնչուքը զինքն առաւ և ինքնիրեն ըսաւ. «Ինչու համար այսպէս կ'ուշանայ թովմաս»:

Քիչ մ'ետք՝ նորէն դուրս ելաւ, և իր էրիկը կանչեց. — Թովմաս, Թովմաս — բայց ձայն ձիւն չլսեց: Սեուկն շուտ մը վազեց իր վրայ ցատկեց. կարծես թէ այս ըսել կ'ուզէր. — Վուզէս երթամ նայիմ, ուր մնաց տէրս»:

— Վար, վար նստիր, քաջ շուն, ըսաւ Զուշան. դուն, իմ փոքրիկ Նունիկս, դուռն ելիր և նայէ հայրդ կ'երևի: Դուն ալ, Օհաննիկ, պարտիզին ծայրը գնա և բարձր ձայնով պոռա. հայր իմ, հայր իմ»:

Տղաքն իրենց մօրն ըսածն ըրին, բայց չկրցան տեսնել իրենց հայրը:

«Ես պիտի երթամ հայրս գտնելու, ըսաւ փոքրիկ Օհաննիկը. փոյթս չէ, եթէ դայլերն ալ զիս ուտեն»:

— Ես ալ հետդ կ'գամ, ըսաւ իր քոյրիկն. և երկուքն ինչ ալ անտառին ճամբան բռնեցին:

Նոյն միջոցին իրենց հայրն ուրիշ ճամբէ մը տուն դար-

ձեր էր, իր փայտի կապոցը դրացոյն տունը թողլով՝ որ իրեն ապսպրեր էր:

«Տղաքը դէմդ չեւան, հարցուց Զուշան՝ երբոր էրիկը ներս մտաւ:

— Զէ, չտեսայ, ըսաւ Թովմաս. միթէ գո՞րս ելան:

— Ես զրկեցի պարտիզին ծայրն. բայց դուն ուրիշ ճամբով եկար»:

Թովմաս տապալը վար չըրաւ, այլ կրակի պէս դուրս վազեց և շիտակ անտառը զարկաւ:

«Սեուկն հետդ մո», պոռաց Զուշան. բայց Սեուկն արդէն դուրս նետուեր էր և այնքան հեռացեր որ Թովմաս չէր կրնար զայն տեսնել:

Պարապ տեղը խեղճ հայրը կ'պոռար. Օհաննիկ, Նունիկ, ձայն մը չէր լսեր: Այն ատեն սկսաւ արտասօք թափել. վասն զի կ'վախնար որ զաւակները չկորսուին:

Երկար երկար ճամբայ մ'ընելէն ետե՛ Սեուկին ձայնն աւանջին զարկաւ: Դէսդ այն ձայնը գնաց անտառին մէջ՝ տապալը վեր բռնած:



Սեուկը աղայքը դտեր էր ճիշտ այն միջոցին որ մեծ դայլ մը վրանին պիտի յարձակէր: Զունը դայլին վրայ ցատկեց, սաստիկ հաջելով, որ իր աէրը կանչէ: Թովմաս տապալը դայլին զլիւռն իջեցուց և այն վայրենի զազանը սպաննեց, բայց չկրցաւ խեղճ Սեուկն աղատել, արդէն ընկեր էր գետինը, դայլը զայն սպաննեւ էր:

Հայրն իր երկու զաւակներն առնելով՝ տուն դարձաւ, և Զուշան՝ ուրախութենէ սկսաւ լալ իր սիրականները տեսնելուն. բայց միւս կողմէ արտում էին, վասն զի իրենց հաւատարիմ Սեուկ շունը կորուսեր էին: Սեուկը պարտիզին ծայրը թաղեցին և անոր վրայ մեծ քար մը դրին. դիւղին վարժապետը տապանադիր մը գրեց այսպէս.



Այս բարձր գոտի կանգնել Սևուկը  
Համեքում մեկ ափսոսանք է :

Անտառին մոտ բնակող գիղացիք դեռ կ'իջեն Սևուկը .  
վասն զի երբ անկեղծ . քաջ ու հաւատարիմ մարդ մը տես-  
նեն կ'ըսեն . Թովմասին Սևուկին պէս արի ու հաւատարիմ  
է :



ԻՊ

ՇՈՒՆ, ԱՂԼՈՐ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Անգամ մը շունն ու աղլորն իրարու հետ բարեկամ եղան  
և խօսք ըրին որ ճամբորդեն : Երբ մոտ թը կոխեց՝ անտառ մը  
մտան : Աղլորն ծառի մը վրայ թռաւ ու ձիւղերուն մէջ թա-  
ռեցաւ . իսկ շունն ծառին ստորոտը սքլեցաւ մնաց : Երբոր  
գիշերն անցաւ և արշալոյսն երնցաւ , աղլորն՝ ինչպէս որ սո-  
վորութիւն ունի , սկսաւ երգել : Աղուէս մը լսեց անոր ձայնն ,  
վաղեց եկաւ զանի ոտեւում յոտով և ծառին տակը կենա-  
լով այսպէս խօսեցաւ .

«Դու փոքրիկ սիրուն թռչուն մ'ես , շատ օգտակար ես ըն-  
կերներուդ . այսպէս վար իջեր որ մեր առաօտեան ժամն ը-  
նենք և մէկտեղ զուարճանանք» :

Աղլորը տատասխանեց . «Իմ աղնիւ բարեկամս , դնա սո-  
ւառն ոտքն և լուսարարը կանչէ որ զանգակը դարնէ» :

Բայց երբոր աղուէսը դնաց կանչելու , շունը շատ մը տե-  
ղէն ցատկեց , աղուէսը բռնեց ու սպաննեց : Այսպէս խա-  
բերան ու նենգաւորն իրեն արժանի տատիժը կ'գտնէ :





ԻՆ

ՅԱՓՐԱՌԻ

Ա

Ատենօք եօթն տարու աղջիկ մը կար, որու անունն էր Սրբիկ։ Այս փոքրիկ աղջիկը մայր չունէր, այլ քոյր մ'որ իրմէ մեծ էր, և անունը Սոփիկ էր։ Սոփիկ մօր պէս կ'խնամէր իր քոյրն ու կ'կրթէր։

Թեպէտեւ Սոփիկ տասն վեց տարու էր, բայց խելօք, ժիր, զղօն աղջիկ մ'էր. ամէն բան կ'դիտէր, ամէն բանէ օգուտ քաղել գիտէր և իր քրոջ վարժուհին եղեր էր։

Ամենէն աւելի ժամանակին արժէքը գիտէր Սոփիկ։ Իր պատուհանին մէջ թաղար մ'ունէր. տեսեր էր որ փոքրիկ տունկը կ'մեծնար. նոյնպէս՝ իր տան զիմացը մեծ տուն մը կ'շինէին։ Ամէն օր փոքրիկ տունկը քիչ մը կ'բարձրանար, և ամէն օր որմադիրներն մէկ երկու կանգուն տան պատերը կ'բարձրացընէին։ Բայց շարժու. մէջ օր մը, երկուշաբթի, որմադիրներն աշխատելու չէին գար, օրը պարապ կ'անց-

նէր. պատերն մատի չափ անգամ չէին բարձրանար այն օրը, մինչդեռ փոքրիկ տունկը, որ ամէն օր օգուտ կ'քաղէր, անդադար կ'աճէր։

Այն ատեն Սոփիկ հասկըցաւ որ տուն մը շինելու, ծաղիկ մը բուսցընելու և ուրիշ որ և է գործ ընելու համար՝ ժամանակ ու աշխատանք պէտք է։ Եւ որովհետեւ ամէն մարդ այլ և այլ գործեր ունի կատարելու, Սոփիկ մտքովն այս ըստեր էր։

«Պէտք է որ մեր օրն այնպէս բաժնենք որ կարող լինինք մեր բոլոր պարտաւորութիւնները կատարել և մեր ժամանակը չկորսնցընել։ Ժամանակն մեր զբաղմանց կամ անդործութեան չափն է։ Ժամը չդադրիր կ'անցնի ինչ որ ընենք աղէկ կամ վատ գործ մը. այսպէս իրիկուն ու առաւօտ իրարու մօտ են. այս ներկայ ժամն որ այսօր կ'կոչուի, վաղը պիտի անցնի, և երէկ պիտի կոչուի և երէկը նորէն չդառնար։ Այլ վաղուան օրն այսօր կ'լինի, և այսպէս օրերն իրարու տեղ կ'անցնին կ'երթան...»։

Այսպէս մտածելով՝ Սոփիկ իրեն ու քրոջը համար ժամանակը կարգի գրեր էր։ Ամէն օր ժամը վեցին կ'արթննար իր Սրբիկ քրոջ հետ. կ'հագուէր, աղօթքը կ'ընէր, անկողինը կ'շտկէր, մէկ խօսքով տան հաւքըտալքը կ'ընէր. և ժամը եօթին գործը կ'ընէր։ Սոփիկ կար կ'կարէր, Սրբիկ դասը կ'սերտէր։

Ամէն օր ճաշի, դասի և զբօսանքի ժամերը նոյնն էին. իրիկունը կ'նայէին որ շատ գործ ըրեր են, շատ բան սորվեր են, և բաւական ալ զուարճայեր են։

Զբօսանք մը կար մանաւանդ որ երկուքնին ալ կ'սիրէին։ Այս զբօսանքն էր... արդէն ըսի ձեզի այն տունին որմէ Սոփիկ ժամանակին արժէքը սորվեր էր. լաւ, այս տունկը մեծցեր էր, տերեւները ձև առեր էին, փոքրիկ բողբոջներ բուսեր էին, անուշ ու զմայլելի հոտ մը կ'բուրէր այս տունը։



կը . . . յափրուկ մ'էր : Սոֆիկ այս յափրուկը շատ կ'սիրէր . . . միտքը դուռ իրենց տան ետեւը՝ դաւթին մէկ ծայրը փոքրիկ պարտեզ մը շինեւ : Սրբիկ օգնեց անոր որ մանիշակներ, մարգարիտներ և անթառամ ծաղիկներ տնկէ :

Պէտք էր այս պարտիկին հող տանիլ, և Սոֆիկին ու Սրբիկին համար մեծ զբօսանք մ'էր այս :

Սոֆիկ ու Սրբիկ իրենց օրուան գործերը լմացընէն ետեւ՝ փոքրիկ պարտեզը կ'երթային, մին բահիկ մը կ'առնէր ձեռքը, միւսը ցնցուղ մը : Գէշ խոտերը կ'հանէին, ծաղիկներուն հողը կ'շարժէին, մանր քարերը կ'ժողվէին, ծաղիկներուն ջուր կ'առնէին, խղճն ջրերը կ'բռնէին, նոյնպէս թրթուրներն ու միջատներն որ փափուկ բոյսերը կ'կրծեն : Այսպէս ամէն քան կ'աճէր կ'ծաղկէր, մանաւանդ յափրուկը . փառաւոր ծաղիկ մը դարձեր էր և միւսներէն աւելի շատ բարձր էր . կարծես թէ պարտիկին թաղուհին էր :

Սոֆիկ օրէ օր այս սիրուն ծաղիկին կ'կապուէր . իր ձեռքին տակ մեծցեր էր, ժամանակին արժէքն իրեն հասկըցողքեր էր : Ուստի շնորհապարտ էր անոր և ուրիշ բանի մը հետ բնաւ չէր փոխեր :

Օրին մէկն իրենց հայրը նամակ մը կ'ընդունի . այս նամակն իր եղբորը կողմէն էր : Այնպէս որ որդին ծանր հիւանդ է, և կ'փափաքէր որ Սոֆիկ քանի մը շաբաթուան համար երթայ հիւանդը նայելու :

Թէպէտև Սոֆիկ չէր ուզեր իր հօրմէն և քոյրէն բաժնուիլ, բայց զթոս ու անուշ սրբա ունէր, և իր հօրեղբոր հրամանը կատարելու պատրաստուեցաւ :

Սրբիկ ըսաւ իր քրոջ . «Քոյր իմ, անհող եղիք, շատ պիտի աշխատիմ, պարապ պիտի չնստիմ, և երբոր դառնաս յուսամ որ զոհ պիտի լինիս :

— Այո, պատասխանեց Սոֆիկ իր քոյրն համբուրելով, շատ պիտի աշխատիս, գիտեմ . բայց մեր կանոնը պիտի պահեն, դու որ բնաւ ժամացոյցը չես նայիր :

— Ի՞նչ փնտս ունի, պատասխանեց Սրբիկ, բաւական է որ աշխատիմ :

— Բայց պէտք է որ կարդալ կանոնով աշխատիս, սիրականս, և եթէ ժամ մը պարապ անցընես, այն ատեն պիտի նեղանաս, և դաս մը պիտի կորսնցընես :

— Լաւ, այդ դասը միւս օրը կ'սորվիմ :

— Միւս օրն, միւս օրը, ըսաւ Սոֆիկ . բայց միւս օրն ուրիշ դասեր պիտի ունենաս, և այն ատեն գործերը վրադ պիտի ծանրանան, պիտի յոյսիս, պարտաւորութիւններդ չպիտի կրնաս կատարել և զբօսնելու ժամանակ չպիտի ունենաս : Այն ատեն մեր պարտեզն ո՞վ պիտի խնամէ :

— Լաւ, իմ սէրէի խոյրէիս, ըսաւ փոքրիկ քոյրն, կամքդ պիտի կատարեմ . ժամացոյցին պիտի նայիմ և կանոնէն դուրս պիտի չելնեմ :

— Հա, սիրական փոքրիկ աղջիկս, հիմա աչքս մտար, ըսաւ Սոֆիկ, այդ խօսքդ բռնէ և ամենքը պիտի սիրեն քեզ » :

Ասոր վրայ բոլոր դասերը կարդի գրին, տասն հինգ օրուան բացակայութեան ատեն՝ Սրբիկին ընելիք գործերն ուրոշեցին, և Սոֆիկ մեկնելու ատեն իր փոքրիկ քրոջ ըսաւ .

«Քոյրիկ, բոլոր ժամերդ պահէ . այսօրուան գործը վաղուան մի թողուր . անցած ժամը չես կրնար ձեռք ձգել, ինչպէս ծախք ընկած ոսկի մը : Եթէ մեր կանոնը չպահես, մեր յափրուկն ինչ պիտի ըսէ 'ի դարձիս :

— Ի՞նչպէս յափրուկը պիտի կրնայ ըսել », պատասխանեց Սրբիկ զարմանալով . . . :

Բայց Սոֆիկ արդէն գուրս ելեր էր և Սրբիկին ըսածը չլսեց :

Բ

Առաջին օրերն շատ անքնեցաւ ինքն Սրբիկ . իր քոյրը կ'փնտռէր : Սոֆիկ ներկայ չլինելուն դասերն իրեն ծանր ու



դժուարին կ'երևէին : Իսկ երբոր կարի ժամը կ'հասներ, ու կ'եկնէր թաշկինակ մը կ'առնէր լքելու, կամ հօրը գուլպան կարկտելու, աւելի կ'արտօմէր, ինչու որ կար կարելու ատենը այլ և այլ բաներու վրայ կ'իստէր իր քրոջը հետ և կը զուարճանար : Հիմակ քոյրը սուրը չէր, խնդճը միս մինակ էր, և չորս կողմը ձայն ձիւն չլսելով՝ կ'տաղտկանար ու կ'ոհմէր :

Վերջապէս այնքան ձանձրոյթ զգաց որ օրին մէկն իր հայրն ազաչեց որ իրենց դրացոյն Յուլիանէ աղջիկը կանչէ որ քիչ մը հով առնէ : Հայրն կանչեց Յուլիանէն. անուշ, զուարթ, խնդումբութեան ընկերուհի մ'էր այն : Մինակ դէշն այս էր որ ժամանակին յարզը չգիտէր և ուղած ատենը կ'աշխատէր, ուղած ատենը պարտաւ կ'անցընէր և այսպէս ինքն իր գլխուն փշածը կ'ընէր :

Առաջին օրն կէսօրէն ետք՝ Սրբիկ ուղեց հասկըցընել Յուլիանէին որ պէտք էր կարգ կանոնով աշխատիլ, ինչպէս որ քոյրն ապսպրեր էր իրեն : Բայց Յուլիանէ չէր կրնար նեղիլ զալ. իրեն խեղքին դէմ էր այս բանս : Սրբիկ պարտաւ անող ըսաւ անոր որ դժուարին չէ, սովորութեամբ կրնայ վարժիլ, գործ փոխելով մարդ չձանձրանար, և ժամանակն օգտակար կերպով կ'անցընէ :

Քիչ քիչ Սրբիկն ալ սկսաւ իր ընկերուհոյն օրինակին հետեիլ. դեռ փոքր էր, բոլորովին կանոնաւոր աշխատութեան վարժած չէր, և ասոր համար ինքն ալ սկսաւ՝ Յուլիանէին պէս՝ ուղած ատենն աշխատիլ ու խաղալ :

Քանի մ'օրէն ետք՝ տեսաւ որ գասերէն ետ մնացեր էր, սիրտը դող ելաւ, շուտ մը գործերը ձեռք առաւ, մինչև իր ընկերու անկադար կ'աշխատէր, բայց ինչ օգուտ, գործերը դիտուեր էին, չէր կրնար ամենուն հասնիլ, և քոյրն ալ քանի մ'օրէն պիտի դառնար : Աստի բոլոր ճիւղը թափեց որ կորուսած ժամերը ձեռք ձգէ, զրօսանք, խաղ մոռցաւ :

Բայց նոյն միջոցին փոքրիկ պարտիզն ծաղիկներն ինչ ջրի մէջ էին :

Սրբիկ ամէն ճիւղ թափեց որ իր գործերը լմացընէ քոյրը չգործած՝ բայց չկրցաւ : Սրբիկ և իր հայրը գացին Սոֆիկը գիմնատրելու, և որչափ ուրախ եղան երբոր զերար տեսան : Սրբիկ իր քոյրը սիրով զրկեց և ըսաւ. «Սիրական քոյրս, համբուրէ զիս, որչափ կարօտեցիր եմ քեզի. ինչո՞ւ համար ուշացար, մեզի մոռցար» :

Սոֆիկ իր քոյրը համբուրեց. դիտեց որ երեսը քիչ մը դեղնած է, աչքերը փայլուն և մարմինը տաք, այնպէս որ կարծես թէ վրան ջերմ ունէր :

«Արդեօք հիւանդ ես, քոյրիկ, հարցուց Սոֆիկ :

— Ա՛չ, փոքրիկ մայրս :

— Ապա թէ ոչ յոդնած ես :

— Իբրեւ է որ շատ աշխատեցայ :

— Բայց հոս եղած ատենս ալ շատ կ'աշխատէիր և չէիր յոգներ . . . » :

Սրբիկ պատասխան մը չտուաւ, հապա երեսն անգին դարձուց, վասն զի շփոթեր էր :

Սոֆիկ տեսաւ այս բանս :

Այն ատեն Սոֆիկ իր քրոջը ձեռքէն բռնեց և մէկ տեղ տան ետեի կողմը գացին : Հոն էր պզտիկ պարտեղը, ուր Սրբիկ ութ օրէ ի վեր դացած չէր :

Յանկարծ յիշեց Սրբիկ իր քրոջն այն խօսքն որ միկնելու ատենն բռած էր .

«Եթէ մեր կանոնը չսրահես, մեր յափրուկն ինձի պիտի իմացընէ ի գարձիս» :

Այն ատեն Սրբիկ հասկըցաւ որ քոյրն յափրուկն բաներ պիտի հարցընէ, ասոր համար սիրտը զարնել սկսաւ :

«Բայց ինչո՞ւ համար սիրտս կ'խաղայ, կ'ըսէր ինքնիրեն, բոյսերը լեզու չունին, յափրուկը բան մը չպիտի բռէ, և քոյրս բան մը չպիտի իմանայ» :



Այսպէս ինքնիրեն խօսելով՝ սիրտը հանդարտ պահել կ'ուզէր : Վերջապէս փոքրիկ պարտիպին առջևը հասան : Վախ, վախ, ինչ տեսան, մարդարիտ, անթառամ ծաղիկները թօշներ էին, յափրուկին տերևներն ալ թափեր էին :

«Վայ, իմ խեղճ յափրուկս, պոռաց Սոֆիկ վշտադին ձայնով մը :

— Ո՛վ ըրաւ այսպէս յափրուկը, դռնէց Սրբիկ սրդողելով :

— Դու ըրիր, պատասխանեց Սոֆիկ :

— Ես մի ըրի :

— Կ'նայիմ որ դու կարդ կանոնով չաշխատեցար. դու ժամանակդ կորուսիր, և ատեն չդատար ծաղիկները խնամելու և միջատներն ալ մեր սիրածները կերեր են» :

Սրբիկ սրտադող նայեցաւ մօտէն ծաղիկները, և իրօք յափրուկին կանաչ ցօլոտներուն վրայ շատ մը թրթուրներ տեսաւ, որ՝ տերևներն ուտելէն ետեւ՝ ոտները կրծեւր վրայ էին :

«Ո՛վ իմ սիրական քոյրս, պոռաց Սրբիկ լալով, ներէ ինձ կ'աղաչեմ, որ քեզի ցաւ պատճառեցի : Իրաւ է, ըսածիդ պէս մեր կանոնն ու ժամը մոռցայ : Իրաւ է, իմ սխալ մոռնաւ ուղղել ուզեցի, և անպաշար աշխատեցայ :

— Եւ ասոր համար մեր ծաղիկներն երեսի վրայ թողուցիր . . . :

— Այո՛ :

— Եւ ասոր համար հիւանդ եղար :

— Այո՛ :

— Գոնէ պարտաւորութիւններդ կատարեցիր :

— Ո՛չ . . . » :

Սրբիկ իր ըրած սխալման վրայ շատ լացաւ. Սոֆիկ անոր զղջումը տեսնելով՝ սկսաւ զանի մտիկարել մօր մը պէս, անոր հետ լալով :

Եւ խեղճ յափրուկն՝ որ ժամանակին արժէքը ցոյց տուեր էր, այն տեղ պարտիպին մէջն էր արտում տխուր, անտերև, դրեթէ չորցած էր :

Երկու քոյրերն իրենց արտութիւնը սրբեցին, ետքը՝ առանց խօսք մ'ըսելու՝ սկսան յափրուկին թրթուրները մաքրել : Անոր ջուր առին, աղէկ խնամեցին . . . :

Արդեօք նորէն պիտի ծաղկի, սիրական զաւակներու — անշուշտ պիտի ծաղկի եթէ Սրբիկ կանոնաւոր կերպով աշխատի և իր պարտիպն ալ նայելու ժամանակ դանկ :







ԻԶ

ԿՈՒՆ ԵՒ ԳՈՐՏ

Կով մը կար՝ որ մօրուտ տեղ մը խոտ կ'ուտէր. այս մօրուտ տեղը շատ դորտեր կային: Յանկարծ կովը՝ խումբ մը դորտեր ոտքին տակը կոխեց ու բոլորն ալ ձգմեց: Մէկ հաս միայն ազատեցաւ, և ահ ու գողով իր մօրը քովը դնաց ու բաւ: «Մայր իմ, բոլոր դորտերը ստակեցան. չորս ոտքով խոշոր կենդանի մը ոտքին տակը ձգմեց:

— Խոշոր էր, հարցուց մայրը. որչափ խոշոր էր, այսչափ կ'աւր — այս բնելով դորտն սխառ ուրիշ — այսչափ, հասայ:

— Է՛յ, ըսաւ դորտիկն, շատ աւելի խոշոր էր:

— Լաւ, այսչափ է, կ'հարցընէ դորտն, ու նորէն կ'ուռի, կ'ուռի կ'սկսի:

— Ճշմարիտը, մայր իմ, որչափ ուրիշ ու տեղիս, դարձեալ այն կենդանիին չպիտի հասնիս:

Գորտն այս բնելով նորէն իր ոյժը կ'փորձէ և այսչափ կ'ուռի որ վերջապէս կ'ձալժի: Այսպէս Գորտն երբ իր շփեմէ վեր էլնելու գէտ կ'ենաստի, կ'իջարտէ:



ԻԷ

ՈՍԱՆ ԵՉՆԱԿ

Անդամ մը փոքրիկ աղջիկ մը կար որու անունն էր Ջարուհի: Այս փոքրիկ աղջիկն եղբայրներ ունէր, եղբայրներն բնիկներն ունէին, այնպէս որ երբ բոլորն ալ մեծ դաւիթը կ'հաւաքուէին, շատ զուարթ պիտի լսումք մը կ'կազմէին:

Ախրակի օր մը Ջարուհին պիտալով անոնց մէջ մտաւ ու բաւ:

«Ի՞նչ կ'աւր ինձ թէ որ ձեզի զարմանալի բան մը ցուցընեմ:

— Ի՞նչ է, ի՞նչ է, պիտալին ամենքը:

Ջարուհին որ ձեռքը թղթէ տուփ մ'ունէր, դլխուն վըրայ դրաւ որ սղայքը շարենն:



«Աեցիք, համբերէք, ըսաւ Զարուհի, հիմակ պիտի ցուցընեմ ձեզի այս հետաքրքրական բանը թէ որ չորս կողմն շարուիք առանց ձայն հանելու» :

Տղայք շուտ մ'անոր բոլորաիքը պար բռնեցին, աչքերնին մեծ մեծ բացին որ նային :

Այն ատեն Զարուհին առփը բացաւ, անոր մէջ փոքրիկ կենդանի մը կար որ անշարժ էր, «է՛հ Է՛հա՛կ մ'է՛ր» :

Այս տղոց շատն եզնակ չէին տեսած, ասոր համար սկսան մշտնէ կ'սկսէին ասոր վրայ :

«Ա՛յ, նայեցէք փոքրիկ կարմիր կենդանին» :

— Չէ՛, կարմիր չէ, դեղին է :

— Չէ՛, դեղին չէ, այն դոյնն է որ կարմիր ու դեղին գոյնով կ'շնուի :

— Նարնջագոյն, պողպայն շատ մը ձայներ :

— Հապա ի՞նչ են սա պղտիկ սև կէտերն որ մարմնոյն վրայ կ'երևին :

— Պզտիկ գնդակի պէս կ'լուր է :

— Ա՛յ, կ'լուր չէ, վարի կողմը տափակ է, ասոր համար գնդակի մը կէտն է :

— Հապա իր փոքրիկ սև գլուխն որ դուրս կ'երևէ :

— Հապա սա սև թաթիկներն որ դուքն կ'երևեն :

— Վեց հատ ունի :

— Միջոք մ'է, ըսաւ ծանր կերպով մը Ռուբէն, որ կարգաւ դիտէր ու գիւրբերէն շատ բաներ սորվեր էր :

— Ի՛նչ է միշտ մը», հարցուցին միւս աղաք :

Պզտիկ գիտունը պատասխանեց .

«Պզտիկ կենդանի մ'է որ պզտիկ հաւկիթէ մը կ'երևէ : Նախ այս կենդանին որդ մ'է, կամ ասոր մօտ բան մ'որ կախուղ է և քոյր կ'ըսուի : Քիչ մը ետքը՝ այդ բոտոսը կ'փոխուի և իր տեսակին համեմատ թիթեռնիկ, ճանճ, մարախ, եղնակ և ուրիշ բաներ կ'ըլին :

«Ներքոր կենդանին կ'շնուի, գլուխ մ'ունի որ վզին տակը կ'սահի, ասոր պէս փոքրիկ կրծանոց մ'ալ ունի որու վեց թաթիկ կ'աւծ են, ասոր պէս ունի խոշոր փոր մ'ալ, ասոր պէս : Բայց այս տեսակ միջատներ ուրիշ պարմանալի բան մ'ալ ունին . . . : Ահա նայեցէք սա երկու շիզերն որ գլխէն դուրս կ'երևեն :

— Հա՛, հա՛, ես տեսայ, ըսաւ աղայ մը, իր երկու եղջիւրներն են :

— Ասոնք եղջիւրներ չեն, պատասխանեց Ռուբէն, ասոնց անունն Խայթիկ է : Կան զիտուններ որ կ'ըսեն թէ միջատներն անով հոտ կ'առնեն :

— Կարծեմ թէ քիթ ունին, ըսաւ ընկերակից մը խօսքը կարելով :

— Բայց քիթ ալ ունին և շատ քիթ, ըսաւ Ռուբէն : Անշուշտ գիտես թէ պիծակներն ինչպէս կը հոտուրտան պառուկները . ինչպէս ճանճերն ու մըջիւններն շաքար ու աւիշիկներն կը հոտուրտան, ինչպէս մեղուները ծաղիկներուն հոտը կ'առնեն, և շատ հեռուէն :

— Իրաւ է, իրաւ է, ըսին աղայք :

— Հասցա իրենց աչքերն ուրախ սիրուն են, շարունակեց Ռուբէն, երբոր մանրագէտով նայինք . կարծես թէ իրենց ամէն մէկ աչքը շատ մը մանր մոնր աղամանկներով շնուած է : Օրինակի համար արտամանր չունին, և չեն կրնար մեղի պէս իրենց աչքը դոյնել . բայց աչքով քանաւոր ալ աղւոր բան մը չպիտի լինի :

— Բայց այս ոսկի եզնակը մնում է, ըսաւ աղեկ մը, նայէ՛, չլիքտար :

— Ինչու որ առփին մէջ օդ չունէր, պատասխանեց փոքրիկ զիտունը : Չէր կրնար շունչ առնուլ և քիչ մնաց պիտի խղզուէր . բայց հոգ չէ, հիմակ պիտի շարժի :

— Արդեօք միջատները շունչ կ'առնուն, հարցուց այս



աղջիկներէն մէկը . միթէ մեղի պէս թորեր ունի՞ն կուրծքին մէջ :

— Թորեր չունին , ըսաւ Ռուբէն , այլ իրենց մարմնոյն երկու կողմէն պղտի խողովակներ ունին , որ հոգեւոր կ'ըստուն , և ահա այս խողովակներէն կ'ընչեն : Ի՛յ , ահա իմ քրոջս խարադուը . . . :

— Ի՞նչպէս ըսիր . . . խարդ . . .

— Խաբարու՞նք , ոսկի եղնակին բուն անունն է . տե՛ս , քաշելու կ'սկսի , օգ չնչելու վրայ է :

— Այս կենդանիները չա՞ր են , հարցուց մանկիկ մը :

— Ո՛հ , չէ , չար չեն , պատասխանեց Ջարուհին , նայէսա աղւորիկ ճիճին , պղտիկ մատիդ վրայ կ'եւնէ , ինչպէս ծանր ու փափուկ կ'քալէ որ քալելը չես զգար , այնպէս չէ :

— Բայց ի՞նչ կայ իր կունակին վրայ , հարցուց փոքրիկ աղջիկ մը , ինչո՞ւ համար այսչափ փայլուն և կոր է իրիայի պատեանին պէս :

Նոյն միջոցին ոսկի եղնակն ողի առնլով բոլորովին իր կունակը վերցուց և երկու թևի պէս բաժնեց , վերջը շուտ մը թևերը դոցեց :

«Տեսէ՛ք , տեսէ՛ք , կ'բացուի , կ'բացուի , պտուղին բոլոր տղայքը : Ի՞նչ կայ անոր տակը :

— Ի՛հ , չլիտէ՛ք , պապէնա՛ւ ունեցող միջատներու տեսակէն է , ըսաւ Ռուբէն :

— Պատէ՛մ . . . պատէ՛նա . . . Ի՞նչպէս ըսիր այդ բառը , Ռուբէն :

— Պա . . . պէնա . . . Ըն ըսի , պատասխանեց Ռուբէն : Պատեալթևներն այն միջատներն են որ երկու բարակ թևեր ունին , որ երկու փոքր ամուր ծածկոցի տակ կ'ծալեն ու կ'պահեն : Լաւ , քիչ մ'առաջ տեսաք որ ոսկի եղնակն իր թևերը վերցուց . սղատեցէք , հիմակ ուրիշ բան ալ պիտի տեսնէք :

— Սո՛ւս , սո՛ւս , ըսաւ Ջարուհի , ձայն մի հանէք , նա յինք ի՞նչ պիտի ընէ . . . :

— Ոսկի եղնակն նորէն սկսե՛ր էր շարժիլ , բայց վերջապէս՝ իր ծածկոցները բանալով՝ երկու հատ փոքրիկ դորշ ու թափանցիկ թևեր դուրս հանեց որ թեթև շղարշի պէս բացուեցան , և յանկարծ թռաւ դնա՛ց :

«Վա՛յ , ըրին բոլոր տղայքը միաբերան օդին մէջ թռիլը նայելով :

— Արդեօք ո՞ր կ'երթայ այսպէս :

— Խե՛ղճ փոքրիկ կենդանի , պատասխանեց Ջարուհի , կարելի է կ'երթայ վարդերը դանելու , ուսկից այս առտու զայն առեր էի :


— Եւ ի՞նչ կ'ընէր այս վարդերուն վրայ , արդեօք վարդեր կ'ուտէ :

— Չէ , չէ , ըսաւ Ռուբէն , եղնակները չեն վնասեր ծաղիկներուն , ընդ հակառակն՝ անոնց թշամիները կ'ջնջեն : Մլուկներն են որ ծաղիկներ կ'ուտեն , և եղնակներն ալ մլուկները կ'ուտեն :

— Ուրեմն կ'ուզէի շատ ոսկի եղնակներ ունենալ մեր պարտիզին ծաղիկներուն վրայ դնելու համար :

— Իրաւ որ , ըսաւ տղոց մէջ ամենէն պղտիկը , բնաւ չէի կրնար մտքէս անցընել որ այսպիսի մանր ու տկար կենդանի մը բանի մ'օգուտ ունենայ :

— Ջարմանալի՛ բան , պատասխանեց ամենէն փոքր աղջիկը , ի՞նչ կ'կարծէիր , միթէ Աստուած միմալ մեծերուն ու զօրաւորներուն չնորհած է բարիք ընելու հաճոյքը :







ԻԸ

## ՓՈԼԻՍՏՈՓՍԵ ՏԳԱՆ

Պարոն Մեղիք քաղաքապետ էր։ Առաւ մը ձին հեծաւ որդիս զի քաղքին շրջականները պոռոյտ մ'ընէ։ Երբոր պարտիզի մը մօտ հասաւ, ձիւն վար իջաւ և ուզեց որ բոյս մը կտրէ։ Նոյն միջոյին ձիուն սանձը ձեռքէն ձղեց և ձին զլուխն առաւ ու փախաւ։ Պ. Մեղիք սկսաւ ձիուն ետեէն վազել ու անունը տալով կանչել, ձին կանկ առաւ, բայց երբոր Պ. Մեղիք մօտեցաւ, ձին պոչն օրեց ու նորէն կծիկը դրաւ։ Վերջապէս պզտիկ տղայ մ'որ մօտակայ դաշտէն ձիուն փախուստը տեսաւ, վաղեց անոր առջէն առնլու, և երբ ճամբէ մը կ'դառնար, սանձէն բռնեց և սարսեց որ Պ. Մե-

լիք դայ զայն առնէ։ Պ. Մեղիք հասաւ, ձին բռնեց և լաւ մը զիտելով տղուն կարմիր ու զուարթ գէմքն զմայլեցաւ մնայ։

Վերջն անոր ըսաւ.

«Քաջասիրտ տղաս, շնորհակալ եմ քեզի, շատ ճարպիկ ես որ իմ ձիս բռնեցիր. ի՞նչ կ'ուզես որ տամ քեզի այդ նեղութեանդ համար։

— Բան մը չեմ ուզեր, պարոն, ըսաւ տղան։

Պ. Մեղիք. — Բան մը չեմ ուզեր, զարմանալի՛ բան. շատ քիչ մարդիկ քու ըրածդ կ'ընեն։ Բայց, ըսէ ինձի, կ'աղաչեմ, ի՞նչ կ'ընէիր դաշտը։

Տղան. — Դաշտին փուշերն ու տատասկները կ'հանէի և ոչխարները կ'արածէի։

Պ. Մեղիք. — Միթէ այդ գործդ կ'սիրես։

Տղան. — Հա, շատ կ'սիրեմ, մանաւանդ այս աղւոր օդով։

Պ. Մ. — Բայց աւելի աղէկ չունիս խաղալը։

Տ. — Ըրածս ծանր գործ մը չէ. դրեթէ խաղ մ'է։

Պ. Մ. — Ո՞ր դրաւ քեզ այս գործին։

Տ. — Իմ հայրիկս, պարոն։

Պ. Մ. — Ո՞ր կ'ընակի հայրիկդ։

Տ. — Այս տեղ մօտ, վարի ծառերուն մէջ։

Պ. Մ. — Ի՞նչ է անունը։

Տ. — Թորոս։

Պ. Մ. — Ի՞նչ է քու անունդ։

Տ. — Պետրոս։

Պ. Մ. — Քանի՞ տարու ես։

Տ. — Ջատիկն տասը պիտի մանեմ։

Պ. Մ. — Ո՞րչափ ատեն կայ որ այս դաշտը կ'դանուխ։

Տ. — Առաւօտեան ժամը վեցէն ի վեր։

Պ. Մ. — Եւ միթէ անօթի չես։

Տ. — Հիմա՛կ ճաշ ընելու պիտի երթամ։



Պ. Մ. — Եթէ հիմա հարիւրնոց մ'ունենայիր ի՞նչ պիտի ընէիր :

Տ. — Ձգիտեմ : Երբեք այդչափ ստակ տեսած չեմ կենացս մէջ :

Պ. Մ. — Միթէ խաղալիքներ չունիս :

Տ. — Խաղալիքներն ի՞նչ են :

Պ. Մ. — Խաղալիկ են , գնդակը , շոնչանը , թուռլիկը :

Տ. — Ո՛չ , պարոն . բայց իմ թովմաս եղբայրս ցուրտ օդին փամփուշտներ կ'շինէ , և թռչուններ բռնելու համար ծուղակներ կ'շինենք . ասկից զատ՝ տղմին մէջ քալելու համար ոտքի յենարաններ ունիմ , նոյնպէս շրջանակ մը , որ կտրած է :

Պ. Մ. — Եւ միթէ ուրիշ բանի պէտք չունիս :

Տ. — Չէ , այդ բաներուն համար հազիւ ժամանակ ունիմ . ինչու որ շատ զբաղած եմ . ձիերը դաշտը կ'տանիմ , կովերը ներս կ'բերեմ , քաղաքը կ'երթամ բան գնելու , և ինձի համար ասոնք շատ աղւոր խաղեր են :

Պ. Մ. — Դանակ մը չէ՞ր ուզեր փայտ կտրելու համար :

Տ. — Բայց ես ունիմ մէկ հատ . աւասիկ , եղբայրս թովմաս տուաւ ինձի :

Պ. Մ. — Հողաթափներդ ծակուեր են , չէ՞ն ուղեր նոր հողաթափներ ունենալ :

Տ. — Այլրակի օրուան համար նորեր ունիմ :

Պ. Մ. — Բայց այդ հողածներդ ջուր կ'առնեն :

Տ. — Բնաւ հոգս չէ :

Պ. Մ. — Խոյրդ ալ ծակուեր է :

Տ. — Նորն ունիմ տունը . բայց եթէ չունենամ , փոյթմ չէ , ինչու որ գլուխս կ'ցաւցընէ :

Պ. Մ. — Ի՞նչ կ'ընես երբոր շատ անձրե վազի :

Տ. — Երբոր շատ անձրե դայ՝ ցանկին տակը կ'կենամ . մինչև որ անձրեը դադրի :

Պ. Մ. — Ի՞նչ կ'ընես երբոր անթմաս ճաշի ժամէն առաջ :

Տ. — Երբեմն շողգամ կ'ուտեմ :

Պ. Մ. — Բայց եթէ շողգամ չդանեն :

Տ. — Այն ատեն կըցածիս պէս կ'ընեմ . կ'աշխատիմ և անթուծիւնս կ'մոռնամ :

Պ. Մ. — Երբեմն շատ տաքէն չէ՞ն նեղանար և չէ՞ն պապակիր :

Տ. — Հա՛ , բայց բաւական առատ ջրեր ունինք այս տեղ :

Պ. Մ. — Իբաւ որ , իմ փոքրիկ տղաս , դու բոլորովին փիլիսոփայ մ'ես :

Տ. — Ի՞նչ ըսիր , պարոն :

Պ. Մ. — Ըսի որ դու փիլիսոփայ ես . բայց ստոյգ եմ որ փիլիսոփան ի՞նչ է չգիտես :

Տ. — Չէ՛ չգիտեմ , պարոն , և կարծեմ թէ հոգ չէ :

Պ. Մ. — Ամենեին հոգ չէ : Լաւ , տղաս , կ'երեւի թէ բանէ մը պէտք չունիս . ուստի ստակ պիտի չտամ քեզի որ այդպէս պարզութեամբ ապրիս : Բայց դպրոց դաջած ես բնաւ :

Տ. — Ո՛չ , պարոն . բայց հայրիկս կ'ըսէ թէ հունձքէն ետքը պիտի երթամ :

Պ. Մ. — Այն ատեն զըքի պէտք պիտի ունենաս :

Տ. — Իբաւ է , բոլոր տղայք Հեղերէն և Ատակարան մը ունին :

Պ. Մ. — Ես քեզի Հեղերէն և Ատակարան մը պիտի տամ , այսպէս ըսէ հայրիկդ , ինչու որ կ'նայիմ որ դու քիչով դո՛հ եղող բարի տղայ մ'ես :

Տ. — Պիտի ըսեմ հօրս , պարոն : Շնորհակալ եմ :

Պ. Մ. — Մնաս բարով , Պետրոս :

Տ. — Երթաս բարով , պարոն :





ԻԹ

## ԹԵԹԵՐ ԲԱՐՆԵԱՄ

Հեղինէ զիւղացիի մ'աղջիկն էր : Պղտոր օր մը փարախը գացեր էր որ հօտը տեսնէ : Տնակը գառնալու ատեն՝ ճամբուն վրայ ամիկ մը կ'տեսնէ որու մայրն հողին վրայ ձգեր էր : Խեղճ ամիկը ողորմելի ձայնով մը կ'մայէր և ցրտէն չէր կրնար ոտքի վրայ կենալ : Հեղինէ ամիկը զիրկն առաւ և կուրծքին վրայ սեղմեց որ սաքցնէ :

Այսպէս շուտ մը տունը դնաց, փոքրիկ ամիկն իր ծնողաց ցցուց և աղաչեց որ հրաման տան իրեն զայն խնամելու տան մէջ : Ծնողքը հրաման տուին : Այն ատեն Հեղինէ զնաց սապատ մը դտաւ, մէջը յարդ դնելով անկողին մը շինեց և ամիկը պառկեցուց : Վերջը քիչ մը կաթ տաքցուց և պնակով առաւ որ խմէ : Խեղճուկ ամիկն սիրով խմեց կաթը և ապա Հեղինէին ձեռքն ալ լզեց որ ուրիշ ալ տայ : Հեղինէ շատ ուրախ էր, իր տաք ձեռքով ամիկին ոտքերը տաքցուց և քիչ ատենէն տեսաւ որ ամիկը սապատէն դուրս ելնելով սենիկին մէջ կ'ցատկաւ :


Միւս օրն Հեղինէ անուն մը տուաւ ամիկին : Որովհետեւ

ոստոստող կենդանի մը կ'երեւէր՝ զայն խաբարն անուանեց : Հեղինէ թոյլ կ'տար որ իր փոքրիկ եղբայրներն ու քոյրերն անոր հետ խաղան ու փայփայեն, բայց բնաւ չէր թողուր որ ուրիշ մը արոր մօտենայ : Իսկ մեծ շան ալ ապսպրեց որ ամիկին չմտատ :

Քանի մ'օր անցնէին ետեւ խաբարն Հեղինէին ետեւն կ'երթար տան մէջ, անոր քովէն կ'ցատկաւ, գալիքը կ'երեւէր, հետը կ'արշաւէր արտին մէջ և իր ձեռքին մէջ կ'ուտէր : Երբոր գարունն եկաւ՝ Հեղինէ գառները կ'պտըտէր, ծաղիկներ կ'ժողովէր և պսակներ ընելով իր ամիկին վզէն կ'կախէր :

Բայց ամիկն իր զարգը ծամելու համար գլուխը կ'ծուէր, երբեմն ալ քիթը կ'խօթէր և սեղանի համար պատրաստուած սերը կ'ծծէր կ'ուտէր : Այս յանգիւնութեան համար ատեն ատեն ծեծ կ'ուտէր : Բայց իր տիրուհին՝ Հեղինէն՝ միշտ անոր կողմը կ'բռնէր և ամէն ըրածին աչք կ'ոցէր :

Խաչատունին եղջիւրները քիչ քիչ սկսաւ բուսնիլ և իր կղակին վարի զին մօրուք մը երեւիլ : Բաւական մեծցեր էր և





երբոր իրեն զարնող լինէր շուտ մը կռուելու համար եղջիւրները կ'անկէր : Երբեմն մանկիկը վար կ'ենաէր , ցորենն ուտելու համար սաղերուն հետ կ'կռուէր և շատ անգամ հնդկահալին հետ կ'պատերազմէր արիւթեամբ :

Տնեցիք կ'ըսէին . Խայտունն երթալով ստահակ կ'գառնայ , պէտք է զայն ճամբել կամ աւելի լաւ կ'ըլծել : Բայց Հեղինէ իր սիրականը կ'պաշտպանէր և ամիկն ալ փոխարէն զինքը կ'զոգուէր :

Հեղինէի բնական աղարակն սիրուն հովտի մը մէջ էր . քովէն վճիտ առու մը կ'անցնէր , որու ամուսնքը ծառեր տընկուած էին : Տան վերէն զարկվար մարդաղետին մը կար , և ասոր քովն ալ արօտ մ'ու կարմրադոյն թփեր և դեղին խոտեր կային : Աւելի հեռուն ցից բլուր մը կ'երևէր , որու դազաթն խորտ ու բորտ ժայռ մը կ'ըրարձրանար : Խայտունն որ ուզածին պէս կ'ըմափառէր , շատ անգամ արօտը կ'երթար և այն տեղ խոտն սիրով կ'ուտէր : Սակայն երբ որ Հեղինէ կ'զար զինք տեսնելու , Խայտուն անոր ձայնը լսելուն ցատկոտելով կ'վազէր և անոր հետ աղարակը կ'գառնար :

Ամառուան աղւոր օր մը Հեղինէ իր գործերը լմնցուց և ուզեց իր այծին հետ խաղալ . բայց չգտաւ , գուրս վաղեց , դաշտ ու արօտ փնտռեց և բարձր ձայնով կանչեց . Խայտուն , Խայտուն , յուսալով որ առաջուան պէս այծը պիտի վազէ զայ իր քովը : Բայց Խայտունը չեկաւ : Այն ատեն աւելի հեռուն դնաց , և ողորբելի ձայնով մը սկսաւ իր սիրականը կանչել . նորէն Խայտունը չերևցաւ : Հեղինէին սիրտը թունդ ելաւ . — Ո՛ր դնաց , ի՜նչ եղաւ իմ սիրական այծս . տարակոյս չկայ որ մէկը գողցած պիտի լինի , կամ կարելի է որ դրացիին շուները զայն պատառեցին : Ո՛ր իմ խեղճ Խայտունս , խեղճ Խայտունս , ա՛լ քեզ չափի տեսնեմ » : Եւ Հեղինէ սկսաւ լալ :

Նորէն ծախբայ ելաւ , չորս դին նայելով և ատեն ատեն

կ'սրտար . Խայտուն , Խայտուն , ո՛ր ես , իմ Խայտունս : Աւերջապէս հասաւ սեպածն ըլլին ստորոտը : Մաղցի վեր ելաւ որ աւելի աղէկ տեսնէ : Այծը չկար , դետինը նստաւ ու լացաւ . ձեռքերն իրարու զարնելով :

Քիչ մ'ետք՝ այնպէս կարծեց թէ իր Խայտունին մայրն ախանջին զարկաւ : Շուտ մ'ոտք ելաւ , ձայնին եկած կողմը դարձաւ , ձայնը վերէն կ'զար : Շատ փնտռելէն ետե՛ս սուր ու ցից ժայռի մը վրայ տեսաւ իր Խայտունն որ չորս կողմը կ'նայէր : Իր թևերը բացաւ Հեղինէ և սկսաւ սրտալ , կամացուկ մը որպէս զի կենդանին չվախնայ և իրեն գառնալու եռանդով վար չցատկի և ոտքը չկոտրի :


Բայց այդպիսի վտանգ մը չկար : Խայտուն լեռներու թարմ օդը կ'ծծէր և իր առջև եղած աղւոր տեսարանները կ'վայելէր : Իր մայրն ու բախտութեան նշան մ'էր . ուստի իր բարեսիրտ տիրուհիին ոչ ձայնին ականջ դրաւ և ոչ անոր հրաւերն ընդունեց : Հեղինէ աւելի վեր ելաւ և աւելի բարձր ձայնով Խայտունը կանչեց . բայց պարսպ տեղը կանչեց : Խայտունն ժայռէ ժայռ կ'ցատկէր , քարերուն ճեղքուածքին մէջ բուսած բարակ խոտը կ'ուտէր և այս նոր ազատ կեանքը վարելուն չափէն աւելի ուրախ ու զուարթ էր :

Խեղճ Հեղինէն այն տեղ սպասեց , սպասելէն ձանձրացաւ և ապա տրտում տխուր աղարակը դարձաւ որ իր գծրաղու թիւնը պատմէ : Իր եղբայրներն առաւ հետն ու նորէն բլուրը դնաց որ այծը բռնեն , ճերմակ հացի կտոր մը և քիչ մը կաթ ալ հետն առաւ որ փոքրիկ թափառական հրապուրէ և տունը բերէ : Բայց չարաճճի այծն աւելի բարձր տեղեր և տունը բերէ : Բայց չարաճճի այծն աւելի բարձր տեղեր ելաւ և իրեն պէս խումը մ'ընկերներ զանելով կ'ցատկաւորէր ու կ'զուարճանար : Խայտունն իր հին բարեկամները բոլորովին մոռցեր էր , անոնց համար ոչ աչք ունէր և ոչ ականջ : Հեղինէ տուն դարձաւ , թէ բարկութենէ և թէ տրտութենէ կ'լար : « Ապաշնորհ փոքրիկ կենդանին նայէ ,



կ'ըսէր խեղճ աղջիկը, որչափ շատ կ'սիրէի, որչափ աղէկ կ'խնամէի, ի՞նչպէս թողուց զնաց իմ քովէս. բայց զխանձ միշտ թափառաւէր կենդանի մ'էր» :

Այն ատեն մայրն ըսաւ. «Հեղինէ, աղջիկս, այսուհետեւ նայէ որ Բափախանն ու Բէ՛՛՛՛ն արարածներու սէր չկապեն» :



Լ

# ՍՇԽԱՏԱՍԷՐ ՏՂԱՆ

Խեղճ որբեալի կին մը կար որ շարունակ կ'մանէր ու կը տատէր որ իր և փոքր աղուն պիտոյքը հոգայ : Այս կինը կարգալ չգիտէր, բայց կ'ուզէր որ իր որդին Մանուկը՝ կարգալ սորվի. ուստի զանի գպրոց կ'ըրկէր : Մանուկ ամէն ջանք ըրաւ և քիչ ատենէն լաւ կարգալ սորվեցաւ :

Երբոր տասն երկու տարին մտաւ, իր մայրը ծանր հիւանդութիւն մը քաշեց և անդամալոյժ եղաւ, այնպէս որ բոլոր օրն անկողին կ'նստէր և բան զորձ չէր կրնար ընել :

Արովհետեւ Մանուկին մայրը պահառնի ստակ չունէր, չէր կրնար սպասուհի բռնել վարձով որ տունը մաքրէ, կամ իրեն համար աշխատի, քանի որ ապիկար էր : Միայն խեղճ պառաւ կին մը, որ գրացին էր, ատեն ատեն կ'երթար որ անոր օգնէ և մանր մունր գործերն ընէ : Բայց տկար կնկան միակ յոյսն ու օգնականն իր որդին Մանուկն էր : Մանուկ ինքն իրեն կ'ըսէր .

«Չպիտի թողում որ մայրս կարօտ ու չքաւոր մնայ : Ա»



նոր համար պիտի աշխատիմ, պետք եղածը պիտի ճարեմ: Յուսամ որ Աստուած պիտի օրհնէ զիս և իմ գործս պիտի յաջողցնէ»:

Ուստի Մանուկ քաղքին մէկ գործարանը դնաց և գործ դատ: Ամէն օր գործարանէն չէր պակսեր և անդուլ կ'աշխատէր, և շարաթ օրերն իր օրողչէքը խեղճ մօրը կ'տանէր կ'տար: Առաօտ կանուխ կ'արթնար, և գործի չղացած՝ մօրը սենեակը միշտ կ'մաքրէր, և նախաճաշէկը կ'սրարատտէր, որպէս զի իր բայակայութեան ատեն մայրը չնեղանայ և զրկանք չքաշէ:

Այս բարի գաւակը կ'մտածէր որ եթէ մայրը կարգալ գիտնար կրնար ժամանակն անցընել և մինակ եղած ատենը զուարճանալ: Ուստի շատ աշխատելով մօրը կարգալ սորվեցուց: Մայրը չափազանց դոհ եղա:

«Հիմակ, կ'ըսէր խեղճ կինը, շատ երջանիկ եմ: Իբաւ է որ անկողնէս չեմ կրնար ելնել և աշխատիլ, բայց կրնամ Ատակարան կարգալ և այս բանս ինձի համար մեծ մխիթարութիւն մ'է: Իբաւ որ շատ բարի և օրհնեալ զաւակ մը ունիմ և շարունակ կ'աղօթեմ Աստուծոյ որ անխորձ պահէ զանի, երկայն կեանք պարգևէ և բունածը ոսկի ընէ»:



ԼՍ.

ԵՐԼՈՒ ԾԱՌ.

Հարուստ հողագործ մը երկու որդի ունէր, մէկը միւսէն մէկ տարու պզտիկ էր: Երկրորդ որդւոյն ծնած օրը՝ իր այգեստանին զրան առջև երկու նորարոյս խնձորենի տնկեց, որ նոյն բարձրութիւնն ունէին, և նոյն խնամքը տարաւ երկուքին վրայ ալ, այնպէս որ երկուքն ալ հաւասար մեծցան և բնաւ իրարմէ տարբերութիւն չունէին:

Երբոր իր երկու որդիքը պարտիզէ գործիքներ գործածելու կարող եղան՝ հայրը՝ զարնան աղւոր օր մը, երկուքն ալ կանչեց և այն երկու ծառերը տարաւ ցցուց: Այս ծառերն անոնց համար տնկէր էր և անուննին դրեր էր: Տղայք զմայլեցան տեսնելով այդ ծառերուն զեղեցիկ ճիւղերն ու բողբոջները: Այն ատեն հայրն ըսաւ.

«Իմ սիրելի որդիքս, այս ծառերը ձեզի կ'պարգևեմ, կը նայիք ի՞նչ լաւ վիճակի մէջ են: Եթէ հող տանիք աւելի



պիտի ծաղկին ու պտուղ բերեն, եթէ անհոգ մնաք պիտի չորնան» :

Կրտսեր տղան որ Երուանդ կ'ըսուէր՝ շատ ճարպիկ էր : Դուռ մը գործի սկսաւ, հողը փորեց մաքրեց, որ արեն արմատին զարնէ, ծառին վրայի միջատները ջնջեց, ջրեց և խնշակներ դրաւ բունին ու ոստերուն որ ծուռ չըլտնին :

Իսկ իր Մովսէս եղբայրն, անոր պէս չըրաւ, իր ժամանակը խաղալով անցուց, իրեն պէս ծոյլ ընկերներու հետ, իր ծառն երեսի վրայ թողուց, փոյթ չըրաւ, մինչև որ օրին մէկն՝ աշնան, դիպուածով Երուանդին ծառը տեսաւ. կարմիր խնձորներով լեցուն էր և այնպէս ծանրացած որ եթէ խնշակները չլինէին, որոնք ճիւղերը բռներ էին, անշուշտ պտուղներուն ծանրութենէ ծառը գետինը պիտի ծւէր : Այս սքանչելի ծառին վրայ զմայլելով, Մովսէս իր ծառը միաբլր բերաւ և վաղեց դնաց յուսալով որ իրն ալ այնչափ առատ պտուղներ պիտի ունենայ. բայց որչափ զարմացաւ երբ տեսաւ որ պտուղ չկար, այլ լոռուս ոստեր և քանի մը հատ գեղնած տերեւներ :

Այն ատեն սիրտը նեղացաւ, նախանձը բռնեց և շիտակ իր հօրը վաղեց որ գանդատի :

«Հայր իմ, ըսաւ, իմ ծառս եղբօրս ծառին պէս աղւոր չէ, աւելի կոթին պէս չոր է, և տառը հատ խնձոր անգամ պիտի չստանամ : Եղբօրս ըսէիր որ իր խնձորներուն կէսն ինձի տայ» :

— Ինչո՞ւ կէսը քեզի տայ, ըսաւ հայրը. ինչո՞ւ համար աշխատասէրն ծոյլը կերակրելու համար իր աշխատանքը կորսնցընէ : Գոհ եղիւր քու բաժինովդ. քու անհոգութեանդ արդիւնքն է այդ. և իրաւունք չունիս դիւ մեղադրելու, եղբօրդ առատ պտուղները տեսնելով : Քու ծառդ ալ անոր ծառին չափ ստղաբեր էր, անոր ծառին չափ բողբոջներ ու ծաղիկներ ունէր, նոյն հողին վրայ կ'աճէր, միասի նոյն

խնամքը չստացաւ : Երուանդ իր ծառը մաքրեց, ճճիները ջարդեց, բայց դու թող տուիր որ անոնք քու ծառիդ բողբոջներն ուտեն :

«Որովհետեւ չեմ ուզեր որ Աստուծոյ տուածն աւրուի, ծառդ ձեռքէդ պիտի առնեմ, անունդ վրայէն պիտի հանեմ և եղբօրդ պիտի տամ որ կենդանութիւն առնէ իր խնամքը : Եւ այս վայրկենէս այդ ծառն և բերելիք պտուղներն անորն են : Եթէ կամիս դնաւ ուրիշ մ'ընտրէ առ, մեծցուր և առջի սխալմունքդ ուղղէ. բայց եթէ առնելիքդ ալ երեսի վրայ թողուս, այն ալ եղբօրդ պիտի յանձնեմ քանի որ ինձ կ'օգնէ աշխատելու ատենս» :

Մովսէս իր հօրն ըսածները շատ իրաւացի դտաւ : Աւտի մէկէն գնաց ծաղկոյն և ամենէն ընտիր խնձորներն առաւ որ անկէ ու խնամէ : Երուանդ անոր օգնեց, նայելու կերպը սորվեցուց և Մովսէս ամէն ճիւղ թափեց որ իր նորատունկ ծառը ծաղկի : Ամէն խաղ մէկ դի թողուց, իր չար ընկերները մոռցաւ և ուրախ զուարթ գործը շարունակեց : Երբոր աշունն եկաւ՝ Մովսէս յետին ծայր հաճոյք զգաց տեսնելով որ ծառն ուղածին պէս առատ պտուղներ բերեր էր : Այսպէս Մովսէս աշխատութենէ երկու մեծ օդուտ քաղեց, նախ առատ և ընտիր պտուղներու հունձը մ'ունեցաւ, երկրորդ իր վատ սովորութիւններն ուղղեց :

Իր հայրն այնչափ ուրախացաւ այս փոփոխութեան վրայ, որ հետեւեալ տարին փոքրիկ մրգաստանի մը բերքն երկու եղբարց մէջ բաժնեց :







ԼԲ

## ԲԱՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՍԸ

Պոմիտաս բարի տղայ մ'էր, այլ բաւական պարզմիտ : Հին մակ անոր վրայ պատմութիւն մը պիտի ըսեմ :

Պոմիտաս եօթը տարի տիրոջ մը քով ծառայութիւն ըրեր էր : Օր մ'անոր ըսաւ .

«Պարոն, իմ ժամանակս լնցաւ, ալ իմ մօրս քովը կ'ուզեմ դառնալ, կ'աղաչեմ իմ տարեկան վարձքս վճարէ» :

Պոմիտասի տէրը պատասխանեց .

«Տղայ, դու ինձի հաւատարմութեամբ ծառայեցիր : Քու վարձքդ մեծ պիտի լինի» : Եւ որովհետեւ այն ատեն դրամը հազուադիւրէն էր, արծաթի ձոյլ մը առաւ Պոմիտասին որ իր գլխուն չափ մեծ երեցաւ իրեն :

Պոմիտաս գրպանէն թաղկինակ մը հանեց, ձոյլը փաթեց, գաւազանի մը ծայրը կախեց ու ուրը զարնելով ճամբայ ելաւ :

Շատ քաղելէն ետե՛կ Պոմիտաս ճամբուն վրայ ձիաոր մը տեսաւ որ ուժեղ ձիու մը վրայ կ'վազվզէր :

«Ի՞նչ աղոր բան է, ըսաւ Պոմիտաս, ձիով ճամբայ ընելը : Կարծես թէ ձիաորն աթոռի մը վրայ նստած է, ոտքը գայլախաղներու չղարներ, չյոգնիր, հողաթափները չեն հիննար, և աւելի շուտով կ'քալէ քան թէ հետիոտն» :

Ձիաորն Պոմիտասին այս խօսքը լսեց ու իր ձին կեցուց :

«Ինչո՞ւ համար այդպէս ոտքով կ'երթաս, ըսաւ անոր :

— Ի՞նչ ընեմ, պատասխանեց Պոմիտաս, ծնողացս կը տանիմ այս խոշոր ձոյլը : Իրաւ է որ արծաթ է, բայց բաւական ծանր է և ուսս կ'կոտրէ :

— Եթէ կ'ուզես, ըսաւ ձիաորը, եկուր փոխենք. ես քեզի իմ ձիս տամ, դու ալ ինձի ձոյլդ տուր :

— Բոլոր սրտովս, պատասխանեց Պոմիտաս. բայց բեռդ բաւական ծանր պիտի լինի, այժմէն կ'ըսեմ քեզի» :

Ձիաորը վար իջաւ և արծաթի ձոյլն առաւ. ապա Պոմիտասին օգնեց ձին հեծնելու և սանձն անոր ձեռքը տալով ըսաւ. «Հիմակ, եթէ կ'ուզես շուտ երթալ, միայն լեզուդ շաչէ և հօգ, հօգ ըսէ» :

Երբ Պոմիտաս ձի հեծաւ ուրախութենէ կ'թուէր : Քիչ մ'ետք՝ աւելի շուտ երթալու փափաքելով, սկսաւ լեզուն շաչել և պոռալ. հօգ, հօգ : Ձին անմիջապէս սկսաւ վազել, և Պոմիտաս դեռ իր կշիւը չդատած՝ ճամբուն ծայրը փոխի մը մէջ ընկաւ :


Ձին անդադար կ'վազէր, բայց դիւզացի մը գիմնայէն դառնով զայն կեցուց, մինչդեռ իր առջեւէն կով մը կ'քշէր :

Պոմիտաս երեսը կախեց, հեծծեծելով գետնէն ելաւ և դիւզացիին ըսաւ .

«Աւասիկ անդգամ կենդանի մ'որ դիս դետիրն նետեց, և քիչ մնաց վիզս պիտի կոտրէր : Աշխարհ մէկ քով դայ՝ նոքէն չեմ հեծներ վրան : Ի՞նչ հանդարտ է քու կովդ, մնաս



Հհայրներն և ամէն օր կաթ, կարագ, պանիր կը տայ : Ո՛ր-  
չափ բազում որ պիտի լինէի եթէ այդպիսի կով մ'ունենայի » :



Գիւղացին պատասխանեց Աոմիտասին .

« Բանի որ աչք ունիս իմ կովիս , առ և անոր տեղն ինձի  
ձիդ տուր » :

Աոմիտասին ուրախութիւնը չափ չունէր : Հուտ մը ձին  
տուաւ և գիւղացին վրան հեծնելով արագօրէն մեկնեցաւ :

Աոմիտաս ալ կովին առջևէն կ'ըջէր հանդարտիկ , ըրած  
պատուական սակարկութեան վրայ մտածելով :

« Թէ որ միայն հացի կտոր մ'ունենամ , անօթութենէ չեմ  
մեռնիր , ինչու որ միշտ կարագ պանիր պիտի ունենամ ա-  
նոր հետն ուտելու : Իսկ եթէ ծարաւնամ , կովս կ'կթեմ ,  
կաթը կ'խմեմ : Մարդ ասկից աւելի ի՞նչ կ'ուզէ » :

Աոմիտաս ճամբուն վրայ պանդոկ մը մտաւ որ քիչ մը հան-  
գիստ ընէ և ուրախ զուարթ կերաւ իր հեան առած ուտե-  
լիքը : Իր գրպանին մէջ քանի մը զրուշ ունէր , զաւաթ մը  
քարեջուր բերել տալով ակործանօք խմեց , ապա իր կովին  
պուաւ և ճամբան շարունակեց : Բայց կէսօր մօտ էր , քիչ

քիչ տաքը , կ'սաստկանար . Աոմիտաս ընդարձակ դաշտի մը  
մէջ կ'դառնէր , ջրի համար կ'սպասակէր , բայց այն տեղ  
ջուր չկար : Ուստի մտքովն ըսաւ .

« Հիմակ կովս կ'կթեմ և բաժակ մը կաթ խմելով պապակս  
կ'անցընեմ » :

Աոմիտաս իր կովը չոր ծառի մը կոճիւն կապեց . և որով-  
հետեւ գոյլ կամ թաս չունէր , խորն երկնցուց : Պարագ տե-  
ղը կովուն տախքը կ'սղմէր , ինչու որ և ոչ կաթիլ մը կաթ  
իր մատերուն ծայրն չերեցաւ : Այս բաւական չէր , Աոմի-  
տաս կթել չգիտնալուն՝ անհամբեր կենդանին այնպիսի կից  
մը տուաւ անոր գլխուն որ գետինը փռեց և Աոմիտաս բա-  
ւական ատեն այսպէս պառկած մնաց անկենդան :

Բարեբաղդաբար անկից մնացործ մ'անցաւ , որ պղտիկ սոյ-  
լակի մը վրայ խոճկոր մը կ'ըջէր . մնացործն շուտ մը Աո-  
միտասին օգնութեան հասաւ և զանի գետնէն վերցուց :

Աոմիտաս պատմեց մնացործին բոլոր գլխէն անցածները :  
Մտաւաճառն բաժակ մը զարեջուր տուաւ անոր ըսելով .

« Տեսէ՛ այս բաժակն որ խելքդ գլուխդ գայ : Այս կովը  
քեզի կաթ տալիք չունի . ծեր կենդանի մ'է , պէտք է մի-  
այն սպանդարանը տանիլ մորթել ու միսն ուտել » :

Աոմիտաս սաստիկ վշտացաւ ու պոռայ .

« Որո՞ւ մտքէ կ'անցնէր այս բանս . անշուշտ կովս մորթո-  
ղին միս պիտի տայ , բայց ես կովն միսը չեմ սիրեր , աղւոր  
համ չունի : Է՛յ , թէ որ այդ քու խոճկորիդ պէս խոճկոր  
մ'ունենայի , այդ ուրիշ խօսք . այդ աղւոր բան է , հապա  
եւրջիկը » :

— Մտիկ ըրէ , Աոմիտաս , ըսաւ մտաւաճառը . քու սի-  
րոյդ համար յանձն կ'առնեմ իմ խոճկորս կովիդ հետ փո-  
խելու :

— Ատուած մուրադդ տայ , պատասխանեց Աոմիտաս ,  
և իր կովը մտաւաճառին տուաւ : Այն ատեն մտաւաճառը




դետինը դրաւ խոճկորը և անոր վզէն կապուած չուանը կոմիտասին ձեռքը տուաւ :

Կոմիտաս իր ճամբան շարունակեց մտածելով թէ որչափ բաղդաւոր է, վասն զի երբոր իր առջէն արգելք մ'ենէր շուտ մ'այդ արգելքը կ'վերնար :

Ճիշտ այն միջոցին տղայ մը կ'անցնէր որ իր թևին տակ աղւոր ճերմակ սաղ մը կ'տանէր :

Կոմիտաս ու տղան իրարու բարի լոյս բոն և խօսքի բըռնուեցան : Կոմիտաս իր ըրած փոխանակութիւնները պատմեց, տղան ալ ըսաւ թէ սաղ մը կ'տանէր տուն մ'ուր կնուէր կար :

«Նայէ՛, կ'ըսէր նա, անոր թևերէն բռնելով, նայէ՛ որչափ ծանր է : Իբրաւ է որ երկու ամսէ՛ ի վեր զայն կ'զիւրցնեն, ո՛վ որ այս սաղին խորտիկն ուտէ պիտի տեսնէ որ եղերը բերնին երկու կողմէն պիտի վազին :



— Հա՛, ըսաւ Կոմիտաս, սաղը վերցնելով ձեռքը, բա՛ւական ծանր է, բայց իմ խոզս ալ իր արժեքն ունի» :

Տղան սկսաւ իր գլուխն օրել և աչքը չորս զին էր :

«Մտիկ ըրէ, ըսաւ, այդ խոզը կասկածելի ապրանք մը կ'երևի ինձ : Հիմակ գեղէ մ'անցայ, դիւղապետին խոզը զոզցեր էին ախոռէն. կ'վախնամ, շատ կ'վախնամ որ գողցուած

խոզն այդ չլինի : Գիւղապետն ասդին անդին մարդ հանեց որ զայն փնտռեն, եթէ քեզ գտնեն այդ խոզիդ հետ, շատ կարելի է որ քեզ բանտ նետեն» :

Կոմիտաս սկսաւ վախէն դողդողալ :

«Վա՛յ գլխիս, Աստուած իմ, գլխիս իմ վրայ : Բան մը կայ միայն ընելու, ա՛ռ իմ խոզս և քու սաղիդ ինձ տուր :

— Մեծ վտանգի պիտի հանդիպիմ, պատասխանեց տղան, բայց եթէ քեզի փորձանք մը գայ, չեմ ուզեր որ ես պատաճառ լինիմ» :

Եւ շուտ մը չուանն առնլով, խոզը դաղանի ճամբէ մը տարաւ, այն միջոցին որ Կոմիտաս, որ ալ վախ չունէր, սկսեւ էր իր գիւղին ճամբան բռնել՝ սաղը թևին տակն առնելով :

«Եթէ աղէկ մտածեմ, կ'ըսէր Կոմիտաս ինքն իրեն, այս փոխանակութիւնն ինձի շահաւոր եղաւ : Նախ՝ լաւ խորտիկ մը պիտի ունենամ, ասկէ զատ՝ անկից ելած եղով երեք ամիսուան ճարպ պիտի պահեմ. վերջը, անոր ճերմակ փետուրներով բարձ մը պիտի շինեմ և անոր վրայ գլուխս դնելով հանգիստ պիտի քնանամ, առանց օրօրի պէտք ունենալու» :

Կոմիտաս իր դեղը չհասած՝ ուրիշ գեղէ մ'անցաւ և յետանիչ մը տեսաւ, որ յետանը դարձընով՝ ուրախ զուարթ երգ մը կ'երգէր :

Կոմիտաս կանկ առաւ որ յետանիչը լաւ մը դիտէ, և վերջապէս անոր ըսաւ .

«Ա՛նայիմ որ ուրախ զուարթ ես, կ'երևի որ այդ արուեստդ շահաւոր արուեստ մ'է :

— Այո՛, պատասխանեց յետանիչը, ոսկի բերող արուեստ մ'է : Լաւ յետանիչ մը միշտ իր դրպանը դրամ կ'ունենայ : Բայց այդ սաղն ո՛սկից ծախու առիր :

— Ծախու չառի, իմ՝ խոզիս հետ փոխեցի :



- Հասկա խոզը :  
 — Առվիս հետ փոխեցի :  
 — Հասկա կո՞նն :  
 — Ձիուս հետ :  
 — Հասկա ձի՞ն :  
 — Իմ զլխուս չափ խոշոր արծաթի ձոյլի մը հետ :  
 — Հասկա արծաթի ձոյլը :  
 — Իօթը տարուան ծառայութեանս վարձքն էր :  
 — Ա՛նայիմ որ, ըսաւ յեսանիչը, միշտ ճարպիկութեամբ  
 դործ տեսեր ես : Հիմակ կ'մնայ քեզ միջոց մը դտնել որ  
 քսակդ միշտ լեցուն լինի, այն ատեն ըտլորովին երջանիկ կը  
 լինիս :  
 — Բայց ի՞նչ ընելու է, հարցուց Առնիտաս :  
 — Պէտք է որ ինձի պէս յեսանիչ դառնաս : Ասոր հա-  
 մար բաւական է միայն սրելու քար մ'առնուլ. մնացածն  
 ինքնին կարգի կ'դրուի : Քար մ'առնիմ որ քիչ մը հին է,  
 երաւ, բայց կրնամ պղտիկ բանով մը քեզի տալ. օրինակի  
 համար, սաղիդ տեղ : Ա՛ռվե՛ս առնուլ :  
 — Ա՛հարցընես, ըսաւ Առնիտաս, աղկից աւելի աղւոր դործ  
 կո՞նն : Կրող տանի իմ հողերս երբոր քսակս միշտ ոսկիով  
 լեցուի :  
 — Առնիտաս քարն առաւ և սաղը տուաւ :  
 Յեսանիչն իր ոտքին քով գտնուած հասարակ դայլախով  
 մ'առնելով. «Ահա, ըսաւ, ուրիշ լաւ քար մը կ'տամ քեզի  
 եւելօք. որչափ կ'ուզես զարկ վրան. կրնայ հին մուճակներդ  
 նորոգելու ծառայել : Այդ դայլախազն ալ առ գ'նա՛» :  
 — Առնիտաս դայլախազն առաւ և ուրախ զուարթ ճամբայ ե-  
 լաւ :  
 «Տէ՛ր վկայ, պուռայ Առնիտաս, բաղդաւոր ծնած եմ.  
 ինչ որ վախարիմ կ'կատարուի, կարծես թէ վարդի ամսուն  
 աշխարհ եկած եմ՝» :

Ուստի Առնիտաս սկսաւ քաշել. և որովհետեւ առտուրնէ  
 'ի վեր ոտքի վրայ էր՝ սկսեւ էր յողնել : Նոյնպէս սաստիկ  
 անօթի էր ու ծարաւի. դժուարութեամբ կ'քաշէր և ամէն  
 քայլին կ'կենար : Յեսան մը և գայլախազ մ'իրեն համար  
 ծանր բեռ մ'էին. մտածեց որ աւելի երջանիկ պիտի լինէր  
 եթէ շալակը բան մը չուենար :

Առուակի մը մետ եկաւ : «Քիչ մը նստիմ, ըսաւ, հանգ-  
 չիմ, և քիչ մը ջուր խմիմ որ զովանամ» :


Եւ որպէս զի չվիրաւորեն զինքը քարերը, իր քովը գրաւ  
 զանոնք՝ առուակին եզերքը : Վերջը փորի վրայ պալով դլուխ  
 երկնցուց որ խմէ :

Բայց խմելու ատենը, յանկարծ չուզելով քարերն հրեց  
 որ առուակին խորն ընկան :


Առնիտաս տեսնելով որ քարերն աներեղոյթ եղան, ուրա-  
 խութենէ սկսաւ ցատկըտել :

«Ի՞նչ երջանկութիւն, ըսաւ, վերջապէս այս ծանր բե-  
 ուէն ազատեցայ և ես յանցանք մը չունիմ : Աշխարհիս երեսն  
 իզմէ աւելի բաղդաւոր մարդ մը չկայ» :

Եւ բաղդաւոր Առնիտաս իր ճամբան շարունակեց արագա-  
 շարժ և մինչև մօրը տունը հասաւ, աւանց ուրիշ արկածի  
 մը հանդիպելու, գոհ սրտով, թեթեւ ոտքով և պարապ ձեռ-  
 քով :







ԼԳ.

## ԻՐ ՎԵՊԵՐԻՆ ԳՈՒ ՀՈՎԻՐ ՏՂԱՅ ՄԷ

Փոքր աղայ մը կար որ հովիւ էր և անունը Սահակ : Օր մ'իւր հօտը լեռը տարաւ արածելու . յանկարծ իր ոչխարներէն մէկը կորսնցուց , ուստի խիտ անտառ մը մտաւ որ զանի փնտռէ : Այս անտառին մէջ մարդ մը տեսաւ որ թփի մը տակ պտուկեր էր : Այս մարդը շատ յոգնած կ'երևէր և հասնել շունչ կ'առնէր կ'տար :

«Պզտիկ հովիւ , ըսաւ մարդը , կ'մնանիմ , շատ անթիմ ու ծարաւ եմ : Երէկ այս ամայի լեռն եկայ որսի : Ճամբաս կորուսի և դիշերն այս անտառն անցուցի» :

Սահակ իր կողովէն հաց ու պանիր հանեց և այս մարդուն տուաւ :

«Ա՛յր , ըսաւ անոր , և ապա ելիւ իմ ետեւէս եկուր . քեզ հին կաշիի մը մօտ պիտի տանիմ , որու կաճիկն մէջ միշտ ջուր կ'գտնուի» :

Որսորդը կերաւ , ետքը ելաւ և Սահակին ետեւէն գնաց , ջուր խմեց , ծարաւն անցուց : Ա՛յրջն Սահակ մարդն առաւ և լեռնէն հեռու տեղ մը տարաւ :

Այն տունն որսորդն ըսաւ հովիւ տղուն .

«Սիրուն տղայ , իմ կենանքս աղատեցիր : Եթէ ժամ մը աւելի մնայի նոյն վիճակին մէջ , անշուշտ պիտի մեռնէի : Ա՛յրջեմ իմ երախտադիտութիւնս ցոյց տալ : Ինձի հետ եկուր քաղաքն երթանք . ես հարուստ մարդ մ'եմ և քեզ որդւոյս պէս պիտի նայիմ :

— Ո՛չ , ըսաւ տղան , ես քեզի հետ քաղաքը չեմ երթար , մայր ու հայր ունիմ որ շատ աղքատ են , բայց զիրենք կ'սիրեմ : Եթէ դու թաղաւոր մ'իսկ ըննէիր , քեզի համար հայրս ու մայրս չպիտի թողուի :

— Բայց , ըսաւ որսորդն , դու ողորմելի անակի մը մէջ կ'ընակիս , ես պալատ մը կ'նստիմ , որ մարմարէ փառաւոր սիւներով զարդարուած է : Բիւրեղեայ բաժակներով պիտի խմես բմպելեք և արծաթէ պնակներու մէջ ընտիր կերակուրներ պիտի ուտես» :

Հովիւ տղան պատասխանեց . «Մեր տնակը կարծածիդ չափ ողորմելի չէ : Եթէ մեր անակին չորս դին մարմարէ սիւներ չկան , պտղաբեր ծառեր կան : Յստակ ջուր կ'իմանք , մօտակայ աղբիւրէն առնելով . մեր աշխատանքով մեր պարզ կեանքովը կ'ճարենք և այս կերակուրը մեզի կ'ըստէ . և եթէ մեր տան մէջ արծաթ չունինք , բիւրեղ և մարմար չունինք , ծաղիկներ ունինք» :

Որսորդը նորէն ըսաւ . «Տղայ , տրի ինձի հետ եկուր , մեր քաղաքն ալ ծառեր ու ծաղիկներ ունինք : Փառաւոր պարտէզ մ'ունիմ , ուր շիտակ խիտ ծառաւղիներ կան , նոյնպէս աճու մրկայ որ անդին բոյսեր կ'պարունակէ : Այս պարտիկին մէջ շքեղ շատրուան մը կայ . երբեք ասոր ճամնքան մը տեսած չես . ջուրը վեր կ'ցատկէ և փրփրալով վաբ



կ'իջնէ ու սպիտակ մարմարէ աւազանի մը մէջ կ'իծափի :

— Մենք՝ մեր անտառներուն մէջ երջանիկ ենք, ըսաւ տղան : Մեր անտառներուն հովանիներն գէթ այնքան զմայլելի են որչափ ձեր փառաւոր ծառուղիներուն ստուերները : Մեր դալարի մարգերն տեսակ տեսակ ծաղիկներով զարդարուած են : Մեր տնակին բոլորտիքն ալ ծաղիկներ կան, վարդեր, մանիշակներ, շուշաններ, Միթէ կարծես թէ մեր առուններն ձեր շատրուաններուն չափ աղւոր չեն : Ո՛րչափ կ'ախորժիմ տեսնել այդ առուններն որ եռալով ժայռերուն խռուշներէն կ'բղկին, կամ բլուրներէն կ'հոսին և ապա կ'երթան ծաղկաւետ արօտներու մէջ կը սողոսկին :

— Ո՛ր տղաս, չես դիտեր թէ ի՞նչ մեծ բաներ կ'մերժես, ըսաւ որսորդը : Քաղաքը շքեղ զպրօցներ կան, ուր ամէն տեսակ գիտութիւններ պիտի սորվեցնեն տամ քեզի : Թատրոններ կան ուր ճարտար երաժիշտներ դաշնակաւոր ձայներով ականջներդ պիտի զմայլեցնեն : Ծոխ սրահներ կան ուր սքանչելի հանդէմներու ներկայ պիտի դառնաս :

— Ո՛չ, պատասխանեց հովիւ տղան, ես չպիտի դամ քաղաքը քեզի հետ : Մեր գեղին դպրոցն ինձի պէտք եղածը կ'սորվեցնեն : Մանաւանդ կ'սորվեցնեն ինձ Աստուծոյ վախնալ, ծնողքս պատուել, անոնց առաքինութեանց հետեւիլ : Աւելի բան չեմ ուզեր սորվիլ : Զեր երաժիշտները սոխակէն ու ջիկահաւէն աւելի լաւ կ'երգեն : Մենք ալ մեր հանդէսներն ու դաշնակներն ունինք : Ո՛րչափ երջանիկ ենք կիրակի օրերը, երբոր ընտանեօք կ'հաւաքուինք, և ծառերու հովանիին ներքեւ, կարկաշատահ առուակի մ'ափունքը կ'նըստինք : Իմ քոյրս կ'երգէ, ես անոր կ'ձայնակցիմ սրինգովս. մեր երգերն հեռուն ձայն կ'տան, արձալանքը կ'կրկնէ, և մեր մայրն ու հայրն, մեր երգերը լսելով երջանիկ կ'լինին և անուշ ժպիտով մը մեզի կ'նային : Ո՛չ, քեզի հետ քաղաքը չպիտի երթամ :

Այն ատեն որսորդը տեսաւ որ չպիտի կրնայ համոզել հովիւ տղան հետը յնալու : «Ուրեմն ի՞նչ պիտի տամ քեզի իմ երախտազիտութիւնս յայտնելու համար : Առ սա քսակն որ ոսկւով ու արծաթով լեցուն է :

— Ես ի՞նչ պէտք ունիմ՝ այլ ստակէն : Մենք աղքատ ենք, բայց բան մը չպակսիր մեզ. եթէ այդ ստակն ընդունիմ, քեզի ըրած ծառայութիւնս ծախած պիտի լինիմ : Այս աղւոր բան չէ : Մայրս եթէ իմանայ այս վարմունքս զիս պիտի պարտաւէ : Այն միթէ ըսած չէ՞ ինձ որ պարտաւոր ենք ներդրութեան մէջ գտնուող մարդիկը խնամել առանց շահի մը սպասելու :

— Ուրեմն ի՞նչ տամ քեզի, սիրուն տղայ : Պէտք է որ բան մ'ընդունիս, թէ ոչ սիրտս պիտի վշտացնես :

— Լաւ ուրեմն, տուր ինձ այդ սրուակն որ քովստի կախեր ես. կ'երևի ինձ որ անոր վրայ շուններ նկարած են որ այժեմի մ'ետեւեն կ'վազեն :

Այն ատեն որսորդը տղուն տուաւ սրուակը, և դեռատի հովիւն առաւ դնաց, ուրախութենէ ցատկոտելով, դառնուկի մը պէս որ կ'ոստոստէ :







ԼԳ

## ԹՈՋՆԻՒՆ ՄԸ ՊԱՅՄՈՒԹՅՈՒՆԸ

Ղաղար հովիւ էր. իր կնկան հետ սիրուն հիւղ մը կ'ընա-  
կէր, որ իր տիրոջ ազարակին մօտ էր: Ղաղար գտարիկ  
մ'ունէր Նէվրիկ անուն և խոշոր շուն մ'որ Թաթար կ'իւ-  
շուէր: Իր անակը շատ մեծ չէր բայց հանդիստ էր: Գրսէն  
բաղեղներ, այծիտերէներ և վարդեր կ'ծածկէին զայն այն-  
պէս որ աւելի հովանոցի կ'ըմանէր քան թէ տան. ինչու որ  
բաղեղը մինչև ծխանք կ'մաղէր, տանիքին վրայ կ'սողար,  
և ամէն կողմէն կ'տարածուէր, այնպէս որ երբ փոքրիկ աղ-  
ջիկն իր սենեկին պատուհանն ելնէր՝ դալարի շամփրակ մը  
իւր սիրուն դէմքը կ'ըլլորէր:

Ղաղարին կ'ընէր պատուական կին մ'էր, համարատ, տան-  
տիկին, և ամենուն հետ սիրով կ'վարուէր: Լաթ լուալ,

հայ շաղիւ, անուշ եփել գիտէր, և այնպէս աղօթք բլիթ  
ու կարկանդակ կ'չինէր որ ամէն մարդ կ'ըզէր: Շատ ըն-  
տանիքներ, երբոր ընտանեկան ասն ու հանդէս ունենային,  
տիկին Ղաղարը կ'հրաւիրէին: Օրէ օր բարի անուն կ'առ-  
նէր. բայց իր դիտցածները միայն ասոնք չէին. մանեկ, կա-  
րել ու բանեկ ալ գիտէր:

Եթէ Ղաղարը տեսնէիք, անշուշտ պիտի սիրէիք. այն-  
չափ բարեսիրտ մարդ մ'էր: Իր բոլոր կեանքը զիւն ան-  
ցուցեր էր և անոր բոլոր դադանիքը գիտէր: Գիտէր թէ  
բուն ուր կ'չինէ իր բոյնը, սկիւրն անտառին ուր կողմը կը  
բնակի: Գիտէր թէ գետին ուր կողմը կ'կենային ձուկերը, և  
կրնար ցոյց տալ այն ձակերն որոց մէջ զայլաձուկը կ'սպա-  
սէ որսին ծովահէնի պէս: Շատ աղէկ կ'զուշակէր թէ ինչ  
օգ պիտի ընէ. անձրև պիտի գայ թէ ոչ. օդը տաք թէ ոչ  
ցուրտ պիտի լինի: Գիտէր նա վազել, ձի հեծնել, ցատ-  
կել, լողալ: Աէկ խօսքով, գիւղացիի մ'ամէն պէտք եղած  
բաները քաջ գիտէր և իրեն հաւասարող չունէր:

Հապա փոքրիկ Նէվրիկը. ինչո՞ւ չտեսն, Նէվրիկ անուշիկ  
սիրուն աղջիկ մ'էր: Կապոյտ աչքեր ունէր, գեղձան մա-  
ղեր, վարդ պտեր, և այնպիսի փոքրիկ սիրուն վիղ մ'որ  
իր դուռը վախա բունի մը վրայ բացուած կ'ոկոտի մը կը  
նմանէր: Հայր ու մայր գորովանօք կ'ըզէին իրենց աղջիկը,  
Նէվրիկն ալ զերենք կ'սիրէր: Այսպէս իրար կ'սիրէին ա-  
մենն ու անուշ կեանք մը կ'անցընէին:

Հիմա գիտէք Ղաղարին ընտանիքը. քանի մը խօսք ալ  
ճնճորկի բնտանիքի մը վրայ բնեց:

Պարոն ու տիկին ճնճորկ փոքրիկ սիրուն բոյն մը շինէր  
էին՝ Պ. Ղաղարի տանիքին անկիւնը՝ բաղեղին ներքև: Այս  
բոյնը հինգ հակիթ կ'ապրու նակը որու վրայ տիկին ճնճ-  
որկը թուխս նստեր էր: Առաջու մը՝ խիստ կանախ, տի-  
կին ճնճորկն իր էրկան ըսաւ. «Կարծեմ թէ մեր սիրական  
ձապուկներն իրենց կեղեր կոտորելու կ'ջանան»:



Տիկին ճնձղուկը ճիշտ գուշակեր էր. և նոյն պահուն՝ չորս հաս ալորիկ ճնձղիկներ կեղևէն դուրս ելան մերկ ու անփետուր. իրենց դեղին կտուցները վեր առին և սկսան ճվճվալ ու կերակուր ուզել: Հա կիթ մը միայն մնացեր էր: Դէ՛, Դէ՛ կ'էջէին բոլոր ճնձղիկները միասին: Հայրը թուա գնաց որ կերակուր բերէ: Երբոր կտոր մը բան բերելով դարձաւ, մայրը թուա որ երթայ ուրիշ անունդ ալ բերէ, և այսպէս իրարմէ ետեւ դացին եկան մինչև որ նորածին ճնձղիկներն իրենց ճիւ ճիւր դադրեցուցին և իրենց մօր թեւերուն տակը մօտան տաքնալու:

Հեռեկեալ օրը՝ նորէն չորս հաս ճնձղիկ և մէկ հաւկիթ կար: Օր մ'ալ անցաւ, դարձեալ ուրիշ օր մը, և հաւկիթը չէր ծակուեր. խեղճ ծնողք սկսան անհանդիս լինիլ: Այս հնչուքի մէջ եղած առեն՝ հաւկիթն երկու կտոր եղաւ ինքներեն և հին, երրորդ ճնձղիկը դուրս ելաւ, ճիւ ճիւ ընելով, և ծնողք թուան որ ուտե՛իք բերեն:

Օրերն անցան և երբ ամառն եկաւ, ճնձղիկները բաւական մեծցեր էին և թռելու փութք ըրին: Բայց մայրերնս ըսաւ. «Զաւախներս քիչ մ'ալ սպասեցէք որ թեւերնից մեծանան. կ'վախնամ որ վար չ'յորդիք»:

Հայրը պատասխանեց. «Անխելութիւն է սպասելը. չեն կրնար գիտնալ թէ կարող են թռիլ փորձելէն առաջ, և ես աներկմիտ եմ որ իրենց ապրուստը ճարելու չափ մեծ են»:

— Բարեկամի իմ, պատասխանեց մայրը, քանի մ'օր ալ սպասենք և ապա կ'տեսնենք:

Եւ երեք օր ևս սպասեցին: Վերջապէս չորրորդ օրը, բոլոր ճնձղիկները տանիքն ելան և հայր ու մայր անտոյց սորվեցուցին թէ ինչպէս թռելովն պիտի շարժեն և պոչներին պիտի բանան: Այսպէս առանց դիպուածի ճնձղիկները մեծ խնձորի ծառի մը վրայ հասան՝ որ տնակին մօտ էր: Այն առեւ ճիւղէ ճիւղ ցատկեցին, մինչև որ ստորին ճիւղն իջան՝ որ հողին մօտ էր:


«Հիմալ, ըսաւ հայրը, պարտիկն պատնէշը թռիկը» Եւ ինք առաջ թռաւ. բայց ճնձղիկներն ահ ու գողի մէջ էին, և ոչ մէկը տեղէն չարժեցաւ:

Վերջապէս ամենէն մեծն իր թեւերը տարածեց, ճամբայ ելաւ և անարգել պատնէշը հասաւ: Միւս չորս ճնձղիկներն ալ անոր ետեւէն դացին: Ատոնց չորսը ուժով էին, ինչպէս կ'լիշէք, և լաւ թռան. բայց միւսն, այն փոքրիկն որ ամենէն վերջը հաւկիթէն ելեր էր, ուժէ ընկաւ, չկրցաւ թռիլ և պարտեցը տանող ճամբուն վրայ ընկաւ:

«Աստուած իմ, Աստուած իմ, պոռայ մայրը, մնաւ թռչնիկս»: Եւ շուտ մ'անոր քովը թռաւ որ տեսնէ. հայրն ալ անոր ետեւէն դնաց, մինչեւ միւս չորս եղբարքն ու քոյրերն այլայլութենէ նուազեց ընկեր էին:

Երբ հայր ու մայր փոքրիկին քովն եկան տեսան որ հողին վրայ կը տատանի, թէև մնաւ չէր, տատակ վերադարձեր էր և թեւ կտարած կ'երևէր: Ի՞նչ ընելն չգիտէին. չէին կարող զանի բոյնը տանիլ. իր փոքրիկ թեւ հողին վրայ կը քսուէր, ամենքն ալ յուսահատ էին:

Ճիշտ այն միջոցին՝ տնակին դուռը բացուեցաւ և փոքրիկ նեղիկի իր Թաթար շան հետ գուրս ելաւ: Երկու մեծ ճնձղուկներն սկսան թռչնիկին բոլորափր թռիլ, իր մայրն



թեւերը տարածեց մինչև դետիւնը, ցատկեց ու ճուռուցեց որպէս զի այն տակալի շունը վախընէ և այսպէս իր ձաղիկն



ազատե : Բայց Թաթարը , առանց այս սպառնալիքէն վախնալու , տիկին ճնշողական կողմը ծանր ծանր քալեց : Ասոր վերայ հայր ու մայր թփի մը մէջ սահողական և սկսան այնչափ բարձր ճչել որ Նեվրիկ նոյն ճամբէն եկաւ անցած դարձածը տեսնելու համար : Տեսաւ որ խեղճ թուշնիկն գետինը պառկեալ էր , զայն առաւ ու մօրը քովը վազեց ըսելով . « Մայրիկ , նայի՛ր , նայի՛ր , ճնշողիկ մը բռնեցի » :

Ղազար տնակը նստեալ էր . ոտք ելաւ որ տեսնէ : « Նեվրիկն ինչո՞ւնք , ըսաւ նա , փետուր շատ քիչ ունի . կարծեմ թէ թեւը կտորած է թուշու փորձելով » : Ուստի թուշնիկն իր լայն ձեռքին մէջ առաւ . խեղճ ճնշողիկն նախ շատ վախշտ , բայց Ղազար այնպէս փափուկ կերպով բռնած էր որ ճնշողիկն սկսաւ հանդարտիլ՝ տեսնելով որ Ղազար իրեն փնաս տալու միտք չունի :

Ղազարի ընտանիքը մէկ տեղ զաւրով՝ խորհեցան որ ուրիշ ճար չկար , պէտք էր բաւական խորունկ զամբիւղ մը գտնել , ճնշողիկն անոր մէջ դնել որպէս զի չկարենայ գիւրաւ գուրս ելնել . անոր մէջ քիչ մը յարդ գրին որ կախուղ ու տաք լինի , նոյնպէս աման մը գրին , որու մէջ կաթով թրջած հաց կար և ապա զամբիւղը ճնշողիկն հետ պատուհանին եզերքը տեղաւորեցին : Այն ատեն ճնշողիկն ծնողքն ալ չցատկեցին ու չպողպեցին , տնակին մօտեցան որ տեսնեն թէ ի՞նչ եղաւ իրենց խեղճ փոքրիկը : Քիչ քիչ ողբ առին , և համարձակեցան վարդենիի մը վրայ թառել՝ պատուհանին եզերին վրայ :

Ղազար ու Նեվրիկ սենեակն էին , երկու ծեր ճնշողիկներուն շարժումները կ'ընտէին . երբոր պատուհանին եզրին վրայ կեցած տեսան հայրը՝ Ղազար մտածեց որ եթէ զամբիւղն մօտակայ ծառին ճիւղէն կախէր , ծնողքն անոր հողը պիտի տանէին և պիտի կերակրէին : Ուստի այս խորհուրդն ի զօրք գրին , և երբոր ճնշողիկն սկսաւ ճուռողիլ՝ մայրը

ծառին կողմը թռաւ , զամբիւղին եզրը թառաւ , ի նշան որ քախու թեւան թեւերը շարժեց և հայրը կանչեց , հայրն ալ եկաւ : Վերջը փախան և քիչ ատենէն փոքրիկ հիւանդին սնունդը բերին : Վերջապէս շատ երջանիկ էին որ իրենց ձաղկիկը վտանգն անցուցեր էր : Գացին իրենց միւս չորս սիրականները գտած և բոյնը տարին . վերջը նորէն զամբիւղին դարձան : Բայց երբ մուրը կոխեց , ի՞նչ ընելիքնին չգիտէին : Բոյնին մէջ իրենց ձաղկիկներուն ձայնը կ'լսէին . առնոց մօտ դնալու համար պէտք էր փոքրիկ ապկկարը զամբիւղին մէջ թողուլ : Ի՞նչ ընել պէտք էր :

Երբոր պարոն ու ախիկն ճնշողիկն այս դժուար վիճակին վրայ կը մտածէին , Ղազար ու Նեվրիկ տնակէն դուրս ելան , զամբիւղն առին և տունը տարին : Այն ատեն ճնշողիկն ծնողքը շատ վշտացան , վասն զի չգիտէին թէ Ղազար ի՞նչ պիտի ընէր թուշնիկը , իրենց բոյնը դարձան , և լացին ողբացին մինչև որ յոգնութենէ քնացան :

Հարկ չկար որ այսչափ ցաւ զգային . վասն զի Ղազար առաւու կանուխ՝ ամենէն առաջ զամբիւղն առաւ ու ծառին կախեց , ուստի թուշնիկն հայրն ու մայրն եկան իրենց սիրելին կերակրելու : Եւ երբ Նեվրիկ մուրը կոխելուն նորէն զամբիւղը ներս տարաւ , ճնշողիկները չվախցան և ուրախ դուռը իրենց բոյնը դարձան : Այսպէս միւս օրերն ալ հանդիսաւ անցան . թուշնիկն օրէ օր ոյժ կ'առնէր . քիչ առատենէն բոլորովին բոյժ դաւաւ , և զամբիւղին ծայրը կենդանու կարող եղաւ . վերջապէս՝ օրին մէկն՝ իր մօրն ետեւէն գնաց և մինչև իր հին բոյնը հասաւ :

Թէև թուշնիկը թռաւ գնաց , բայց ընդեւաջած էր , և այնչափ կը սիրէր Նեվրիկն որ իր կերակուրն անոր ձեռքին մէջ կուտէր և ուսին վրայ կը կենար . նոյնպէս Թաթարին հետ ալ բարեկամացեր էր : Նեվրիկ երկուքն ալ փայփայեալ էր , մինչև որ թուշնիկը վարժեցաւ Թաթարին գլխուն վրայ կենալ :



Իսկ իր քոյրերն ու եղբայրներն այնչափ մեծցեր և վրայ եկեր էին որ իրարմէ ետև թռան դացին բազդ փնտռելու համար, մինակ թռչնիկն իր հօրն ու մօրը հետ մնաց բոցնը։ Սակայն ամառն անցաւ, դիշերներն աւելի տխուր ու երկար եղան, օրերն աւելի կարճ ու ցուրտ դարձան, վերջապէս՝ Աղաւթնի քանի մ'օր առաջ ձիւն դալով չորս զին սառ կտրեր էր։ Այնքան ցրտեր էր որ դաշտերու խեղճ թռչունները չգիտէին թէ ինչ պիտի լինին։ Ձիւնն այնքան խիտ էր հողին վրայ որ ուտելիք չէին գտներ, բայց ամէն առտու՝ Նէվրիկ հացի փշուռք կ'ընկնէր իր ճնճղիկն համար, մեր ճնճղիկն ալ սովորեր էր իջնել ուտել և քանի մը կտոր ալ իր հօր ու մօրը կը տանէր, այնպէս՝ խիստ ցրտին չնայելով՝ հանդիստ կ'ապրէին իրենց բոցին մէջ բաղեղին ներքե։

Փոքրիկ աղջիկն հանի մ'ունէր որ Աղաւթին տունէն քանի մը դաշտ հեռաւորութեամբ խորճիթի մը մէջ կ'ընակէր, ճամբան մէկ անակէն միւս անակը կ'տանէր և Նէվրիկ երթալ գալով իր ժամանակը կ'անցընէր, որպէս զի իմանայ թէ իր հանին ինչ վեճակի մէջ էր, վասն զի խեղճ կինը տկար ու տարօք էր։ Այնպէս խօսք ըրեր էին որ Նէվրիկ Աղաւթին իր հանին տունն երթայ ճաշ ընելու, և իր հայրն ու մայրն իրկունն երթան և զինքն առնեն բերեն։

Նոյն օրը փոքրիկ աղջիկը ճամբայ ելաւ, իր սիրուն տաքուկ կարմիր վերարկուով փաթ թուեցաւ, ձեռքն առաւ կողով մ'որ աղ որ բանդակներ կ'պարունակէր։ Այսպէս Նէվրիկ ճամբայ ելաւ, և ճամբան կ'մտածէր թէ արդեօք իր հանին ինչ կազանգէք իրեն պատրաստեր էր, արդեօք փոքրիկ սիրուն զլեմարի մ'էր, կամ ոսկեգօծ զիւրք մը...։ Այս հարցումներն որ իրեն համար աղ որ յայտեր էին իրեն ճամբան կ'կարճեցընէին։ Իր ծնողքը կ'ըսէին մտքով որ իրենց աղջիկը շուտով պիտի հանի իր հանին տունը, քանի որ ճամբան շատ աղէկ զիւրք է։

Սակայն ձիւնը բաւական բարձրացեր էր, և Նէվրիկ այս տեսակ օգերու վարժած էր, բնաւ չէր վախնար և ամէն դժուարութենէ՝ զիւրաւ կ'ազատէր։

Թէև Աղաւթի օր էր, Աղաւթ իր ոչխարներուն հոգն ունէր, խեղճ կենդանիներն չէին կրնար ծով պահելով տարին սկսիլ, հաւատարիմ Թաթարը՝ Նէվրիկին հետ երթալու տեղ իր տիրոջ ետեւէն գնաց մինչև բարախը։ Իսկ Աղաւթ տիկինն սկսաւ ընթրիքը պատրաստել և սքանչելի կարկանդակ մը շինել։

Տան տիկինն այնքան զբաղած էր որ բնաւ չլսեց երբ քանի մ'անգամ պատուհանին զարկին, բայց վերջապէս զլուխը դարձուց և զմ' տեսնէ աղէկ, մեր ճնճղիկն որ պատուհանին եզրը կեցած՝ թևերը կ'բանար և կտուցովն ապակիին կ'զարնէր։

«Խեղճ թռչնիկ, ըսաւ մտքով տիկին Աղաւթ, կ'երևի թէ Նէվրիկ մոռցած է քիչ մը հացի փշուռք տալ անոր»։ Ուստի գուրս ելաւ տեսնելու թէ ինչ էր անցած դարձածը։ Բայց ոչ, թռչնիկն անօթի չէր, ըստ սովորականին փշուռքը գետինը նետուած էին, և աւելի զարմանալին այս էր որ թռչնիկը բնաւ կերած չէր։

«Արեւի է որ կ'մնի», մտածեց խեղճ կինը, և դուռը բաց ձեռք նայելու համար թէ արդեօք խոհանոցը կ'մանէ, սակայն թռչնիկը գուրս կեցաւ և դարձեալ պատուհանին զարկաւ, բայց երբոր տան տիկինն անոր մօտեցաւ, թռչնիկը պարտիզին զրան կողմը թռաւ և ապա պատուհանին զարձաւ։

Թռչնիկին այս շարժումներէն բան մը չէր հասկընար, բարեբաղդաբար իր էրկը ներս մտաւ, և անոր պատմեց թռչնիկին ըրածը։ Երբոր անոր կ'սօսակցէին, մեր ճնճղիկը նորէն եկաւ և առաջուան պէս սկսաւ փեղկերը զարնել։

Այն ատեն Աղաւթ գուրս ելաւ, և թռչնիկը նորէն պարտիզին զրան կողմը թռաւ։ Աղաւթ անոր ետեւէն գնաց, բայց երբոր կենար, թռչնիկն ալ կ'կենար, թևերը կ'զարնէր։



ապա քիչ մ'ալ հեռու կ'թռեր և նորէն կ'կենար իր լեւերը շարժելով, մինչև որ Ղազար բտա ինքնիրեն :

«Այս տեղ բան մը կայ, երթամ նայիմ» : Ուստի սուշեց որ Թաթարը դայ և երկուքնին ալ մէկ տեղ ճամբայ ընկան :

Բայց ճնճղիկը զանոնք տեսաւ, և այս անգամ շխտակ տարտիղին դուռը դիմեց և անոր վրայ դադար առաւ : Երբոր Ղազար ու իր շունը մօտեցան, լուսնիկը դաշտին կողմն երթալով քիչ մ'ևս լուսաւ, և այսպէս քիչ մը կենալով քիչ մը լուսելով առաջ մնաց, մինչև որ դաշտին միւս ծայրը հասաւ, որու մօտ խորունկ փոս մը կար :

Ճնճղիկն այն տեղ պատնէշի մը վրայ լծաւելով զանոնք ողորդելի ձայնով կ'իշէր, յանկարծ Ղազարին միտքը տխուր բան մ'անցաւ :

«Աստ եկուր, Թաթար, պտաց Ղազար, աստ եկուր, հաւատարիմ շուն» :

Եւ Թաթարն մինչև երկրորդ պատնէշը վազեց և շուտ մը իր տիրոջը քով վերադարձաւ : Ղազար անցած դարձածը դուշակելով կրցածին չափ շուտով վազեց :

Այն տեղ՝ ձիւնի մը կտորի տակ՝ Նէվրիկին կարմիր վերարկուն կ'երէր, և նոյն ինք Նէվրիկ ձիւնէ պատանքի մը ներքե լծադուած էր :

Ղազար շուտ մը փոսին մէջ յատկեց, իր խեղճ դստրիկն քաշեց հանեց, և տեսաւ որ զբաւէն կապոյտ դոյն մ'առեր էր : Գիրկն առնելով շուտ մը տունը դարձաւ : Ծնողքն անկողինը դրին զանի, և ասք ձեռքով անոր փոքրիկ անգամները շփեցին, մինչև որ արխնը սկսաւ դռնալ իր կենդանացած մարմնոյն մէջ : Այն ատեն իր կապոյտ աչերը բացաւ : Արնաք երևակայել լժէ ծնողքն որչափ գոհ եղան :

Նէվրիկ քանի մ'անգամ պատմեց անոնց լժէ ինչպէս փոսին վրայ նետուած տախտակէն անցնելու ատեն իր ոտքը

սահեր էր, ինչպէս ձիւնին մէջ ընկեր էր, ինչպէս՝ իյնելու ատեն՝ իր ոտքը յաւցընելով շիրցեր էր կանգնել, ինչպէս՝ քանի վեր ելնելու կ'ջանար այնքան աւելի ձիւնին մէջ կ'լծադուէր : Ըսաւ անոնց որ բոլոր ուժովն սկսեր էր պոռալ մինչև որ ձայնը հատեր էր : Վերջին վայրկենին այսչափ միայն կ'իշէր որ ճնճղուկն եկեր իր վրայ կեցեր էր, և այնուհետև լծուցիկը լուսեղ զացեր էր : Այն ատեն զգացեր էր որ քիչ քիչ կ'ստաւ, և վերջը բան մը չէր յիշեր մինչև այն ատեն որ անկողնոյն մէջ արթնցեր էր :

Այսպէս մահուանէ ազատեցաւ մեր բարեսիրտ Նէվրիկը, և իր ընտանիքն այնքան գոհ էր Վաղանդի օրն՝ որ չեմ կըրնար հասկըցընել իրենց երջանկութիւնը, եթէ երկար անգամ գրեմ : Իսկ մեր ճնճղիկն որչափ երջանիկ եղաւ, դիտէք : Երբոր իրիկունն իր զլուխը լծելին տակը դրաւ, շատ ուրախացաւ որ՝ Նէվրիկին ձայնը լսելով՝ անոր օղնութեան հասեր էր :

Այսպէս ճնճղիկը բարի գործով մը սկսաւ նոր տարին : Գուք ալ, տղայք, անոր պէս ըրէք, ձեր ամէն մէկ օրը բարի գործ մ'ընելով սկսէք և գուք ալ գոհ սրտով պիտի ընանար :







ԼԵ

## ՈՐԴԻՆԱԿԱՆ ՍԷՐ

Գիւղի մը մէջ բարի երէց մը կար որ փոքրիկ տղոց շատ խնամք կ'տանէր։ Օրին մէկը երեք հատ աղքատիկ տղեկներ իր տունը կ'կանչէ որպէս զինանոց նոր հալուստ կտրել տայ։ Սաստիկ ցուրտ էր, ողորմելի տղեկները կ'սրսփայլէին։ Բարի երէցն կրակարանին մօտ նստեցուց այս տղեկներն որ տաքնան և քիչ մը հաց ու միս բերել տուաւ որ ուտեն։ Երկու տղեկներն ակործանօք կ'ուտեն իրենց մօտը, իսկ ամենէն փոքրիկն իր հացն ու միսը գոհունակ դէմքով կ'ըլտէր բայց անոնց չէր վսշեր։ Այն ատեն բարի երէցն աւոր ըսաւ։

«Տղաս, ինչո՞ւ համար չես ուտեր։

— Շնորհակալ եմ, արէր պապա, պատասխանեց տղեկը, այդ հացն ու միսը մօրս համար պիտի պահեմ, որ հիւանդ է։

— Հոգ չէ, դու կերակուրդ կեր, տղաս, ես պէտք եւ ղաժը մօրդ կ'ըրկեմ։

— Չէ, պիտի չուտեմ, ասոնք անոր պիտի տանիմ, ինչու որ մամաս հիւանդ է»։

Այս խօսքն ըսելով՝ խեղճ տղեկին աչքերն արտառփով լցան։ Երէցը նորէն ըսաւ։

«Տղաս, ես մօրդ հոգը պիտի տանիմ. դու անօթի ես, կեր կշտացիր»։

— Հա՛, անօթի եմ, բայց մայրս հիւանդ է։

— Լա՛ւ, ահա քեզի ուրիշ հաց ու միս, դու ձեռքովդ ասր անոր, բայց կ'ուզեմ որ քեզի տուածս ուտես։

— Շատ աղէկ, տէր պապա, ըսաւ տղեկը, ես չոր հացս պիտի ուտեմ, բայց իմ միսս մօրս համար պիտի պահեմ»։







12

## ԾԵՐ ՀՈՎԻԻԸ

«Իմ փոքրիկ աղաքս, ահա դպրոց եկաք քանի մը շաբաթ հանդիստ ընելէն ետեւ. տարակոյս չունիմ որ լաւ զուարճացաք և այս զուարճութեանց յիշատակը ձեր մտքին մէջ կը պահէք. հիմաի պէտք է որ մէկիկ մէկիկ ձեր արեւիքներն ինձ պատմէք:

— Այո, այո, պոռացին բոլոր աղայքը միաբերան, պատմենք մեր արեւիքներն հանին:

— Ամենէն առաջ պէտք է որ Եղիսն սկսի իր պատմութիւնն, ըսաւ Պողոս, վասն զի նա ամենէն մեծն է:

— Ամենայն սիրով, պատասխանեց Եղիս, և քանի որ ըսածներէս հաճոյք սխալի զգար նազանք չպիտի ընեմ»:

Եղիս տանն տարեկան սիրուն փոքրիկ օրիորդ մ'էր, ճերմակ ու վարդագոյն. ծանր ու հանդարտ շարժմանք ունէր, և իր ձայնն այնքան անուշ էր որ ամենքը լռեցին երբոր բերանը բացաւ խօսելու համար:

«Արդէն գիտէք, իմ բարի ընկերներս, ըսաւ Եղիս, թէ որչափ ուրախ և գոհ էի որ նոր գիւղը դայի իմ մօրեղբոր տունը մնալու համար: Մայրս ըսեր էր ինձ թէ այն գիւղն հովիւներու շատ շատ խաշինք կան, և թէ կրնայի անոնց հետ դաշտերն երթալ պտուղելու համար: Այն տեղ պիտի գտնէի և իմ մօրեղբոր աղջիկը՝ Մարգարիտն, և ասոր համար շատ գոհ էի, բայց խնդութիւնս կ'աւելնար երբ կը մտածէի որ ես ալ վեց շաբաթի չափ հովուուհի մը պիտի լինէի, ինչու որ հովիւներու պատմութիւն մը կարդացեր էի. . . . . Օր մը մայրիկը գուրս ելեր և իր զրքատունը բաց ձգեր էր: Ես որ պատմութիւններ կ'սիրեմ, գիրք մ'առի և տեսայ որ այս գրքին մէջ հովուուհի մը պատմութիւնը կար, որու անունն Եղիս էր: Այս անունը կարգաւոր փափաքս աւելցաւ այն գիրքն աչքէ անցընելու: Անոր մէջ հովուուհիներ տեսայ որ երգեր կ'երգէին, հովիւներ որ սրինդ կ'ածէին, դառնուկներ, որ ժապաւէններով զարդարուած էին, ծառերու տակ շինուած հիւղեր տեսայ, որոց բոլորաթիւր յաամիկի, վարդի ու արքայայի տուններ կային և անուշ անուշ կ'ըսէին: Այս ճիւղերուն ներսի գին քարայր մ'էր վայրի օրթետունիով զոյգուած. հովիւներն լուռու ու տերևուտ անկողիններ ունէին և այս անկողիններուն քովէն վըճիտ ջրի աղբիւրներ կը հոսէին:

— Այնպէս որ քնանալու ատեն մարդ կրնար բաղնիք մը առնել, ընդամիջեց նենկամիտ Պողոս, շատ զուարճալի էր անշուշտ:

— Այս ամենն այնքան սիրուն էր, շարունակեց Եղիս, որ միտքս դռեր էի այն տեղն երթալ, որու անունն էր Գալարայի Եղեթ:



«Երբոր նոր դիւղը գայի Մարգարին ըսի որ ինձի հօտերը ցոյց տայ : Մարգարիտ որ եօթը տարեկան էր , աղաւտեց իր հայրն որ խնդիրս կատարէ : Հայրն ալ խօսք տուաւ որ հետեւեալ օրն աբախէրն տանի մեզ ոչխարներն տեսնելու համար :

«Ուրախութենէս քունս փախաւ , բայց կարծեմ թէ քիչ մը քնայայ և այն միջոցին միայն իմ մօրեղբորս ոչխարներուն վրայ երազներ տեսայ : Վերջապէս արևն ելաւ , արթնցայ , Մարգարիտ դեռ կը խրկար . «Ծոյլ , ելիւր ըսի անոր . ես բնաւ այնչափ կանուխ անկողնէն ելած չէի : Բայց պէտք էր նախաճաշէին սպասել . անհամբեր էի , վերջապէս ճամբայ ելանք :

«Երբոր տունէն հեռացանք , ամենէն առաջ՝ մանր ուղիներէ անցանք որու երկու կողմէն ծաղկաւէտ թփեր անկեր էին : Ես կ'յուսայի որ ամէն կողմէն այս դաւաճանք էր , ապա աղաւթը խրճիթներ պիտի տեսնեմ :

«Յակայն պարապ տեղը մէկ ճամբէն ուրիշ ճամբայ մը կ'անցնէինք , բան մը չէի տեսներ : Յանկարծ նեղ ուղին հասաւ , և ընդարձակ դաշտի մը մէջ գտնուեցանք , որու մէջ ոչ տունկ , ոչ դաւարի և ոչ ծաղիկ կային :

Հեռուն՝ դաշտին մէջ բան մը կ'տեսնէի , մոխրագոյն կոյտ մ'որ բանի մը չէր նմաներ :

« — Ահա տեսնելու փափաքածդ , Էդիտ » , ըսաւ մօրեղբայրս :

«Ես կարծէի թէ իմ խնդրածս աղէկ չէր հասկըցեր , և ըսի որ կ'փափաքէի ոչխարներու հօտերը տեսնել :

« — Հատ լաւ , առաքիկ ոչխարներն , ըսաւ Մարգարիտ , միթէ չես տեսներ » :

«Ամէն կողմը կ'նայէի և չէի կրնար երեակայել որ Մարգարիտ այն մոխրագոյն կոյտին համար կ'ըսէր . բայց մօտենալով , վերջապէս կրցայ տեսնել , ինչ լինի աղէկ , . .

աղտոտ ճերմակ ոչխարներ , նիհար շուն մը , փայտէ փոքրիկ տնակ մ'որ շորս անիւներու վրայ դրուած էր և այնքան ցած էր , որ հազիւ կարող պիտի լինէի անոր մէջ կանգուն կենալ : Վերջապէս ծեր մարդ մ'ալ կար , թուխ երեսով , և այծենիով մը ծածկուած էր . դուխը բոլոր գոյնէր մ'ունէր , ոտքը խոշոր սանդաղներ դրեր էր , ուսկից յարգեր դուրս կ'ելնէին : Այս մարդուն ձեռքը տեսակ մը երկաթապատ ցուպ մը կար և մոխրագոյն կտուէ խոշոր պարկ մը վզէն անցուցեր էր :

«Այս ամէն տեսածներս այնպէս տպեղ երեցան աչքիս , որ զարմանքով իմ մօրեղբորս հարցուցի .

« — Բայց ինչ են այս անպիտան ոչխարները :

« — Այս է հօտը , պատասխանեց ինձ մօրեղբայրս զարմանալով :

« — Հապա ո՞վ է այս անշահ մարդն որ հօտը կ'պահպանէ :

« — Այս հովիւն է :

« — Կատակ կ'ընես , մօրեղբայր իմ , ըսի անոր : Հապա հովուտ հիններն ո՞ր են :

« — Ա՛հ , հովու-հինները , պատասխանեց նա ժպտելով , աղէկ գիտես որ աղարակը թողուցինք զանոնք , Սառան ու Բերսաբէն , որպէս զի կարգն ու պահելը շինեն . փոքրիկ Սանդուխտն ալ անդ մնաց որ ծախէրը մօտակայ արօտը տանի , որոց գառնուկները շատ փոքր են և մինչև այս տեղ չեն կրնար գալ արածելու համար » :

«Ի՞նչպէս կարելի է , ըսի Մարգարիտ , որ Սառան , Սանդուխտն ու Բերսաբէն , աղարակին այս կոշտ գեղացիներն , որ երէկ ինչպէս տեսայ , բոք կ'մանէին ու գոլըպայ կ'գործէին , ձեր հովու-հինները լինին : Միթէ այս մարդն է ձեր հովիւն :

Մարգարիտ պատասխանեց . « — Այս հովիւն վրայ , որո-



անունն է Կիրակոս աղբար, Բնչ անշահ բան կ'զանես : Մեր հովիւներուն մէջ ամենէն լաւն է, ամենէն շատ զիս սիրողն այն է» :

«Չկրցայ զարմանքս բռնել և Մարգարտին պատասխան տուի թէ այդ հովիւն այնքան տղեղ կ'զանէի որ իրմէ կ'վախնայի : Այն ատեն փոքրիկ աղջիկն ձեռքս բռնեց, և քահ քահ խնդալով որ այսպէս կ'վախնայի, բոլոր ուժովն սկսաւ վազել զիս ալ ակամայ Կիրակոս եղբոր կողմը քաշելով :  
«Երբ ծեր հովիւր մեզ տեսաւ, մեզ զիմաւորեց և բարի լոյս ըսաւ :

« — Դայէ անդամ մը, Կիրակոս աղբար, ըսաւ անոր Մարգարիտ, տես իմ հօրքորջս աղջիկը կ'ըսէ թէ քեզմէ կը վախնայ, վասն զի շատ տղեղ ես. այս գովեստին պատասխան մը տուր» :

«Երբոր մօրեղբորս աղջիկն այս ծանր խօսքն ըսաւ, ես կաս կարմիր եղայ, ինչու որ այս խօսքն շատ անբաղաքավար խօսք մ'էր և կարծէի թէ ծեր հովիւր պիտի բարկանար : Ափափաքէի անորմէ ներում խնդրել, բայց աչքս անոր վերայ դարձնելու չէի համարձակեր : Այն ատեն անուշ ձայնով մ'ինձ ըսաւ .

« — Իբաւ է, փոքրիկ օրիորդ, որ ես քեզի պէս սիրուն չեմ, բայց մի վախնար, ես մարդու մը գէշութիւն ըրած չեմ» :

«Այս քաղցր խօսքերն իմ զարմանքս զրդոեցին : Աչքերս վեր առի, և իմ կարծած սոսկալի գէմք մը տեսնելու տեղ, ծեր հովիւն երեսին վրայ անուշ ժպիտ մը տեսայ :

« — Պարոն, ըսի անոր, ներե՛ք Մարգարտին . . . ինձի ալ ներե՛ք . . . չէի կարծեր թէ հովիւներն քեզի պէս . . . հագուած են :

« — Այս հագուստս աղբոր չէ, պատասխանեց ինձ, բայց պէտք է այսպէս հագնիլ երբոր մարդ գիշեր ցերեկ բայց օդին կ'անցընէ :

« — Ի՞նչպէս, պարոն, ըսի անոր. միթէ հովիւները բոլոր օրը գաշտորը կ'անցընեն : Մետաքսէ զգեստներ ունեցողներն ալ կ'անցընեն . . . » :

«Ծեր հովիւն ինձ նայեցաւ զարմանքով, ապա ըսաւ ինձ ժպտելով. «Ո՛ւր տեսար այդ հովիւները» :

« — Պատմութիւններու և պատկերներու Դաւարապետ Էդէրէլ, բոլոր հովիւներն այնպէս են :

« — Աղջիկս, ըսաւ ինձ ծեր հովիւր, այդ բաները պատմութիւններուն մէջ տեսար . . . պատմութիւններ որ առասպելներ են : Այդ ըսած զարդարուն հագուստներով հովիւներդ անպիտան խաշնարածներ պիտի լինին : Քիչ ատենէն հովիւներն հարբուխէ պիտի հիւանդանային, զայլը պիտի յափշտակէր ոչխարները, և իրաւ է որ ասով բուրդին գինը պիտի բարձրանար :

« — Ի՞նչ ըսել է բուրդին գինը . . . » :

« — Հապա, ասոր տարալոյս չկայ, պատասխանեց Մարգարիտ որ շուտ մը հասկըցեր էր հովիւն միտքը. եթէ զայլը մաքիւներն առնէր տանէր, միթէ կ'կարծէս թէ քեզի հա պիտի բերէր . . . » :

« — Ի՞նչ է մաքիւներուն դեղմը, հարցուցի Մարգարտին :

« — Այդ դեղմը, պատասխանեց ծեր հովիւր, գուռը բուրդն է որով մաքին ծածկուած է. այդ բուրդը զարնան ժամանակները կ'հանեն՝ և միւս մկրասներով կ'խուզեն : Ահա ասոր կ'ըսեն կոփ, յարեց նա : Ասկից յառաջ եկած բուրդը կ'անուանի ապ : Եւ այս ամենէն պատուականն է. այս սարն աւելի շուտով կ'նշեցի՝ քան թէ այն որ մեռած կենդանեաց մարմէն կ'խուզեն :

« — Ուրեմն բուրդը կ'ներկեն, հարցուցի :

« — Հապա, կ'ներկեն, պատասխանեց ինձ, և ստոյգ եմ որ սե կամ կապոյտ ջրէն ապուկ շրջադրեստ մ'ունիս. արդէն զոյնդոյն բուրդէ սիրուն դործ մը բանած պիտի լինի :



« — Անշնչա՞տ », պատասխանեց Մարգարիտ :

« Եւ այն ատեն ծեր հովիւին պատմեց ասեղի մանր դործերը : Ըսաւ անոր թէ ինչպէս իմ մօրեղբօրս տօնին առթիւ Գալիլէի գգակ մը բաներ էի, նոյնպէս հանին համար շինած սիրուն օճաղ հողաթափները : Ո՛րչափ կ'ընտանայի լսելով որ բոլոր այս դործերն ոչխարի բուրգով շինուած էին : Ծեր հովիւն ըսաւ մեզ որ այս կենդանին Աստուծոյ ստեղծած կենդանիներուն մէջ խիստ թանկարկներէն մէկն է :

« Այն ատեն հովիւը շարունակեց .

« — Ոչխարներն ամէն տեսակ բանի կ'դործածուին . իրենց բուրգը կ'ծառայէ մեզ որ մեր ոտքէն մինչև գլուխն հագուինք : Բուրգով է որ շալաք կ'շինուի, նոյնպէս աստի, շրջաղեցստներու համար կերպաններ, կանանց համար շալեր, փուլաներ, շալաք և մինչև անգամ փանել : Կամանակս սենեակներու համար՝ բուրգով փշափներ կ'շինեն, վարադոյրներու և կահերու համար դաճաններ, փշափներ, ծոպեր և ամէն տեսակ հրաշք : Արքիկէի արաբացիք ուրիշ կերպաս չունին զգեստներն շինելու համար :

« Մաքիները կաթ կ'աւան, որով պանիր և նոյն խիկ կարագ կ'շինուի, նոյնպէս կովին կաթով : Այս բաւական չէ . երբ որ կենդանին կ'մեռնի, փաշալ կ'շինեն մորթովը, կամ կահեգործը կարմիր, կանաչ, սև, դեղին գոյնով կ'ներկէ, և զայն կ'պատրաստէ՝ և աէ կ'ընէ՝ մուճակի, թղթակալի, զբի կաղմի համար . նոյնպէս բարակ կաշիներ կ'յօրինէ ձեռնոցներու համար . փքոցներու և տղոց դագակներու համար մաշկ և այլն » :

— Այդ քու հովիւդ շատ գիտուն էր, ըսաւ Պօղոս :

— Անտարակցոյ, պատասխանեց Եղիս : Վասն զի՝ իր ոչխարները պահելու ատեն հովիւն անոնց պատմութիւնը սորվէր էր : Իրաւ է որ միշտ հովիւ եղած չէր, թէև այս պաշտօնը վեց տարեկան եղած ժամանակէն սկսած էր : Բայց

եաքէն ուրիշ գործեր ալ կատարեր էր : Վերջը նորէն հովուութեան սկսեր էր :

— Ըսէ նայինք, ըսէ, ուրիշ ինչ բաներ պատմեց, հարցոյց Պօղոս :

Եղիս շարունակեց խօսքը . — Ոչխարներու ճարպով մոմ կ'շինեն, ըսաւ Կիրակոս հովիւր : Այս ճարպի ճարպը մաքրելով կէս մը հեղուկ ու կէս մը հաստատուն մասունք վը հանեն : Հաստատուն մասով փօ խիկ իւրոտ մասով աստի կ'շինուի :

« Ծեր հովիւն ըսաւ նաև որ ոչխարին ոսկորներն, մորթին կտորներն, ընդերքն, եղջիւրներն ու սմբակներն այլ և այլ բաներու կ'դործածուին :

« Գլխաղգարար օր մը Կիրակոս հովիւն մեքենայի մ'անիւէն բռնուելով՝ ուսը կտրեցաւ և այսպէս իր ապրուստը ճարելու անկարող եղաւ : Այն ատեն՝ որովհետև Կիրակոս մօրացկան լինել չէր ուզեր, իր ոչխարներն արածելու դարձաւ :

« Ուղեցի հասկընալ թէ ինչու համար զիշերները գաշտը կ'անցընէ, քանի որ շատ ծանր բան մ'է այս :

« — Պէտք է որ դաշտերն անցընեմ, պատասխանեց ինձ . վասն զի շատ անգամ ոչխարներն հեռու ցեղեր կ'աւանդէ արածելու . հողերուն վրայ կենալով այնպիսի աղբ մը կը թողուն որ երկիրը կ'պարարտէ և հարկ չմար գոմերէն փոխադրելու համար ծանր աշխատութիւն մը կրել :

« — Բայց, ըսի անոր, զիշերը ոչխարները կրնան մուրիկ :

« — Ամենեին չեն մուրիկ, պատասխանեց Մարգարիտ, որ արդէն բոլոր այս բաներս զիտէր : Սովորաբար ոչխարներն իրարմէ չեն հեռանար . ասկից զատ սա փայտաշէն վանդակներու մէջ կ'փակեն որմած մը շինելով որ փախի կ'կոչուի, և հօտին հետ մէկ կողմէն ուրիշ կողմ կարելի է փոխադրել : Բայց մի կարծեր թէ ֆատգօրը չհսկեր հօտին վրայ . դու չես ձանձնար դեռ ֆատգօրը » :



— Ի՞նչ բան է այդ Քաստորը, հարցուց Լուսի :

— Հովուին շունն էր, պատասխանեց Եղիս :

«Մարդարիտ ցոյց տուաւ մեզ թէ ինչպէս Քաստորն ասդիս անդին կ'վազէր և հօտին վրայ կ'հսկէր երբոր հովիւը մեզի հետ կ'խօսակցէր : Եւ հասկըցընելու համար թէ Քաստոր որչափ ժիր էր, փորձ փորձեց անոր դործը ձգել տալ՝ Քաստոր, Քաստոր, եկուր այս տեղ, պոռալով . . . : Լաւ, շունն անոր երեսը նայեցաւ, պոչն օրօրեց և ոչխարներուն քովէն չհեռացաւ :

« — Իմ՝ բարի շունս, ըսաւ հովիւը, շատ հաւատարիմ եւ քաջ է : Եթէ դայլ մը դար, մինակ Քաստոր բաւական էր հօտը պաշտպանելու համար, թէև հօտը երեք հարիւր ոչխարէ կ'բաղկանայ :

« — Արդեօք ոչխարները չե՞ն կրնար ինքզինքնին պաշտպանել, հարցուցի ես :

« — Բնաւ կարող չեն պաշտպանելու, պատասխանեց ինձ հովիւը . իրենց ակռաները խածնելու համար չեն շինուած, միս ուտող կենդանիներուն ակռաներուն պէս . ուստի ոչխարները միայն խոտ կ'ուտեն և ասոր համար խոփակէր կ'կոչուին : Ասկէ զատ, գիտէ մի անգամ, խոյերն որ հօտին մէջ ամենէն ուժեղներն են, միայն եղջիւրներ ունին . այս եղջիւրներն ալ իրենց ակռաններուն բոլորտիքը դարձած են, այնպէս որ իրենց օդուտ մը չունին :

« — Այս ալ կայ որ ոչխարները չար չեն, ըսի ես . վասն զի մայրիկս իմ եղբօրս համար միշտ կ'ըսէ թէ պառնուկի պէս հանգարտ է :

« — Իբրեւ է որ չարութիւն մը չէ թշնամոյ մը դէմ՝ ինքզինք պաշտպանել զխնայել, պատասխանեց հովիւը, այլ արիասիրտ լինիլ է . և վայրի ոչխարը դիտէ ինքզինք պաշտպանել : Այս վայրի ոչխարն ուր որ կ'գտնուի, օրինակի համար, Ասիոյ հիւսիսային կողմը, ոչ մարդէն կը

վախնայ և ոչ կենդանիներէն . եղջիւրովը կ'մաքառի և շատ անգամ արիութեամբը յաղթական կ'ելնէ : Բայց երբ ոչխարն ընտանի կ'գառնայ իր բնական յատկութիւնները կ'կորուսէ, երկչոտ, և իր պիտոյքը հոգալու անկարող կ'լինի : Վասն զի դերի դառնալով կ'վատանայ, իր քաջատառութենէ կ'զրկուի» :

Եղիս կեցաւ . . . :

— Բայց, ըսաւ Լուսի, ի՞նչ կ'ընենք ոչխարներն :

— Այո՛, այո՛, ըսին միւս տղայք, պէտք է որ ըսես :

— Ո՛հ, բայց շատ տխուր բան է, պատասխանեց Եղիս :

— Ես տխուր պատմութիւնները կ'սիրեմ, ըսաւ Լուսի, ողբադին թէթեւ ձայնով մը :

— Մենք ամենքս տխուր պատմութիւններ կ'սիրենք, ըսին միւս տղայք անվէհեր ձայնով մը, ուստի խօսէ :

— Լաւ ուրեմն, բարեկամներ, պատասխանեց Եղիս, այս խեղճ ոչխարներն որ մնալէ այնքան օգտակար են, որ մեզի կաթ, բուրդ, կաշի, մոմ և ուրիշ շատ մը բաներ կ'տան, այս խեղճ ոչխարները . . . և իր աչքերն աւտսուքով լցան :

— Լմեցուր խօսքդ, վրայ բերաւ Լուսի :

— Լաւ, այս բարի և հանգարտ կենդանիները . . . կ'ուտեն :

— Ո՛վ կ'ուտէ, պոռագին տղայքը միաբերան :

— Մենք :

— Մենք . . . և իրարու երես նայեցան մեծ զարմանքով :

— Մենք ամենքս, ըսաւ Եղիս, և ամէն մարդիկ : Գիտես ինչ են էղջիւրները :

— Հա՛, գիտեմ :

— Հասկա զիտե՞րը . . . :

— Ա՛հ, ըսաւ Լուսի, ոչխարներու զիտե՞րը :

— Այո՛, պատասխանեց Եղիս :

— Քանի որ հիմակ իմացայ թէ կողիկներն ատեն մը կենդանի էին, այսուհետեւ բնաւ չեմ ուզեր ուտել :



— Ես ալ չեմ ուզեր ուտել, ըսաւ Լուսի :

— Ես ալ այդ խօսքն ըսի Կիրակոս աղբարին, վրայ բերաւ Եղիս . բայց նա պատասխանեց ինձ որ այն ատեն բնաւ միս ուտել պէտք չէր, վասն զի եղբ, հորթը, վառեակն ոչխարին պէս շնչաւոր կենդանիներ են, թէ և զանոնք կ'ուտենք :

— Աւրեմն որչափ չար են, ըսի Կիրակոս աղբարին, մարդիկ որ այս խեղճ կենդանիներն ուտելու համար մորթելու մտածեր են :

«Այն ատեն ծեր հովիւն ինձ պատասխանեց ծանր դէմքով մը .

« — Աղջիկս, այս բանս Աստուծոյ կողմէ մեզի տրուած պատժոյն հետեանքն է, վասն զի իր օրինաց դէմ վարուեցանք : Աստուած մեր նախահարը միս ուտելու սահմանած չէր . ետքէն անոր պէտքը զվայելք և առանց մեղք սեպելու կերանք :

« — Աւրեմն պէտք է կենդանի միս ուտել, հարցուցի անոր :

« — Աղջիկս, պատասխանեց հովիւր, Խորայելացիք Պաւքան Եղիպտոս ըրին և միս կերան . մենք ալ անոնց պէս ընենք մինչև որ Աստուած մեզ լաւագոյն աշխարհ մ'առաջնորդէ » :

«Ծեր հովիւն խօսքերը մտիկ ընելով՝ անոր կերպարարանին վարժեցայ . իր մորթէ հազուապէս, մոխրագոյն զգակն ու սանդաղները չէի մոտձեր, թէ և առաջին անգամ այս կերպարանքովն այնչափ տոկոզ երեցեր էր ինձ :

«Ընդ հակառակն՝ այս հովիւն այնքան բարեսիրտ էր, այնչափ սիրով մեզի կ'պատասխանէր որ կարծես թէ սիսայ դանի սիրել : Մանաւանդ՝ երբ կ'մտածէի որ այս խեղճ մարդն դաշտերը կ'անցընէր գիշերները, դուքս կ'շարժէր, և կը փափաքէի անոր զրկել իմ մաշակս որչէս զի տաքնայ : Ես

ալ ըսի անոր որ շատ զժբաղդ կ'դանեմ զինքը . այն ատեն իմ ձեռքս բռնեց և ինձ ըսաւ .

« — Իմ փոքրիկ աղջիկս, իմ վրայ շատ մի ցաւիր . իբրեւ է որ հովիւի արուեստը տաժանելի է, պէտք է որ հովիւը կորովի առողջութիւն մ'ունենայ . հարուստ չլինիր . և ուրիշ տխուր բան մը կայ, առանձին կ'սպրիմ բոլոր եղանակները, զիւղը կ'դառնամ պատարայ տեսնելու, և տունս կ'երթամ այս հին սարիս հացով ու պանիրով լեցընելու համար : Բայց նախ՝ երբ օղը դէշ է՝ այս փոքրիկ հիւղս կը մանեմ և ասկից կ'հսկեմ իմ հօտիս վրայ : Ասկից զատ՝ երկու պղտիկ բարեկամներ ունիմ որ իմ նեղութիւններս կ'թեթեւցնեն . մէկն է զիբքս զոր կարդալով օրերս աւելի շուտով կ'անցընեմ, և բարի Աստուածն, որու զեղեցիկ ասաղաղարդ երկնից վրայ կ'զմայլիմ գիշերները :

« — Հատ աղւոր են աստղերը, ըսաւ Մարգարիտ . երբեմն Կիրակոս աղբարը դանոնք կ'բացատրէ ինձ . արդէն տասն հինգ հատ աստղ իրենց անուններով գիտեմ » :

— Ինչպէս, ընդմիջեց Լուսի, միթէ Կիրակոս աղբարն աստղաբաշխութիւն ալ գիտէ :

— Չգիտեմ եթէ բոլորովին տեղեակ է, բայց մեզի առաջին հովիւներուն կեանքը պատմեց, զոր սրբազան պատմութեան մէջ կարդացած ենք, առանց ուշադրութիւն ընելու, և մեզի ըսաւ որ ամենէն առաջ այն նախնի հովիւները ճանչցան աստղերը :

«Հատ կ'փափաքէի որ Կիրակոս աղբարն՝ ինչպէս Մարգարիտն՝ նոյնպէս ինձ տորկեցնէր երկնից աստղերը, որ աւելի զեղեցիկ են քան թէ մեր թղթէ գունդերու վրայ : Գժբաղդաբար դեռ օրերը շատ երկայն էին, ու զգիշեր կը լինէր, և պէտք էր որ ճամբայ ելնէինք :

«Բայց իմ մօրեղբայրս խօսք տուաւ բարեկենդանին դառնալ զիս, որպէս զի ծեր հովիւն տալիք դասերը մօտիկ ընեմ :



— Պէտք է որ մեզի ալ մէկտեղ տանի, պտուղներն բոլոր տղայք, ամենքնիս ալ Կիրակոս աղբարին բարեկամները կ'ուզենք լինիլ:

— Ուրեմն, ըսաւ այն ատեն հանին որ այս պատմութիւնը ըսեր էր լուսթեամբ, ուրեմն միտք չունիս որպէս ինչու եղբայրս երբեք չեմ տեսներ քեզ հետ իմ հարկաւորներս աշխարհէն ելած:

— Ամենեւին չեմ ուզեր, պատասխանեց Եղիս պարզմտութեամբ: Նախ՝ այժմ գիտեմ որ այնպիսի աշխարհ մը չկայ, և եթէ լինէր իսկ, իմ ծեր և հաստ գլխոստով հովիւս չպիտի փոխէի վարդազոյն մատարսէ հաղուստներ ունեցող հովիւներուն հետ:

— Եւ դիտեա ինչու համար, հարցուց հանին:

— Ո՛հ, ըսաւ Եղիս, չեմ դիտեր. աւելի շատ կ'սիրեմ Կիրակոս աղբարը. բայց ինչու համար չեմ կրնար ըսել:

— Լաւ, հիմակ քեզի պիտի խնայընեմ, պատասխանեց հանին: Պատճառն այս է որ Կիրակոս աղբարը ճշմարիտ հովիւ մ'է, որ կ'մտածէ, կ'խօսի, որ բուն մարդու պէս կը շարժի. ընդ հակառակն՝ որպէս ինչու եղբայրս հովիւներն սուտ անձեր են, չինձու հովիւներ են:

«Տղաքս, կ'տեսնեք, որչափ որ զարդարել ուզենք ինչ որ ճշմարտութեան հակառակ է, դարձեալ չկայ քան ճայնա՞յր քեզեզի՞ որպէ՞ս ճշմարտութիւնը:



ԼԵ

### ԲԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Մարդ մը կար որ միշտ կ'բարկանար առանց պատճառի: Այս մարդն որու անունն էր Մահակ, ծառայ մ'ունէր որ իր տիրոջ երեսէն շատ նեղութիւն կ'բաշէր: Ինչ որ ընէր՝ իր տէրը չէր հասներ, և շատ անգամ անիրաւ տեղը յանդիմանութիւններ կ'ընդունէր:

Օրին մէկը Մահակ տուն գարձաւ, երեսը կախած ու փրփրած էր. տեսնելով որ սեղանը պատրաստ է նստաւ որ ճաշն ընէ:

Մահակ ապուրը շատ տաք դատ կամ շատ սառը՝ յայտնի չէ. ինքն չէր կ'անտէր որ բարկութիւնը ծառային վրայ թափէ, ուստի այս առիթը գտաւ: Սեղանատան պատահանը բաց էր. Մահակ թանաքանն առաւ ու վար դա-




ի թը նետեց : Նոյն միջոցին սպասաւորը՝ ձեռքը պնակ մը  
կերակուր բռնած ներս մտաւ, և իր տիրոջ բրածը դիտելով՝  
հանդարտութեամբ՝ բերած կերակուրը պատուհանէն վար  
նետեց . վերջը հացը, զինիին շէշը, բոլոր սխաւաւաներն  
և սիւռոյն առաւ ու մէկիկ մէկիկ նետեց վար :

Այն ատեն Սահակ զայրանալով պոռաց .

«Թշուաւան, այդ ի՞նչ կ'ընես :

— Պարոն, սպասաւանեց սպասաւորը նազ արինով,  
ներեցէք ինձ, չկրցայ ձեր միտքը հասկընալ . կարծեցի թէ  
այսօր միտք ունիք գաւիթը կերակուր ուտել » :

Սահակ՝ իր սպասաւորին տուած այս գասը հասկըցաւ .  
անոր ուշիմութեան վրայ դարմացաւ և անկից ետք՝ ջանաց որ  
այնպէս բարկութեան չբրդի :



ԼԸ

### ՓԱՅՑԱՀԱՅԻՆ ԱՅՐԻ ԿՈՆԸ

Փայտահատ մը մօռնելով՝ իր կինն, Հռիփսիմէ, այրի կը  
մնայ : Հռիփսիմէն լեռնոտ վայր մը կ'ընակէր և ամէն օր  
անտառը կ'երթար փայտ կտրելու : Պատիկ որդի մ'ունէր և  
ամէն անկամուն որ անտառը կ'երթար իր զաւակը հետը կ'առ-  
նէր և մայրաւորուն մէջ կ'դնէր :

Օր մը սովորականէն աւելի ուշացաւ իր որդւոյն մօտ դառ-  
նալու : Արդէն ահ ու գողի մէջ էր, կարծէր թէ դար մը  
կար որ իր զաւակէն հեռացեր էր . ուստի շուտով իր զա-  
կին հանդիպեց տեղը կ'դառնայ . բայց յանկարծ ստակալի  
գայլ մը կ'տեսնէ, որ հրավառ աչքեր, լայն կոկորդ ու-  
նէր : Խեղճ մայրը բոլորովին կ'շուարի, կ'ողջալ որ այդ գա-  
ղանն արդէն իր որդին կերած չլինի : Փառք Աստուծոյ, ճիկ  
մը կ'լսէ որով կ'հասկընայ թէ որդին կենդանի և տերեւալի  
օրօրոցին մէջ կ'հանդիպի :



Բայց սոված կենդանին իր որսին վրայ պիտի յարձակէր, անոր պիտի մօտենար: Խեղճ Հռիփսիմէն այս վտանգը տեսնելով նոր արիութիւն մը կ'ստանայ: Շուտ մը կ'վազէ ու մացառին և թշնամիին մէջ տեղը կ'նետուի և իր մարմնովը զաւակը կ'պաշտպանէ:

Գայլը այս տեսնելով՝ կ'զայրանայ և իր առջի որսը թողլով՝ կատաղութեամբ նոր որսին վրայ կ'յարձակի, զայն բռնելով կ'ուզէ պատառել: Երբոր խեղճ մայրն այս դազանին ժանեաց տակ կ'տատանէր, կ'յիշէ որ դանակ մ'ունի, այդ դանակը կ'հանէ և իր բոլոր ոյժը ժողվելով՝ սոսկալի կենդանոյն սիրտը կ'մղէ: Գազանն ոռնալով կ'մռնի, բայց արիասիրտ Հռիփսիմէն ալ ուժէ ընկած լինելով՝ չկրնար ոտք ելնել և իր տապալած թշնամիին մօտ կ'իյնայ պոռալով. «Ազատեցէք որդիս»:

Իր աղիողորմ աղաղակները լսելով՝ բազմաթիւ փայտահատներ հասան և տեսան որ Հռիփսիմէն արիւնլուայ դետինն ընկած է: Այս սոսկալի կռուին ժամանակ՝ մանկիկն իր մօրը վտանգը չգիտնալով՝ հանդարտ քնայեր էր:

Այն ատեն փայտահատները թէ՛ մայրն և թէ՛ տղան կ'առնեն և հիւզը կ'տանին, իրենց բոլոր ճիւղը կ'թափեն որ դարմաններով Հռիփսիմէն կենդանացնեն: Բայց իրենց բոլոր խնամքն անօգուտ կ'լինի. Հռիփսիմէն սառեր էր...

Այս գործվազութ մայրը կենդանութեան բերելու համար ամենքն ալ յուսահատեր էին, երբոր խեղճ ըրին մանկան դէմքը մօրը դէմքին վրայ դնել: Մայրը թեթեւ շարժում մը կ'ընէ, երեսին գոյնը կ'ղայ, նուազուն աչքը կ'բանայ, և փոքր առ փոքր իր բոլոր մարմինը կ'տաքնայ. իր որդին կը ճանչէ, իր գրկաց մէջ կ'սեղմէ և չկրնար իր գորովը յագեցընել: Սոսկալի դազանին նկարն իր աչքին կ'երևի, իրաւ, բայց շուտ մը կ'մոռնայ, քանի որ իր որդին կենդանի է... Հռիփսիմէն կ'աղատի:



ԼԹ.

# ՄԻԴԱՍ ԿԱՄ ՈՍԵՐ ԶՈՇԱԾԵԼԻԻՔ

Մտենօք հարուստ մարդ մը կ'ապրէր. այս մարդը լատաւոր էր և Միդաս կ'կոչուէր: Աշխարհիս երեսն միայն ունէին կ'սիրէր: Իր արքայական թագը մեծ արժէք ունէր աչքին, վասն զի ոսկեղէն էր: Աերջապէս — որովհետեւ մարդիկ հեազհետեւ խնդր կ'լինին եթէ հոգ չտանին զգաստ լինելու — Միդաս ալ այնքան յիմարացաւ որ հազիւ կ'հանդուրժէր տեսնել կամ շոշափել այն բաներն որ ոսկիէ չէին: Ուստի սովորութիւն ըրեր էր ամէն օր ստորերկրեայ մութ ու սոսկալի սենեակ մ'իջնել, որ իր պալատին վարի դին էր: Ահա այս մութ տեղը կ'պահէր իր գանձը: Այս ահօհօր ծակին մէջ, որ տեսակ մը զնդան էր, Միդաս ինքզինքն երջանիկ կ'սեպէր: Իր ոսկիով լեցուն պարկերը կ'բանար կ'համբէր և ինքնիրեն կ'ըսէր.



«Ո՛ր Միդաս, պերճի թաղաւոր Միդաս, որքան երջանիկ մարդ մ'ես» :

Այսպէս Միդաս իր մութ գանձատան մէջ մեծ հաճոյք կ'ըզար, երբ օրին մէկն ստուեր մը տեսաւ որ իր ոսկիններու կոյտին վրայ կ'իջնէր : Եւստ մը գլուխը վեր վերցուց և ինչ նշմարէ աղէկ — օտարականի մը գէմքն որ լուսամուտի մը նեղ ու պայծառ արևու ճառագայթէն կ'երևէր : Պատանի մ'էր այս զուարթ ու կարմրուն երեսով : Օտարականը սենեկին չորս պին նայեցաւ, ոսկեղէն բաները դիտեց և ապա նորէն Միդասին դարձաւ նայելու :

«Գու հարուստ մարդ մ'ես, Միդաս բարեկամ, ըստ աւանոր - կ'ստարակուսիմ որ աշխարհիս երեսն այսչափ ոսկի զուտի սենեկի մը մէջ» :

— Բաւական ոսկի ունիմ, բաւական ունիմ, պատասխանեց Միդաս դժգոհ դէմքով մը, Բայց վերջապէս եթէ մտածես որ այս ոսկին դիզելու համար բոլոր կեանքս վառնեցի, մեծ բան մը չէ : Եթէ մարդ հազար տարի ապրէր, այն ատեն կարելի է կարող լինէր հարստանալու :

— Ի՞նչ, պոռաց օտարականը, ուրեմն դու գոհ չես» :  
Միդաս գլուխը ցնցեց :

«Եւ կ'աղաչեմ, ինչ բանով կրնաս գոհ լինիլ, հարցուց օտարականը : Եւստ հետաքրքիր եմ այդ բանը հասկրնալու» :

Միդաս լուռ կեցաւ ու մտածեց. վերջը ըսաւ որ դադար փար մը միտքն ընկաւ :

«Լաւ, Միդաս, ըսաւ օտարականը, ըսէ ինձ քու փափաքդ» :

— Իմ միակ փափաքս այս է, պատասխանեց Միդաս, որ բոլոր շոշափած բաներս ոսկի գտնան :

— Ոսկի շոշափելի կ'ուղես, հա, պոռաց օտարականը : Բայց սառի՞ք ես բոլորովին որ ասով գոհ պիտի լինիս :

— Ի՞նչպէս չէ, ըսաւ Միդաս :

— Եւ միթէ չըպիտի զղջաս այդ փափաքդ կատարուած տեսնելով :

— Ինչո՞ւ պիտի զղջամ, հարցուց Միդաս. բոլորովին երջանիկ լինելու համար ուրիշ բան չեմ պահանջեր :

— Ուրեմն թող փափաքդ կատարուի, պատասխանեց օտարականը, մնաս բարեւ ըսելու համար իր գլուխն օրելով : Վաղն՝ արեւը ելնելուն՝ ոսկի շոշափելիքը պիտի ստանաս :

Զգիտցու իր թէ Միդաս լապաւորին քունը տարաւ այն գիշեր : Այս իրաւ է որ հաղիւ թէ արշալոյսն առաւօտուն ծագեցաւ և բլուրներուն վրայ երեցաւ. որ Միդաս թագաւորն արդէն աչքերը խոշոր բացեր էր, և իր թեկն անկողնէն դուրս տարածելով, սկսեւ էր իր ձեռաց ներքե կանուած բաներուն դպչիլ : Եւստ հետաքրքիր էր հասկընալու թէ արդեօք ոսկի շոշափելիքն ստացաւ, ինչպէս որ օտարականը խոստացեր էր. այսպէս իր մասն այլ և այլ բաներու վրայ դրաւ, բայց սաստիկ տխրեցաւ երբ տեսաւ որ առաջուան պէս նոյն նիւթը կ'մնային և չէին փոխուեր : Չափազանց նեղացաւ այս բանիս վրայ, վասն զի իր յոյսերը պարապ ելեր էին, և հետզհետէ կ'տրամբէր՝ մինչև որ առաջին շառաիղն պատուհանէն ներս մտնելով՝ իր գլխին վերել գտնուած ձեղունը լուսաւորեց : Միդասին այնպէս երեցաւ որ այս գեղին պայծառ շառաիղն դարմանալի կերպով կ'ցրանար անկողնին վերմակին վրայ : Երբ աւելի դիտեց, որչափ մեծ եղաւ իր ուրախութիւնն տեսնելով որ սաւանն ոսկիէ բարակ ուտայն մը դարձեր էր : Ոսկի շոշափելիքն իրեն եկեր էր առաջին շառաիղով :

Միդաս ուրախութենէ խելքը թուոյց և սենեկին չորս դին վաղեց և իր առջին ինչ որ ելաւ ձեռօքը բռնեց : Անկողնին մէկ ձողը բռնեց և անմիջապէս ձողն ոսկի դարձաւ : Պատուհանի մը վարագոյրը քաշեց, որպէս զի իր ըրած հրա-



շալի բաներն աւելի պայծառ տեսնէ, և կտաւը ծանրացաւ. ձեռքին մէջ — ոսկի կոյտ մ'եղաւ: Ետտ մ'իւր հագուստներն հագաւ և խնդութիւնն անշափ եղաւ երբ ձեռք մը ոսկի հագուստ մը տեսաւ, թէ և անոր բեռը քիչ մը ծանր էր:

Արդ՝ Միգաս թագաւորն այնքան ոգի առաւ, որ իր պալատն շատ փոքր կ'երևէր իրեն համար: Ուստի ելաւ պարտէզը գնաց: Սոյն պարտիզին մէջ նորարոյղող սիրուն վարդենիներ գտաւ, նոյնպէս ուրիշ նորափթիթ ծաղիկներ:

Բայց Միգաս այս ամէն բաներն շատ աւելի թանկագին ընելու միջոցը գիտէր քան թէ վարդենիներն: Այսպէս նեղութեամբ մացառէ մացառ գնաց մինչև որ բոլոր ծաղիկներն ու բողբոջները, նոյն իսկ անոնց ծոցը գտնուած որդեր ոսկի կտրեցան: Նոյն միջոցին այս աղոր դործն աւարտեցաւ: Միգաս թագաւորն նախաճաշի կանչուեցաւ, և որովհետև առտօտեան օդն իրեն անբարեկարգութեամբ էր, շուտ մը պալատն եկաւ:

Միգաս բաժակ մ'առաւ և գինի լեցուց, և իբրև բնական բան, բաժակն ոսկի եղաւ երբ զայն սեղանին վրայ դրաւ: Միգաս ինքնիրեն մտածեց որ պերճութեան մեծ նշան մ'է թագաւորի մը համար եթէ ոսկի պնակներու մէջ նախաճաշ ընէ, և սկսաւ շփոթիլ թէ ինչպէս ասորհովի պիտի պահէր այնքան գանձեր:

Այս մտմտալու ատեն՝ զարմացաւ մնաց երբ դիտեց որ բերանը տարած ջուրն իսկոյն ծորելի ոսկի դարձաւ, և քիչ մ'ետք՝ կարծր ձուլ եղաւ:

«Հա՛, հա՛», պոռաց Միգաս, բոլորովին ապշելով:

Ապա սկսաւ կերակուր ուտել՝ բայց հազիւ թէ ձեռքով կերակուրին դպաւ որ շուտ մը կտոր մը ոսկի կտրեցաւ:

«Այս ինչ բան է, պոռաց Միգաս, այսպիսի մեծագին նախաճաշ մ'ունենամ իմ առջևս, և չկրնամ բան մ'ուտել: Այս հարստութեան մէջ սովամահ պիտի մեռնիմ»:

Եւ իրօք, իմ փոքրիկ աղաքս, միթէ ձեր կենաց մէջ այսպիսի տխուր վիճակ մը տեսած էք: Թագաւորին առջևս ամենէն ճոխ կերակուրներ կային, և բուն իսկ այդ ճոխութեան պատճառաւ անօգուտ էին: Ամենէն աղքատ մշակն որ իր սեղանին վրայ հացի կտոր մը և բաժակ մը ջուր ունի, աւելի բարեբաղդ էր քան թէ Միգաս թագաւորը, որու փափուկ կերակուրներն ոսկիի գին ունէին:

Այս խորհրդածութիւններն այնքան տապնապ տուին իմաստուն Միգաս թագաւորին որ սկսաւ երկբայիլ թէ արդեօք հարստութիւնն է միայն փափաքելի բանն աշխարհիս վրայ:

Հատ տխուր բաներ պիտի նկատմէի ձեզ եթէ ըսէի թէ ինչպէս Միգաս, իր բոլոր փափաքները կատարուած տեսնելու միջոցին՝ սկսաւ իր ձեռքերն ոլորել և ողբալ, և կը փափաքէր որ աշխարհիս ամենէն աղքատ մարդը լինէր:

Երբ այս յուսահատ վիճակի մէջ կ'գտնուէր՝ յանկարծ օտարական մը տեսաւ, որ դրան մօտ կեցեր էր: Միգաս գլուխը վար ծռեց առանց խօսելու, վասն զի տեսաւ մի և նոյն գէմքն որ առջի օր իր դանձատունն երեցեր էր, և ամէն բան ոսկի դարձնելու ձիրքն անոր տուեր էր:

«Լա՛ւ, Միգաս բարեկամ, ըսաւ օտարականը, ըսէ ինձ ինչպէս կ'երևի քեզ այդ ոսկի պարզէն»:

Միգաս գլուխն օրեց:

«Ես շատ ապերջանիկ եմ, ըսաւ Միգաս:

— Հատ ապերջանիկ, իրա՞ւ: Միթէ իմ խոստումս հաւատարմօրէն չպահեցիք. միթէ սրտիդ բոլոր փափաքները չկատարուեցան»:

— Իսկին ամէն բան չէ, պատասխանեց Միգաս:

— Ա՛հ, ուրեմն երեկուրէն ի վեր խեղդող դուխդ եկաւ, ըսաւ օտարականն: Հիմակ նայինք, ինչ պիտի ըսես: Ո՛ր բանն աւելի մեծ արժէք ունի. ոսկի շոշափելեաց պարզէն թէ ոչ բաժակ մը պղղ ու վճիռ ջուր:



— Ո՛հ, օրհնեալ ջուրը, պուռաց Միգաս, իմ պապա-  
կեալ բերանս նորէն չախտի թրջէ :

— Ո՛րն աւելի նախադաս կ'սեպես, շարունակեց օտարա-  
կանը, ոսկի շօշափելիքը թէ ոչ պատառ մը հաց :

— Պատառ մը հաց, պատասխանեց Միգաս, աւելի կ'ար-  
ժէ քան թէ աշխարհիս բոլոր ոսկին :

— Միգաս թագաւոր, կ'տեսնեմ որ աւելի խելք դրեր  
ես, ըսաւ օտարականը, անոր երեսը նայելով : Ա՛րեւի որ  
քու սիրտդ բոլորովին ոսկի դարձած չէ : Եթէ իրօք ոսկի  
գաւնար, յուսահատական պիտի լինէր վիճակդ, բայց դեռ  
բաւական խելք ունիս հասկընալու որ ամենէն հասարակ բա-  
ներն, այն բաներն որ ամենուն ձեռաց տակ կ'գտնուին, ա-  
ւելի արժէք ունին քան թէ այն հարստութիւններն որոց հա-  
մար շատ մարդիկ կ'մաքառին որ ստանան : Հիմակ ստոյգ ը-  
սէ, միթէ անկեղծութեամբ կ'փափաքին այդ ոսկի շօշափե-  
լիքէն ազատիլ :

— Ատելի է ինձ այդ ձիրքը, պատասխանեց Միգաս :


— Ուրեմն, ըսաւ օտարականը, դնա՛ պարտէզդ և անոր  
մէջէն անցած դիտակին մէջ նետուէ : Նոյնպէս աման մը  
ան, նոյն ջրով լեցուր և սրսկէ այն ամէն բաներուն վրայ  
զոր կ'ուզես ոսկիէն իրենց առջի նիւթին դարձընել : Եթէ  
այս բանս սրտի մտօք ընես, կրնայ դարմանել այն ձախոր-  
դութիւններն որ քու ազահոութենէդ առաջ եկան :

Միգաս թագաւորը խոնարհութիւն ըրաւ և երբ իր գլու-  
խը վերցոյց՝ տեսաւ որ օտարականը մեկնել էր :

Այն ատեն Միգաս շուտ մը մեծ հողէ աման մ'առաւ —  
բայց ափսոս, անոր դպչելուն պէս ոսկի եղաւ — և դետակին  
կողմը վազեց : Երբոր ափունքը հասաւ՝ գլխիվայր անոր մէջ  
ընկաւ : Այն ատեն՝ երբոր ամանն ջրով լեցուց, շատ ու-  
րախ եղաւ որ ոսկին պարզ աղւոր հող դարձաւ, ինչպէս որ  
էր դպչելէն առաջ : Միգաս ինքն իր մէջն ալ փոփոխու-

թիւն մը զգաց : Կարծես թէ իր սրտին վրայէն պաղ, ծանր  
բեռ մ'եղաւ : Գեպափին վրայ մանիշակ մը տեսնելով՝ Մի-  
գաս իր մատովն անոր դպաւ և չափազանց ուրախացաւ որ այս  
զմայլելի ծաղիկն իր ձիրանի կապոյտ գոյնը պահէ՝ փոխա-  
նակ դեղնելու : Ուստի իրօք իր դպածն ոսկի ընելու անի-  
ծեալ ձիրքը բոլորովին կորուսել էր :

Միգաս թագաւորը շուտով պալատը դնայ և ջուր արկեց  
այն բաներուն վրայ որ ոսկի եղել էին . ապա պարտէզը  
դարձաւ և մնացած ջուրն ալ վարդենիներուն վրայ թափեց,  
որոնք անմիջապէս իրենց դեղնութիւնը կորուսին և հալա-  
բաւոր վարդեր բացին :







խ

### ՊԵՏՐՈՍ ԵՒ ՀԱԼԿԻԹՆԵՐԸ

Պետրոս պարտք ուներ իր Ղուկաս դրացւոյն. և որովհետեւ շատ աղքատ էր չէր կրնար վճարել: Օր մ'իւր դրացւոյն ըսաւ.

«Բարեկամ, անկարող եմ տալ քեզի իմ պարտքս դրամով. քանի մը հաւեր ունիմ, եթէ կամիս այդ հաւերն իմ պարտուցս տեղն աւ»:

Ղուկաս հաւ չունենալուն՝ ընդունեց Պետրոսին խնդիրն և կարծեց թէ այս սակարկութիւնն իրեն համար շահաւոր էր:

Նոյն օրն հաւերը Ղուկասին տունը փոխադրուեցան. բայց սրովհետեւ փակուած չէին, հաւերը նորէն Պետրոսի տունն, իրենց հին հաւնոցն երթալով հաւկիթ ածեցին:

Պետրոսին փոքրիկ որդին՝ Գառնիկը, որ դբելթէ եօթը տարեկան էր՝ հաւերուն ձայնը լսելով՝ վազեց և հաւնոցին մէջ հաւկիթները դատաւ:

«Հա՛, հա՛, ըսաւ ինքնիրեն, ահա սիրուն թարմ հաւկիթներ, երբ մայրս գրտէն դայ շատ պիտի դո՛հ լինի. երեկոյն կերակուր ընելու համար պիտի եփէ»:

Բայց քիչ մ'ետք՝ նորէն ըսաւ ինքնիրեն.

«Այս հաւկիթները չեն կրնար մերը լինիլ, անոնք Ղուկասինն են: Քանի որ հաւերն ալ իրենն են, հաւկիթներն ալ իրենը պիտի լինին: Աւելի աղէկ կ'լինի եթէ առնեմ աւոր տանիմ՝ յանձնեմ»:

Ըուտ մը դուրս ելաւ և գնաց Ղուկասին տան դուռը զարկաւ:

«Ահա, դրացի, ըսաւ Գառնիկ, ահա քեզի բերի հաւկիթները, ձեր հաւերը մեր հաւնոցին մէջ զանոնք ածեցին:

— Եւ ո՞վ ըսաւ քեզի որ զանոնք ինձ բերես, հարցուց Ղուկաս:

— Մէկը բան մը չըսաւ ինձ, պատասխանեց Գառնիկ:

— Ի՜նչ, միթէ ինքնայորդա՞ր բերիր:

— Այո՛, ըսաւ Գառնիկ, վասն զի մտածեցի որ եթէ հօրս գալուն սպասէի, հաւերը փնտռելու պիտի ելնէիք և մեր տունը պիտի գտնէիք:

— Շնորհակալ եմ, տղաս», ըսաւ Ղուկաս:

Եւ Գառնիկ տունը գնաց և մինակ գետնախնձոր կերաւ երեկոյն: Բայց ինքնիրեն ըսաւ.

«Մեր յատուկ գետնախնձորներն աւելի լաւ են քան թէ ուրիշին հաւկիթները»:

Ամիսներ անցան, և Գառնիկ մոռցեր էր հաւկիթներուն դէպքը, երբ օր մը Ղուկաս կողով մը ձեռքը բռնած Պետրոսին տունն եկաւ, Գառնիկը կանչեց և ըսաւ.

«Նայէ այս կողովին մէջ»: Գառնիկ մէջը նայեցաւ և չորս հատ վառեակ տեսաւ որ բաւական մեծկալ էին և կարող էին իրենց մօրմէն հեռանալ:

«Ո՛ սիրուն փոքրիկ վառեակներ, պողաց Գառնիկ, արդեօք իմ աղւոր հաւերուն ձագուկներն են»:



— Այո՛, անոնց ձաղուկներն են, ըստ Ղուկաս, և քեզի տալու համար բերի. ա՛ռ, քուկդ են: Երբոր այն հակիթներն ետ բերիր, բարի և արդար դորձ մ'ըրիր. բայց այն ատեն ես ալ ինքնիրենս ըսի.

«Նա փոքրիկ տղայ մ'է, և պէտք է փոյթ տանիմ և անոր սորվեցընեմ որ ուղղութիւնն ամենէն լաւ. քաղաքավարութիւնն ու միանգամայն արդարացի բան մ'է: Ուստի ասոնք են առաջին չորս հակիթներն զոր մեր հաւերն ածեցին. և եթէ անոնց վրայ հող տանիս, քիչ ատենէն քեզի հակիթներ պիտի տան»:

Գառնիկ մեծապէս շնորհակալ եղաւ Ղուկասին, և կարելի չէ ըսել թէ ո՛րչափ զոհ եղաւ երբոր նոր հակիթ մը մօրը տարաւ: Այս հակիթն իր յատուկ հաւին ածածն էր իր յատուկ հանոցին մէջ:



ԽԱ.


ԵՂՋԵՐՈՒՆ

Ամառ օր մը եղջերու մը ծարափ լինելով՝ լճակի մը եզերքն իջաւ ջուր խմելու համար: Զուր խմելու ատեն՝ իր մարմինը տեսաւ ցօլացած՝ ջրին մէջ:

«Ի՞նչ գեղեցիկ և ուժով են, պոռաց եղջերուն, այս իմ եղջիւրներս. բայց այս իմ տկար ու բարակ ոտքերս ո՛րչափ անշնորհ են»:

Երբոր այսպէս ՚ի բնէ ունեցած կերպարանին վրայ պակասութիւններ կ'դտնէր, որսորդներ և շուներ դէպ իր կողմն սկսան վազել: Եղջերուն՝ որ իր ոտքերն այնչափ տգեղ զտեր էր՝ սկսաւ խոյս տալ այս ոտիցն արագութեան շնորհիւ և իր թշնամիներէն պրծելու յաջողեցաւ. բայց իր եղջիւրներն՝ որով կ'պարծէր, մացառներու խառնուեցան այնպէս որ բռնուելով չկրցաւ փախչիլ և որսորդները վրայ հասնելով՝ զինքը սպաննեցին:






ԽԲ

ԷՇՆ ՈՒ ԻՇԱՎԱՐԸ

Իշավար մ'իր էջը կ'քշէր երկար ճամբու մը վրայ, երբ քանկարծ էշն արահետը լծողով՝ շուտ շուտ սկաւ վազել գէալ 'ի փոսի մ'եզըր։ Գլխիվայր ընկնելու վրայ էր՝ երբ իշավարն ետեէն վազեց և անոր պոչէն բռնելով ջանաց զայն ետ ետ քաշել։ Բայց էջը դէմ կեցաւ և հակառակ ճամբան քալեց, այնպէս որ իշավարը լծող տուաւ ըսելով։

«Շատ աղէկ, ելձէ գլխուդ փշածն ընել կ'ուզես, ես չեմ կրնար քեզ արգիլել։ Կամշոտ էշն ծուռ ճամբան իր-բն շիտակ ճամբայ կ'բռնէ կ'երթայ»։



ԽԳ.

ՊԱՅՏ

Օրին մէկը՝ դիւղացի մը՝ իր որդին Թովմասը կ'առնէ և ճամբայ կ'եկնէ մօտակայ քաղաքն երթալու համար։ Ճամբուն վրայ պայտի կտոր մը տեսնելով իր որդւոյն կ'ըսէ.

«Թովմաս, նայիր, աւասիկ պայտի կտոր մը, առ զայն դեանէն ու գրպանդ դիր»։

— Բա, ըսաւ Թովմաս, այդ շնչէն բանին համար չարժեք որ ծռիմ»։

Հայրը պատասխան չտուաւ. այլ ինք պայտը դեանէն առաւ ու գրպանը դրաւ։ Յետոյ մօտակայ դիւղին պայտարին խանութը մաննելով՝ այդ երկաթի կտորը քանի մը փարայի ծախեց և անով կեռաս գնեց։

Այնուհետեւ հայր ու որդի իրենց ճամբան շարունակեցին։ Այն օրը սաստիկ տաք կար, բաւական ճամբայ ունէին և



ներու, և հեռուէն ոչ տուն կ'երևէր, ոչ անտառ և ոչ աղբիւր: Թովմաս սկսաւ յոգնիլ, ծարաւի էր և կաղն ՚ի կաղ իր հօրն ետեւէն կ'քալէր:

Այն ատեն հայրը մէկ երկու կեռաց գետինը ձգեց, առանց յայտնելու որ գիտմամբ կ'ձգէր: Թովմաս խենթի պէս ծռեցաւ ու գետնէն ժողվելով կեռասներն շուտ մը բերանը տարաւ որ քիչ մը պաղշկի ու ծարաւն անցնի:

Քիչ մը քալելէն ետեւ՝ հայրը նորէն մէկ քանի կեռաց վար նետեց և Թովմաս նոյն եռանդով գետնէն առաւ: Այսպէս շարունակ ծռելով ու ելնելով Թովմաս լմնաց կեռասներն զոր հայրը գետինը կ'ձգէր:

Երբոր վերջին կեռասը կերաւ հայրը Թովմասին դարձաւ ու ըսաւ.

«Կ'նայիս, որդեակ, եթէ անդամ մը միայն ծռելով պայտն առած լինէիր, հարիւր անգամ չպիտի ծռէիր կեռասները հաւաքելու: Չնչին բան մ'իսկ կընայ ՚ի հարկին մեծ բանի տեղ անցնիլ»:



ԽԳ.

## ԻՆՉ ՕԳՈՒՑ ՈՒՆԻՆ ՇՈՒՆԵՐԸ

Օր մը Կարապետ և իր քոյրն Եւդինէ նախաճաշ կ'ընէին փոքրիկ սեղանի մ'առջև՝ երբոր Թմբուկի ու ջնարի ձայն մը լսեցին փողոցը:

«Ի՞նչ է այս», պուաց Կարապետ իր զլուխը անկելով: Բայց Եւդինէ արդէն պատշգամն ելեր էր և կ'իջէր. «Կարապետ, մամա, եկէք»:

Այս աղաղակը լսելով Կարապետ ու մայրը պատշգամն ելան: Ի՞նչ կար փողոցը:

Մարդ մը ու կին մ'որ երկու հաս չափուած շուներ պարել կ'ապին, մէկը զննուորի պէս հագուեր էր միւսը կնկան պէս:



Բայց ու եղբայր այս շուներուն հազուադէպ ու պարզ տեսնելով այնքան ծաղրելի կտան որ սկսան քահ քահ խնդալ :

Մարդը ջնար կ'ածէր, կ'ինը թմբուկ, և շուները շարունակ կ'պարէին. անցնող դարձող մարդիկ կ'կենային որ տեսնեն, ամենքը կ'ծիծաղէին . . . :

Բայց Խզիկնէին մայրը չէր ծիծաղեր, տրտում տխուր կը նայէր շուներուն պարին :

«Ի՞նչ ունիս, մայրիկ, հարցուց Խզիկնէ. արդեօք այս ծիծաղաշարժ շուները քեզ չեն զուարճացնէր :

— Խեղճ շուներն ալ չեն զուարճանար, պատասխանեց մայրը :

— Ի՞նչպէս, կարծես թէ չեն զուարճանար, վրայ բերաւ Կարապետ. բայց նայէ ի՞նչպէս կ'կաքաւեն :

— Բայց չեն տեսներ որ ամէն վայրկեան վար կ'իյնան իրենց առջևի թաթերն, այնչափ շատ յողնած են՝ երկու ոտքի վրայ կենալով : Նայէ ի՞նչպէս կ'զարնէ մտրակով տէրն որպէս զի երկու ոտքի վրայ կեցընէ, ցատկել տայ :

— Ո՛հ, ճիշտ է, ըսաւ Խզիկնէ : Նայէ սա չար մարդը : Ինչո՞ւ համար կ'զարնէ այս խեղճ շուները, քանի որ յողնած են :

— Բայց, մայր իմ, հարցուց Կարապետ, ինչո՞ւ համար այս շուները զուարթ չեն և չեն զուարճանար պարելով : Եւ դիմէ, միթէ մնիք շատ դո՛հ և ուրախ չէ՞ք լինիլ երբոր մեր հայրն մեզի պարել կ'տայ, ինքն ալ ջութակ ածելով :

— Սիրելի զաւակներս, պատասխանեց մայրը, դո՛հ էք, վասն զի երբոր կամիք այն աստի կ'պարէք և ձեզի չեն բռնադատեր որ պարէք : Բայց այս խեղճ շուները պարելու փափաք չունին. այլ կ'բռնադատեն որ կաքաւեն առաւօտէն մինչև իրիկուն. և դժբաղդ են, վասն զի Աստուած զանոնք պարելու չսահմանեց :

— Արդեօք Աստուած շուները բանի մը ծառայելու սահմանեց, հարցուց Կարապետ :

— Եւ միթէ Աստուած անօդուտ բան մը ստեղծած է, պատասխանեց մայրը :

Կարապետ եօթը տարեկան էր. տեսածը հասկնալու շատ փափաք ունէր և իրմէ աւելի բան դիտցող անձերու այլ և այլ հարցումներ կ'ուղղէր :

«Այս շուներն իրենց տէրերուն օդուտ չունին քանի որ անոնց համար ստակ կ'վաստիկին :

— Որդեակ, պատասխանեց մայրը, օդտակար լինելու կերպերը շատ են. բաւական չէ որ մարդիկ վաստակ մը հանեն Աստուծոյ տուած բաներէն, այլ պէտք է մանաւանդ ճշմարիտ բարիքի մը համար ՚ի գործ ածեն :

— Ուրեմն Աստուած ի՞նչ կերպով կ'ուզէ որ շուները գործածենք :

— Կ'ուզէ որ անոնց ունեցած բնագոյովն և յատկաւ թիւններուն համեմատ գործածենք : Այսպէս՝ շուները սովորաբար հլու, ուշիմ, իրենց տէրերուն կապուած կենդանիներ են. այնպէս նուրբ հոտոտելիք ունին որ շատ մը կ'իմանան հեռուէն թէ իրենց մօտեցողը թշնամի՞ մ'է թէ ոչ բարեկամ : Անվախ են և արի. պէտք չէ որ այս աղ որ յատկաւ թիւնները չնչին բանիքու գործածուին, իրենց բնութեան դէմ :

— Ի՞նչ ճշմարիտ օդուտ կրնան ունենալ շուները, հարցուց Կարապետ . . . » :

«Տոն միջոցին՝ հեռուէն ջութակի մը ձայնը ըստեցաւ. մայրը պատշգամբն վար ծոնեցաւ որ նայի :

«Նայեցէք, զաւակներս, սա կողմն նայեցէք» :

Տղայք նայեցան և տեսան խեղճ կոյր մ'որու կ'առաջնորդէր չուանով շուն մը քանգրաճալ :

Շան բերանն փայտէ ափսէ մը կար, այս ափսէն անցորդներուն կ'երկնցընէր որպէս թէ ողորմութիւն ուզէ : Եւ որովհետեւ իր տէրը ծեր էր և չէր կրնար շուտով քալել, բարի շունն անոր առջևէն քայլ առ քայլ կ'բալէր, կամա-



ցուկ մը չուանով քաշելով, որպէս զի առուակէ, կառքէ և ամէն տեսակ վտանգէ զգուշացնէ :

Տղար նայեցան այս շան և կարծես թէ հասկըցան որ ճշմարիտ բարիք մը կ'կատարէր :

«Հատ աղէկ, զոչեց Եւզինէ, առասիկ բարի շուն մ'որ այս խեղճ ծերին մեծ ծառայութիւն մը կ'մատուցանէ :

— Ո՛հ, այդ իրաւ է, ըսաւ Կարապետ համամիտ զրտնուելով :

— Այս շունը, շարունակեց մայրն, յաբէ շուներու տեսակէն է. կարելի է որ ամենէն մտացին է : Չարաշուններն կ'որսուած բաներ գտնել ու բերել զիտեն. զոնները բանալ ու գոցել կ'սորվեցընեն անոնց : Անդամ մը Մէն անունով շուն մը տեսայ որ թուղթ խաղալ, շարժական տառերով խօսքեր շինել և ուրիշ այլ և այլ խաղեր սորվեր էր իր տիրոջ ձեռօք : Իրաւի շատ հետաքրքրական բաներ էին ասոնք. բայց որովհետեւ ճշմարիտ օգուտ մը չունին, աւելի լաւ կ'սեպեմ կոշտ մուրացկանին շան ըրածը :

— Սակայն, սիրելի մայր, ըսաւ Կարապետ, ամէն շուներն այս կերպով չեն կրնար ծառայել. այն ատեն պէտք կ'լինէր որ շատ կոյրեր գտնուէին :

— Ո՛հ, փառք Աստուծոյ որ կոյրեր քիչ են, պատասխանեց մայրը ժպտելով. ուստի շուներն իրենց ուժին և յատկութեան նայելով՝ այլ և այլ գործերու կ'պարապին : Կան շուներ որ որսի կ'երթան, կան շուներ որ իրենց տէրերուն տունները կ'պահպանեն, կան այնպիսիներ որ ոչխարներու հօտերը կ'պահեն :

— Ես կարծէի թէ, ըսաւ Եւզինէ, մարդիկ կ'պահպանեն ոչխարները :

— Ի հարկէ հոգիներու՝ ձեռք, յարեց Կարապետ :

— Այո՛, ըսաւ մայրն, բայց հովիւ մը չկրնար մինակը հարիւրաւոր ոչխարներ առաջնորդել, եթէ ժիր ու արթուն

շուն մ'իրեն օղնական չունենայ : Այն շունն որ հովուի շուն կ'կոչուի այնչափ լաւ գիտէ թէ ինչ է իր գործն՝ որ երբեմն կարծես թէ բանականութեան տէր է : Եթէ ոչխարներն հեռանան այն տեղէն ուր պիտի արածուին, շունն անոնց առաջը կ'կենայ և կ'արգիլէ : Եթէ ցրուին, զանոնք կը հաւաքէ : Եթէ դայլ մ'երևան գայ, հովուին շունն՝ զայն տեսնելուն՝ հաչելով իր տիրոջ իմաց կ'սայ, ապա դայլին ետեւէն կ'վազէ, զայն կ'հալածէ կամ անոր հետ կ'մաքառի :

— Ուրեմն չը վախնար, ըսաւ Եւզինէ :

— Ո՛հ, պատասխանեց մայրը, չվախնար, քաջ է և կարծէ թէ բարի գործ մը կ'ընէ հօտը պաշտպանելով :

— Վ'փափաքէի հովուի շուն մ'ունենալ, զոչեց Կարապետ : Ասիրեմ զայն քանի որ քաջասիրտ է :

— Ի՞նչ պիտի ընէիր, հարցուց մայրը :

— Ի՞նչ պիտի ընէի . . . ինչ որ դու կ'ընես սպանիական շունդ. իմ սենեկիս մէջ պիտի պահէի, պզտիկ կարկանդակներ անոր պիտի տայի, և վզէն ժապաւեն մը կախելով պտրտելու պիտի տանէի :

— Բայց, իսաւ մայրն, հովուի շունը չախորժիր կարկանդակ ուտել և պարապնալով. հովուի շունն աշխատանք ու սե հաց կ'սիրէ : Ասկից զատ՝ այդ մեծ ուժեղ շունն որ հաստ մաղեր, սե ու թուխ դոյն ունի, բնաւ աղուր չերեիր սրահի մը մէջ, իր երկարաձիգ ականջներով և սրածայր ցուկով : Իսկ սպանիական շունն ուրիշ բան է. պզտիկ հասակ ունի, մետաքսի պէս երկար մաղեր, խիտ պոչ և աւանջներ որ մինչև գետինը կ'կախուին :

— Չմոռանա՞ր որ սպանիական շունն քանի մը յատկութիւններ ունի, ըսաւ փոքրիկ Եւզինէն. իմ հանիւս ոտքին վրայ կ'պսակի որ զանոնք տաքցնէ, և երբ մէկը սենեակը մտնէ կ'սխի հաչել :

— Այո՛, սիրելի աղջիկս, պատասխանեց մայրը, բայց




տարանիական շունն հանիւրդ ոտից մօտ պառկելով ինքզինք տաքցընել կ'ուզէ . սովորաբար այնչափ երես կ'տան աւոր , այնչափ զգուանք և անուշ կերակուրներ կ'ընդունի , որ որ կրամոլ , նախանձոտ է և չթողուր որ ուրիշ կենդանի մը մօտենայ : Ասկից զատ՝ անօգուտ պահապան մ'է , վասն զի միշտ փակուած մնալուն՝ օտար մը տունը մտնելէն ետեւ կ'հաչէ , մինչդեռ ֆափառ , օրինակի համար , դեռ օտար մը ներս չմտած կ'իմացընէ :

— Մայր իմ , ինչ տեսակ շուն է դամիւն , արդեօք Սիմոն գեղջուկին ունեցածն է :

— Բնաւ տեսած չեմ , բւէ ինձ թէ ինչպէս է կերպարանքը :

— Շատ խոշոր է , շիկադոյն , մեծ թաթեր ունի , խոշոր պոչ մը , ողորկ մորթ , մեծ կոկորդ մը և պոկուներ որ երկու կողմէն կ'կախուին : Չգիտեմ թէ ականջներն ինչպէս են , ինչու որ կտրած են : Սիմոն գեղացին սայլակին տակը կ'կապէ զայն , և երբ մարդ մ'անոր քովէն անցնի կատաղու-



թեամբ կ'հաչէ և անցորդներուն կողմը կ'յարձակի որպէս թէ զանոնք պատառել կ'ուզէ , բարեբաղդաբար կ'ապուած է . . .

— Սիրելի դառակ , շատ աղէկ նկարագրեցիր դամիւն մը պատկերը , և կ'տեսնես թէ որչափ ժիր է և իր տիրոջ ստացուածքն ինչպէս կ'պաշտպանէ : Ասոր համար ամէն պարակի , ամէն հեռաւոր տուներու մէջ դամիւններ կ'պահեն զող և չարապործ մարդերու դէմ , վասն զի դամիւն մը սոսկ կալի թշնամի մ'է անոնց համար :

— Եւզինէ կ'պատմէ թէ դամիւնները շատ խոշոր են , ըստ կարապետ . սակայն ես մտաւաճառին դամիւնը տեսայ որ Սիմոնին շունին չափ խոշոր չէ :

— Մտաւաճառին շունն դամիւն չէ , այլ Պոլլօյի ըստած տեսակէն է , պատասխանեց մայրը , և մտաւաճառն ալ զայն հեռացուց իր քովէն , ինչու որ շատ վտանգաւոր շուն մ'էր : Այս Պոլլօյի ըստած շուներն այնչափ ուժեղ կզակներ ունին , որ երբ խածնեն բնաւ չեն թողուր : Կան երկիրներ՝ ինչպէս Անկլիա ու Սպանիա , ուր սովոր են կենդանիներն իրարու դէմ կուռել սալու , Պոլլօյն ալ այս տեսակ կռիւներու մէջ կ'հանեն : Իրաւ է որ իբրեւ պահապան շուն Պոլլօյը շատ օգտակար է , բայց այնքան ահարկու և անընդել է որ արգիլուած է քաղաքներու մէջ այդ շունէն պահելը :

— Եւ շատ աղէկ կ'ընեն , յարեց փոքրիկ Խլդինէն , պէտք չէ չար շուներ պահել , որ բնաւ չեն ընտանեանար :

— Աւելի աղէկ է բնել որ պէտք է ամէն շուն իր բնաւորութեան նայելով դործածել . այսպէս Պոլլօյի՞ զօրեղ և ահարկու շուներու պէս՝ շատ թանկագին է վայրի գաղանաւոր որսալու համար :

— Ի՞նչ կ'ըսես , մայր իմ , ըստ կարապետ , ես ալ որսի գացած եմ և հայրիկին բոլոր շունները գիտեմ . բայց ասոնք Պոլլօյի չեն , և ամենեւին չարութիւն չունին :

— Այո , դու կարգաւորու որսի գացած ես , վրայ բնաւ մայրը ծիծաղելով , բայց չէ թէ արջերու , վագրներու որսին :



— Ես ալ կ'ճանչեմ իմ հօրս շուններն, ըսաւ Խզիկնէ : Այլ և ալ անուններ ունին, մէկուն անունն է Այծա՛կ, միւսինն Հով, ուրիշ մը Պրոնն . . . : Բայց ո՛րչափ ազեղ շուն մ'է Պրոնը, երկար մարմին մ'ունի և թաթերն ակիշաւոր են :

— Պրոնն ալ միւս Արճոնի բարակներէն աւելի ազեղ չէ, ըսաւ Արապետ : Ա՛րչափ լաւ կ'որոսայ, զիտեն : Օր մը հօրս մէկ բարեկամը մեղի հետ որսի դացեր էր, Պրոն մաշտակներուն մէջ կ'որոնէր ու կ'իրկաւէր : Նապաստակներ ու ճագարներ կ'հանէր ծակերէն և հայրիկիս բարեկամն անոնց վրայ հրացանը կ'պարպէր, բայց միշտ պարապի կ'երթար : Այն ատեն Պրոն որսալէն ձանձրացաւ այն անձարակ մարդուն հետ, զնաց քարի մը վրայ նստաւ, և անոր երեսը նայեցաւ. այնպէս որ կարծես թէ զանի կ'ծաղրէր :

— Այո՛, ըսաւ Խզիկնէ, բայց Այծակն աւելի ճարպիկ է. հայրիկը կ'ըսէ թէ մինակը կ'որոսայ :

— Անշուշտ, ըսաւ Արապետ. պարծուի զէմքով մը, վասն զի ինչպէս շուն մ'է :

— Ի՞նչ է ինչպէս շուն :

— Այսինքն պարզապէս կամ դադարաւ շուն մը չէ, Պրոնն նին պէս :

— Լա՛ւ, ի՞նչ կ'նշանակէ դադարաւ շուն մը :

— Այսինքն . . . պատասխանեց Արապետ շփոթելով, այսինքն . . . արդէն գիտես ի՞նչ է :

— Ա՛յ, բնաւ չգիտեմ :

— Նախ՛ մի և նոյն կերպով չեն որսար. երկրորդ մի և նոյն կենդանիները չեն որսար : Երբոր հայրիկը մեծ կենդանիներ որսալու ելնէ, ինչպէս վարազներ, աղուհներ, այծեամներ, իր հետը կ'առնէ Այծակն ու վազուն շուներու վոհմակն, և անոնք պէտք է թէ ինչպէս իրարու հետ կը մրցին կենդանոյն հետքը գտնելու համար :

— Ի՞նչ է հետք, հարցուց նորասի աղջիկը :

— Անասուններուն ձգած շաւղն ու հոտն է իրենց անցած ճամբուն վրայ : Երբոր հայրս դաշտավայրին մէջ որսալ ուզէ, հետը կ'տանի Պրոնն : Պէտք է տեսնել թէ ի՞նչպէս կ'պրպտէ, հայրիկին ձայնին ուշադիր մնալով. ապա երբ երէն կ'գտնէ, եթէ տեսնէ իր թէ ինչպէս մէկ թաթն օդին կ'վերցընէ, վեղը կ'երկնցընէ, աչքն իր կեցուցած կենդանոյն վրայ յառած, այնպէս կ'սպասէ անշարժ մինչև որ հայրիկը մօտենայ որսին : Իսկ երբ հայրիկը կրակ կ'ընէ և երէն կ'սպաննէ, զայն բռնելու համար կ'վազէ, և բերանն առնելով հպարտութեամբ կ'բերէ :

— Միթէ չո՛ւտեր, հարցուց Խզիկնէ :

— Ամենեւին : միթէ կարծես թէ Հովն ու Պրոնն որկրամոլ են :

— Հիմա՛կ ըսիր որ Այծակն երէին ետեւէն կ'վազէ, իսկ Պրոն զայն կ'էջընէ. արդեօք հասկըցա՞ր, հարցուց մայրն, թէ ինչո՛ւ համար Այծակն ինչպէս շուն կ'կոչուի և Պրոնն դադարաւ շուն :

— Հա՛, հա՛, հասկըցանք, ըսին երկու աղայք. պատճառն այն է որ մէկը երէին ետեւէն կ'արշաւէ, իսկ միւսը կ'կեցընէ և չթողուր որ վազի :

— Լաւ դտար, պատասխանեց մայրը, բայց ի՞նչ մը չեսիր Հովն վրայ, մեծ որսական բարակին վրայ, արդեօք չէ՞ս ճանչեր :

— Հա՛, հա՛, կ'ճանչեմ, այն շունն է որ իր բարակ մարմնով շուտ շուտ կ'վազէ, թուռնի կտուցին պէս սրածայր ցուռի ունի, և բարձր ու նուրբ ոտքեր : Լա՛ւ, իր զիւրութեան պատճառաւ չէ որ նպաստակներու ետեւէն չվազէր, քանի որ շատ նիհար է որսական բարակն և ոտիները կ'համարուին, մանաւանդ երբ ճամբայ ելնէ նեախ պէս կը թուի կ'երթայ . . . :

— Լա՛ւ, որդեակ, կ'հաստատն որ այն շունն որ առ երէն



ւոյթս այնքան վտիտ և տկար է, աւելի կ'ախորժի եղջերուներ որսալ, նոյնպէս վարադներ և մինչև անգամ առիւծներ ու վագրներ, քան թէ ճագարներու պէս մանր անասուններ . . . » :

Տղայք սկսան իրենց մօրն երեսը նայիլ :

« Ուրեմն անվախ է, ըսաւ փոքրիկ աղջիկը :

— Միթէ վագրեր ու առիւծներ կ'ան մեր երկիրը, հարցուց Կարապետ կասկածոտ դէմքով մը :

— Ո՛չ, զաւակս, բայց Ափրիկէի մէջ կ'գտնուին, և Հոֆալ Ափրիկէ գտնուող շուներու տեսակէն է, որոնք Սլաֆա կ'կոչուին :

— Ա՛հ, կ'յիշեմ, պոռայ Կարապետ : Նկարչի մը խանութը պատկեր մը կայ որ առիւծներու դէմ եղած որսը կը ներկայացընէ, և որու մէջ Հոֆալ պէս շուններ կ'տեսնուին :

— Բայց միթէ վարազը չըկնար որսական բարակ մը պատառ պատառ ընել կնճիթի հարուածով մը, հարցուց Կարապետ :

— Այդ բանը երբեմն կ'պատահի, բայց Սլաֆաները կըրնան իրենց արագաշարժ թեթեւութեամբը հարուածին առաջն առնուլ : Կենդանիին երկու կողմը կ'յարձակին, երկու աւկանջներէն կ'ըռնեն, և չեն թողուր մինչև որ որսորդները զանի չսպաննեն :

— Մայր իմ, հարցուց Եւդինէ, միթէ իմ Բարաֆէկ որսական բարակերու տեսակէն էր, դիտես իմ բարակիկա որ Աշխաւ կ'կոչուէր, և քանի մ'ամէն 'ի վեր մեռած է :

— Բոլորովին այն տեսակէն չէր, սիրելի աղջիկս, քու բարակիկա տեղի փոքր ու նուրբ էր. ասիկց զատ՝ բարաակիկներն համբոյր, երկչոտ են և չեն կրնար որսի վարժիլ : Իրենց ոսկրներն այնքան դիւրաբեկ են, որ քուկը երկու անգամ իր թափը կ'ուարեց խոտին վրայ քեզի հետ խաղալու ատեն, ինչպէս որ կ'յիշես :

— Ինչո՞ւ համար մեռաւ, հարցուց Կարապետ :

— Վասն զի միշտ կ'մտէր, և մաղ չունէր. ձիու ծածկոցի նման ծածկոց մը շիներ էինք քու Աշխաւիդ համար : Օր մը հայրդ զայն գիւղը տարաւ, ձիով կ'երթար, մինչդեռ Աշխունն ետեւէն կ'քալէր : Գծադղաբար Աշխունն ձիւնին մէջ ընկաւ, և այն տեղ մնաց. մութ գիշեր էր, հայրդ կարծէր թէ ետեւէն կ'դար Աշխունը : Ուստի հետեւեալ օրն փոսի մը մէջ գտնուեցաւ, ցրակն սառեր էր :

— Ուրեմն ծոյլ կենդանի մ'էր բարակիկդ, ըսաւ Կարապետ :

— Ի՞նչ ընէր, պատասխանեց մայրը. բարակները շուտով կ'մտնի, վասն զի մաղ չունին :

— Ինչո՞ւ համար Աստուած անոնց մաղ չտուաւ :

— Ինչու որ տաք երկրի մէջ կ'ծնին : Ընդ հակառակն՝ պաղ երկիրներն բնակող շուներուն խիտ մուշտակ մը տուած է, ինչպէս են Ալպեան և Նօր-Երկրի շուները :

— Ես կարծէի թէ Ալպեան լեռներու վրայ ցուրտ չըներ :

— Զաւակս, միշտ լեռներու վրայ ցուրտ կայ, այնչափ ցուրտ որ միշտ ձիւնով ծածկուած են : Կարելի է ըսել որ բարձր լեռներու զաղաթները՝ Մասիսին պէս՝ ամպերու մէջ կ'ծրարին : Ուստի ո՞րչափ փորձանք կ'հասնի այն ճամբորդներուն որ այս վտանգաւոր լեռներէն կ'անցնին :

— Ինչո՞ւ համար վտանգաւոր են, մայր իմ . . . :

— Ինչու որ շատ անգամ ձիւներու կոյտեր, հիւսեր լեռներու բարձրէն կ'բախուին կ'զլորին և ամէն բան կ'տապալեն իրենց ճամբուն վրայ :

— Միթէ կարելի չէ՞ այն ճամբորդներուն օգնութեան հասնիլ, հարցուց Եւդինէ անհանգստութեամբ :

— Հա՛, աղջիկս, Ալպեան լեռներու շուներն են որ անոնց օգնութեան կ'հասնին :

— Մայր իմ, այդ շուներն ի՞նչպէս են :



— Գրեթէ գամփռներու կ'անանին, աղջիկս, բայց աւելի երկար մարմին ունին, աղւոր գլուխ, ուշադիր և ծանր գլուխ մը, կարծես թէ կ'հասկընան որ բարիք ընելու սահմանում են: Իրենց մազերն գամփռներու մազերէն աւելի երկայն են, աւելի խիտ և տաք:

— Նոր-Երկրի շուններն ալ յիշեցիր, մայր իմ, ըսաւ Կարապետ, արդեօք Արեւին ունեցած շունն այդ երկրէն է:

— Ճիշտ անկից է: Նոր-Երկիրն հիւսիսային Ամերիկայի մէկ կողմն է, ուր առաջին անգամ այս տեսակ շուներ զրանուեցան: Պ. Արեւ այս կողմն կ'ընակէր և այդ շունն ալ իր հետը բերաւ:

— Ուրեմն շատ ցուրա կայ Նոր-Երկիրը, հարցուց Եւդինէ:

— Շատ ցուրտ: Տարւոյն վեց ամիսն երկիրը ձիւնով կը ծածկուի, և Նոր-Երկրի բնակիչները բարեբաղդ են որ լաւ շուներ ունին իրենց ծառայելու համար:

— Ի՞նչ ծառայութիւններ կ'ընեն, հարցուց Կարապետ:

— Նախ կ'որսան, ձիւնին վրայ ահալին բեռեր կ'քաշեն, նամակներ կ'տանին սուրհանգակի պէս և հեռաւոր տեղեր յանձնառուղիէր կ'կատարեն: Ամէն նեղութիւն և յոգնութիւն կ'քաշեն: Տեսած ես անշուշտ Պ. Արեւին շունն իրեն սպիտակ ու սև մազերով. որչափ մեծ ու խոշոր է, ինչպէս հաստատուն են իր թաթերը, որչափ լայն գլուխ և ուժեղ ծնոտներ ունի:

— Եւ սակայն չար չէ, պատասխանեց Եւդինէ: Ընդ հաւկառակն, կ'ուզէ որ զինք միշտ զգուեն, անցածն օր զեւզրկելու ատեն վար նետեց:

— Իրաւ է որ Նոր-Երկրի շուները շատ զգուշի են, պատասխանեց մայրը, նոյնպէս խեղացի, հաւատարիմ և անձնուէր են: Պ. Արեւ ինձ պատմութիւն մը պատմեց որու մէջ այս բարեմասնութիւնները կ'տեսնուին:

— Ի՞նչ պատմութիւն է այդ, ի՞նչ պատմութիւն, հարցուցին քոյր ու եղբայր միտքերան:

— Պ. Արեւ երկու փոքր որդի ունէր, վրայ բերաւ մայրը: Օր մը՝ իրենց ընկերներէն երկու հոգի եկան զերենք տեսնելու, և թեթեւ փայտէ փոքրիկ նաւ մը բերին, որ կայմեր, առաքաստներ և ղեկ մ'ունէր. բան մը չէր պակսեր այն նաւուն մէջ: Անմիջապէս տղայք դացին որ այդ նաւը տունէն բաւական հեռու լճակի մը մէջ զնեւով նստել տան: Երբոր լճակին ափուփքը հասան, իրենց նաւակը ջուրը դրին: Խփոյն հովը դայն լճակին մէջ տեղը քշեց, և տղեկն որ նոյն նաւակին տէրն էր, վախնալով որ աւելի հեռու չերթայ նաւակը, ծնեցաւ որ դայն բռնէ առնու... բայց շատ ծռեցաւ, և ջրին մէջ ընկաւ...:

«Միւս երեք տղայք աղաղակներ արձակեցին և օգնութիւն պոռաղցին. բայց տունէն շատ հեռու էին, ասոր համար իրենց ձայնն անլսելի մնաց: Լճակն ընկնողին եղբայրը ծունր դրաւ և աղաչեց որ Աստուած իր եղբայրն ազատէ...»:

«Բայց Նոր-Երկրի շունն որ անոնց ետէն գացեր էր, լճակը նետուելով՝ լողաց և գնաց տղուն զգեստն բռնեց, որ արդէն ջրերուն տակ աներեւոյթ եղեր էր, և այսպէս մինչև լճակին ափը բերաւ: Արնաք երեակայել թէ տղայք որչափ երջանիկ եղան»:

— Բարեբաղդաբար, ըսաւ Եւդինէ, շունը լողալ դիտէր:

— Բոլոր շուները կ'լողան առանց կանխաւ վարժելու, ըսաւ մայրը. մանաւանդ Նոր-Երկրի շուներ լաւ կ'լողայ, վաճառ գի ամէն մէկ մատին մէջ տեղ բազերուն, կարապներուն, և ուրիշ ջուրը մտնող կենդանիներուն պէս մաշկ մ'ունի: Երբոր կենդանին լողալ ուզէ, մատերը կ'հեռացնէ, այս մաշկն որ լաւանք կ'անուանի, կ'տարածուի, և իր թաթը թիակի տեղ կ'ծառայէ...: Բայց ի՞նչ բանի վրայ կ'մտածես, Կարապետ»:



Արդարեւ Կարապետին դէմքը ցոյց կ'տար որ կ'մտմտար :

«Կ'մտածեմ, ըսաւ նա, որ այս լաւ շունքէն շատերն աւելի օգտակար են քան թէ անոնք որ կ'պարեն. բայց . . . միթէ աւելի երջանիկ են . . . : Միւսներուն չափ չե՞ն աշխատիր : Այս խեղճ շունն որ փողոցին անկիւնը նստած է՝ իր տիրոջ ոտից մօտ՝ միթէ շատ դժճ է ամէն օր կոյրն առաջնորդելուն :


— Այդ հաւանական է, պատասխանեց մայրը. նայեցէք ինչ եռանդով կ'կատարէ իր պաշտօնը : Ի՞նչպէս կ'պոտէ և կ'սիրէ իր տէրը : Իսկ այս խեղճ պարող շուներն գովամանկութեամբ և առահճի կ'աշխատին :

— Ո՛հ, այդ իրաւ է, պոռայ Խաղինէ, մտադիր եղած չէի այդ բանին :

— Բայց, ըսաւ Կարապետ, բնուէր կրել, առիւծներ որոնալ, գողերու դէմ կռուիլ, մարդիկն ազատելն աւելի տա՞ ժանելի չէ՞ քան թէ փողոցները պարելը :

— Է՛հ, ինչ փոյթ է, սիրական զաւակներս, պատասխանեց մայրն, եթէ Աստուած ամէն արարածի համար սահմանած պաշտօնին հետ նեղութիւններ ալ դրած է : Կենդանիներն իրենց բնազդովն հնազանդելու համար կ'կռուին արիաբար նեղութեանց դէմ. նոյեպէս մարդս իր պարտաւորութիւնները կատարելու համար՝ խղճի մտօք կ'ընդունի անոնց հետ կապուած տառապանքը . . . :

«Օր մը պիտի կրէք, զաւակներս, ճշմարիտ աղէտներ այս աշխարհիս մէջ, եթէ Աստուծոյ կամքը չկատարէք. իսկ եթէ կատարէք, ճշմարիտ երջանկութիւն պիտի վայելէք» :



ԽԵ

#### ՋԵՆՈՐՄԱՌԹԻՒՆ

Նորաշէն դիւղն ընտանիք մը կ'ընակէր : Տան տիկնոջ անունը Սառա էր. իր երեկը Գրիգօր կ'կոչուէր, իսկ հինգ զաւակներն էին, Տիրան, Վահան, Արշակ, Աշխէն ու Սաթինիկ :

Օր մը Սառայ ըսաւ իր զաւակաց .

«Մերելներս, վաղը կիրակի է, բոլոր շաբաթ ձեր պարտքը կատարեցիք, հլու ու հնազանդ էք, պէտք է որ քիչ մ'ալ զբօսնուք. ինչ զբօսանք կ'ուզէք :

— Թատրոն երթանք, պոռայ Տիրան, թատրոն երթանք :

— Է՛հ, ինչ պարտպ բան, ըսաւ Աշխէն, անդրանիկ քոյրն, որ ինն տարեկան էր : Իս չեմ ակորժիր թատրոնէն և շատ բան չեմ հասկընար. ուրիշ զուարճութիւն մը փնտռենք :

— Շատ աղէկ, ուրեմն կրէ՞ք երթանք, ըսաւ փոքրիկ



Վահանը, որպէս զի գեղեցիկ ձիերը տեսնենք. ինչ աղւոր կ'իսաղան այն ձիերը :

— Սիրելի Վահան, չես մտածեր որ կրկէս երթալու համար շատ ստակ պէտք է, այդ ստակով աւելի օգտակար բաներ կրնանք գնել . . . :

— Իրաւ է, ըսաւ Սաթինիկ տխրադին : Խորեմն վաղն որ կիրակի է, ինչպէս անցնենք, մայրիկ :

— Յարմար զբօսանք մը դաէք :

— Խս գտայ, պոռայ Վահան, հայրիկը վաղն ձուկ սիւսալու պիտի երթայ : աղաչենք որ մեզ ալ միասին տանի :

— Հա, հա, ադէկ ըսիր, Վահան, գոչեցին բոլոր ընտանիքը, ձուկ որսալու երթանք . . . : ձուկ որսալու . . . :

— Անշուշտ, պատասխանեց Վահան, որ զլուխ կ'ընէր իր խորհուրդն ընդունուելուն համար : հայրիկն երբոր կամի ձկնորսութեան կ'երթայ, մենք բնաւ չենք երթար : այդ օրինաւոր չէ : Խս ալ ձուկ որսալ սորվիլ կ'ուզեմ :

— Մենք ալ կ'ուզենք, մենք ալ . . . պոռային բոլոր աղայքը միաբերան :

— Ծախք ընելու պէտք չկայ, ըսաւ Սաթինիկ :

— Ոչ միայն ծախք չպիտի ընենք, աղջիկս, այլ եթէ հայրդ հաճութիւն տայ՝ ինչպէս որ կ'յուսամ, բռնած ձուկերդ մեզի ծանօթ աղբատ ընտանիքին պիտի տանք, որ շատ անգամ չոր հաց կ'ուտեն . . . :

— Ո՛հ, այո, մայրիկ, ըսաւ Սաթինիկ, և այսպէս մեծ բարեք մը պիտի ընենք :

— Նայեալէս զուարճութիւն մը պիտի լինի մեզի համար : յարեց Վահան. ինչպէս պիտի աշխատիմ շատ ձկներ բռնելու :

— Բայց մտածեցէք, ըսաւ մայրն, որ անտու կանուխ : Ժամը չորսին արթննալ պէտք է, արդեօք շատ կանուխ չէ՞ ձեզի համար, իմ փոքրիկ զաւակներս :

— Է՛հ, թէ որ այդպէս կանուխ արթննալ պէտք է, ըսաւ Արշակ սրտնեղութեամբ, աւելի աղէկ ունիմ չերթալ : ես շատ անգամ ձկնորսութիւն տեսեր և ըրեր եմ :

— Թէ որ դուն տեսեր ես, մենք չենք տեսեր, վրայ բերաւ Վահան : Ընթրիք ընելէն ետք՝ անկողին կ'մաննէր, եթէ մայրիկը հրաման տայ, և այսպէս բան մը չենք կորսնցնէր :

— Բայց բան մը կ'մոռնանք, ըսաւ Աշխէն, պէտք է հայրիկէն հրաման առնել :

— Այդ հօդն իմ վրաս կ'առնեմ, պատասխանեց մայրը : Ձեր հայրն այնքան բարեսիրտ է, մանաւանդ այնքան զոհ է ձեր աշխատասիրութենէ որ այդ անմեղ զբօսանքը ձեզի պիտի շնորհէ :

Հետեւեալ օրն ամենքն արեւը չեւած արթնցան : Քիչ մը ետքն արեն սկսաւ փայլիլ, վասն զի յուլիս ամսուն մէջն էին : Թաչիկները կ'երգէին, թեթեւ և թարմ քամին ծառերուն կատարը կ'շարժէր, և զողովուն տերեւներուն մէջ սօսաւիւն մը կ'լսուէր :

Գիւղին բոլոր գոները, բոլոր պատահանները զոյգ էին, այս փոքրիկ ընտանիքն ամենէն կանուխ արթնցեր էր :

Նախաճաշիկ ընելու համար պէտք եղած պաշարն առին, և որովհետեւ այս ուտելիքն ամենուն համար էր, ամէն մէկն ալ իր կարողութեան տարածին չափ բան առաւ : Ամէն մէկն աղայ իր կողմէն ունէր, որով մին հացը կրեց, միւսը դինին, երրորդ մը պտուղներ, ուրիշ մը պաղ միս : Հայրիկը տափակ սապատի մը մէջ դրաւ ձկնորսութեան դործիքը :

Միայն մայրը բան մը չկրեց. հայրիկն ալ աղայք թող չտուին որ Սառա բեռ մը կրէ, գինքը շատ կ'սիրէին և չէին ուզեր որ յոդնի, այսպէս ընտանեաց մայրն կարծես թէ նաև անոր թաղու չին էր :

Առտի ճամբայ ելան, հայրն ամենէն առաջ կ'աղայք և



կ'առաջնորդէր, իր հետն ունենալով Վահան որդին որ ուսին վրայ ուսանէր կ'երէր ձկներ ժողովելու համար, և կարելի էր իրեն և իր եղբայրը համար: Ամէն մէկ կարթին ծայրն տափակ փայտի կտոր մը կ'կախուէր, երկու ծայրէն աղեղնաձև կտրուած, որու վրայ ամփոփուած կ'երևէր երկար սպիտակ թել մը՝ կարմիր մանր սունկով մը, որովհետեւ կարթը զիւրաթեք էր, փայտի կտորն անդադար կ'շատէր, և այս բանս շատ զուարճութիւն կ'պատճառէր գերուկ Տիրանին որ ետեւէն կ'քալէր, իր Աշխէն ու Սաթինի քոյրերուն մէջ տեղ: Ամենէն վերջը կ'դար մայրիկն Արշակին հետ, որ քիչ մ'երեսը կախեր էր, վասն զի այնչափ կանուխ ելեր էր:

Բաւական քալելէն ետեւ՝ դետակի մը մտեցան:

«Աւսիկ գետը, աւսիկ դետակը, պոռային յանկարծ աղայքն առջեւէն, և ուղեցին վաղել»:

— Այս տեղ յարմար չէ, ըսաւ հայրը: Ձեք անանք որ այս տեղը բաց է և բանուկ: Նաւաւարներ և լաթ լուսջող կիներ այս կողմը կ'դան և ձկները կ'փախցնեն. աւելի հեռուն երթանք:

— Ինչպէս, հայրիկ, միթէ ձկները կ'զարհուրին, միթէ ձկները զիտե՞ն թէ դետափին վրայ մարդիկ կան թէ ոչ:

— Ինչո՞ւ չգիտեն, պատասխանեց օրիորդ Աշխէն, քանի որ աչք ունին:

— Եւ շատ սուր աչքեր ունին, վրայ բերաւ հայրը. մնանաւոր որ լոյսն աւելի քիչ կ'լուսաւորէ դանոնք ջրին մէջ քան թէ մեղ օդին մէջ: Բայց այս բաւական չէ, ձկներն ոչ միայն կ'տեսնեն, այլ և կ'լսեն, ուստի կ'աղաչեմ որ ցած ձայնով խօսիք, վասն զի մեր ուղած տեղը հասանք»:

Իրօք՝ ամենքը կանկ առին. ջրին ափը հասեր էին: Խիտ ծառեր կային, լատենի, ուռնի որ աղւոր հովանի մը կ'ընէին և մեր փոքրիկ ձկնորսներն արեւուն ճառագայթներէն կրնային պաասօպարել:

«Այս տեղ շատ հանդիստ է, ըսաւ հայրիկը, շուտ, թող ամէն մէկն իր բեռը վար գնէ այս կնձիին տարը»:

— Առաջ նախաճաշիկ չըպիտի ընենք, հարցուց գերուկ Տիրանը:

— Ինչպէս, ըսաւ հայրիկը, աշխատելէն առաջ ուտել կ'ուզես, այդ կարելի՞ բան է, տղաս: Այսօր դուք մեծ մարդեր էք, պէտք է որ ձեր սպառելիքը վատըրիկք:

— Իրաւ է, իրաւ է, պոռային աղայք իրենց հօրն ուղիղ դիտողութենէ համալուելով. վասն զի ճամարտութիւնն այնքան զեղեցիկ է որ արդարասէր սիրտեր անմիջապէս զայն կ'ընդունին, մինչև անդամ զոհողութիւն ընելով:

— Գործի, գործի սկսինք», այս ձայնն ելաւ ամէն կողմէ, և կարթերն անմիջապէս իրենց մէջ բաժնեցին: Նախ սկսան փայտին վրայէն թելերու կծիկը քակել: Այս թելը կէս մը մետաքս և կէս մը փաթթած ձար էր, առանց հանդոյցի: Տեղ մը կար ուր թելը փետուրէ խողովակէ մը կ'անցնէր երկու փոքր օղակներով, իսկ փետուրէ խողովակէ ալ կարմիր ներկուած սունկի մը կտորէ կ'անցնէր:

«Ի՞նչ օգուտ ունի այս սունկը, հարցուց Աշխէն:

— Հիմակ ինքնին պիտի գուշակես, պատասխանեց հայրը, քիչ մը համբերէ»:

Ձարէ և մետաքսէ թելին ծայրն ուրիշ խիտ բարակ թել մը կ'դառնուէր: Տղայք այս թելը տեսան և վախցան որ բաւական զօրաւոր չէ ձուկը վերցընելու համար:

«Ընդ հակառակն, ըսաւ հայրը, այս թելը միւսէն աւելի դիմացկուն է: Գինույ ողիով թրջած, շերամի պղտիկ կաշիէ շինուած և պատրաստուած է: Եւ որովհետեւ Գլօրանս քաղաքը կ'պատրաստեն զայն, Գլօրանի յար կ'անուանեն»:

Այս Գլօրանի յարէն պողպատէ տեսակ մը ասեղ կապուած է կորած և աղեղի պէս իրարու ներհակ երկու սուր ծայրեր ունի:



«Ուշագրութիւն ըրէք, ըստ հայրը, այս պողպատէ փոր-  
րիկ ասեղը կախն է: Թող ամէն մէկն իր ուղած խայծը դնե-  
կերիւ ծայրէն: Աստիկ ձեզի շատ տեսակ խայծեր: Այս  
մանր տուփերէն մէկուն մէջ կովի սառած արիւն կայ, միւ-  
սին մէջ որդեր կ'դնուին:»

— Ի՞նչպէս, ողջ ողջ անցքներ կարծէն, ըստ Սաթիսիկ:

— Վերջապէս, շարունակեց հայրը, աւասիկ կաննփհա-  
տի հաստեայ, եփած ցորեն, հաց, պանիր, այսպէս ամն-  
հուն ճաշակին յարմար խայծեր կան: Աստիկ անկլիական  
կարծեր ալ որոց բնաւ խայծ չեն դներ: Գիտեցէք որ կարծի  
ոլորած և ազաղաղէ փետուրի մը մէջ պահուած է, որ ջրի  
սարդի մը կ'նմանի, այնպէս որ ձուկը կ'խաբուի և կ'ըն-  
տուի:

— Ես անկլիական կարծ մը կ'ուզեմ, հայր իմ, ըստ  
Սաթիսիկ:

— Ես ալ նոյնպէս, ըստ Աշխէն:

— Աւէք, աղջիկներս, ըստ հայրը, բայց պէտք է դործ-  
ածելը գիտնալ: Պէտք է ստեպ թեթեւ մը ցնցել կարծին  
թելը, որպէս զի ջրին մէջ մանր փետուրը շարժի, թէ ոչ  
ձուկը չընտուիր:»

Հայրն ու աղայքը ողջ խայծեր դրին և ամէն կարծի թե-  
լերն ջուրը նետեցին, ուշադիր և լռիկ մնչիկ սպասելով:  
Յանկարծ Սաթիսիկ այլայլութեամբ ըստ.

«Հայրիկ, իմ կարծի ջրին մէջ կ'սուզի, և ահա փոր-  
րիկ սունկն ինքնիքն կ'շարժի, . . .»

— Վասն զի ձուկ մը խայծը բռնեց, պատասխանեց հայ-  
րիկը, թելը քաշէ:»

Սաթիսիկ թելը քաշեց և անոր ծայրը պզտիկ ձուկ մը  
տեսաւ. որ կ'տարուբերէր:

«Ինչո՞ւ համար այսպէս կ'շարժի, հարցուց պզտիկ աղ-  
ջիկը, արդեօք կ'տառապի:»

— Անշուշտ, պատասխանեց հայրը, քանի որ կարծին  
բռնուեցաւ:

— Ես ալ ձուկ չեմ բռներ, վրայ բերաւ աղջիկը, սիրտս  
կ'ցաւ:» Եւ այս ըսելով կարծին թելը մէկ զի նետեց:

— Հիմակ կրնաս հանդիլ, ըստ Արշակ իր քոյրը ծաղ-  
րելով, մեծ որս մ'ըրիր, գէթ յոռոյն մը բռնեցիր:

— Ո՛չ, ըստ հայրը, քայտնալ մ'է. բայց այս ձուկը  
դէշ որս մը չէ, թէև փոքր է բայց համով միս ունի:

— Ժայռածո՞ւկ, ըստ Արշակ, ես երբեք տեսած չեմ  
ձկնորս մ'որ այսպիսի ձուկ որսայ ծովէն:

— Անշուշտ, ըստ հայրը, անշուշտ ձկնորս չեն որսար  
ծովու մէջ, ինչպէս որ Զոհրա չին որսար անուշ ջրի մէջ:

— Ի՞նչ է անուշ ջուրը, հայր, հարցուց Տիրան, ար-  
դեօք շաքարեայ ջուր է:»

Արշակ սկսաւ քահ քահ ծիծաղել. իր եղբայրը շփոթե-  
ցաւ, բայց հայրն անոր ըստ.

«Արշակ, ինչո՞ւ համար կ'ծաղրես եղբայրդ, սակայն ծի-  
ծաղելու բան մը չէ չգիտնալն ինչ որ դու սորվեր ես:»

— Ես կ'ձանձրանամ այս տեղ, ըստ Արշակ:

— Ուրեմն ըսէ անոնց ինչ որ կ'փափաքին սորվիլ, այս-  
պէս դու ալ կ'լուարձանաս. այս վարմունքդ աւելի գովելի  
պիտի լինի քան թէ ծիծաղդ:

— Բայց ես ալ չգիտեմ թէ ի՞նչ է անուշ ջուրը, այս-  
չափ միայն գիտեմ որ ծովուն ջուրն աղի է:

— Լաւ ուրեմն, վրայ բերաւ հայրը, գետեբու ջուրն աղի  
չլինելուն համար է որ անուշ ջուր կ'կոչեն:

— Հայր իմ, պուսպ Վահան, բան մ'իմ թելս կ'քաշէ.  
ո՛հ, եկուր ինձ օգնէ, սպստիկ կ'քաշէ:

— Այս անգամ բաական մեծ որս մը պիտի ընենք», և  
այս ըսելով կամաց կամաց թելը քաշեց մինչև գետափը,  
պապ ջրէն խոշոր ձուկ մը հանեց:





— Ծափան մ'է, պոռայ Վահան, ես կ'ձանչնամ. ասոր նմանները տեսած եմ խոհանորդ : Ո՛հ, նայեցէք, յարեց նա, երբոր իր հայրն կարթէն կ'հանէր ծածանը, ինչպէս ծանր կ'մեռնին : Միւս ձկներն ջրէն որ կ'եւնեն շուտ մը կ'մեռնին, մինչդեռ անցածն օր ծածան մը դեռ կ'ցատկաւոր կտոր կտոր ընենէն ետեւ :

— Աւելի աղէկ է, ըսաւ մայրը, թողու որ խեղճ կենդանիները մեռնին, կամ մէկ հարուածով սպաննել քան թէ այսպէս չարչարել :

— Ես ալ այս կ'ըսէի խոհակերին. բայց այն պատասխանեց ինձ որ ձուկն աւելի համով կ'լինի երբ ողջ ողջ եփեն :

— Բաւական է, պատասխանեց մայրն, որ ձուկը թարմ լինի, այն աստիճանով համով կ'լինի :

— Ինչո՞ւ համար ձուկերը կ'մեռնին երբոր ջրէն դուրս ելնեն, հարցուց Աշխէն, մինչդեռ մենք՝ եթէ ջուրն իյնանք կ'մեռնինք :

— Վասն զի, ըսաւ հայրը, ջրին մէջէն միայն կրնան օդ ծծել, մինչդեռ մենք՝ միայն մարդու օդ կրնանք ծծել :

— Միթէ ձկներն օդ կ'ծծեն :

— Հասկա :


— Միթէ մեղի պէս թռքեր ունին :

— Ո՛չ, թռքեր չունին իրենց կործրը, այլ գլխուն եր-

կու կողմէն «պէր ունին : Այս ծածանին ախանջները բաց և թխալոյն ծոպեր պիտի տեսնես :

— Այո, այո, կ'տեսնեմ :

— Լաւ, այս փոքրիկ ծոպերն մանր խողովակներ են որմէ



ձկներուն կլլած ջուրը դուրս կ'եւնէ և անոր օդը ներս կը պահեն մասամբ մը, ինչպէս որ երկրի վրայ ապրող կենդանեաց թռքերը կ'ընեն» :

Այսպէս խօսակցելով ձկնորսութիւնը կ'շարունակուէր : Բիշ ատենէն ուռկանին մէջ՝ որ խոտին վրայ էր, ամէն տեսակ ձկներ կ'տեսնուէին, և ամէն տղայ իր գիտցածը կ'ըսէր :

Այսպէս՝ պատմեցին որ ծածանն ամենէն ընկերային ձկներէն մին է, և թէ կարելի է քիչ շատ զայն ընդելացրնել :

Նոյնպէս կ'ըսէին թէ ծածանը շատ ծուծկալ է, գլխաւորապէս խոտ, ցորեն ուտելով կ'ապրի, և թէ ձմեռը աղմին մէջ կ'մանէ և շատ ամիսներ կ'մնայ, աւելի նախապատ համարելով՝ բան չուտել քան թէ ուրիշ ձկներու դէմ պա-



տերազմիլ է։ Իսկ ընդ հակառակն դայլաձուկը, շար ընկեր մ'է, միւս ձկները կ'կլլէ, և այնքան որկրամեղ է որ կեւ րածն անդամ ինչ է չնայիր. այնպէս որ կ'ըսեն թէ օր մը դայլաձուկ մը ձիու մը քթին վրայ ելաւ, երբոր ձին գեւ տէն ջուր կ'իմէր, և ջրէն դուրս ելնելու աւելի լաւ սեւ պեց քան թէ ձիուն քիթը թողուլ։

Տղայք արդեօք յոռի մը բռնեցին և անոր աղւոր դոյնեւ րուն վրայ զմայլեցան, նոյնպէս իրեն բերին մանր մօրու քին վրայ, և զարմանօք իմացան որ այս ձուկն երբեմն այնչափ կ'մեծնայ որ մինչև ութ ոտք երկայնութիւն կ'ստանայ։

Կապոյտ չիւր ու լաւագէտ բռնեցին, և տեսան որ զրեթէ ծածանին կ'նմանին, միայն թէ անոնց թեփերն աւելի մանր են։

Պէրկէր ալ որսացին և զիտեցին որ իրենց կռնակին վրայ սեկակ գծեր ունին, մինչդեռ իրենց թեքը կարմիր են։ Տղայ հայրը պատմեց որ այս ձուկը դայլաձկան պէս շատա կեր է, և թէ ոչ միայն փոքր ձկներ կ'կլլէ, այլ և երբեմն ջրէն դուրս կ'ցատկէ որպէս զի անոր երեսը թռչող անթիւ ճանձերը բռնէ ուտէ։

Անդադար ձուկ կ'որսային, վասն զի այս աղւոր գետակին մէջ ամէն տեսակ ձկներ կային, և ամէն տեսակ խայծեր փոքրիկ ափերուն մէջ։ Վերջը զրեթէ գեղին ձուկ մ'որսացին, որ սպիտակ ու թուխ գծեր ունէր, մէկ ոտք երկայն էր, շատ նուրբ, և երբ սղայք զայն բռնել ուղեցին՝ այդ գեղին ձուկն իրենց ձեռքէն սահեցաւ որպէս թէ վրան լարածուն բան մը քսուած էր։

«Այդ ձուկը կ'ճանչնամ, ըսաւ մայրը։ Խիստ փափուկ և ընտիր միս ունի. անունը լոտէ է (lotte)։

— Ի՞նչ երջանկութիւն, յարեց Սաթինիկ՝ մտածելով այն խեղճ ընտանիքին վրայ որու որսացուած ձկերէն պիտի տային։

Վերջապէս կարճաօրէն մը բռնեցին։

Տղայ հայրն ըսաւ՝ այս կարմրամիտ կարմրախայտ ձուկը ծովու ձուկ է, բայց դարնան ծովէն կ'հեռանայ և երբեմն գետակներէն շատ վեր կ'ելնէ։

— Մայրիկ, հարցուց Սաթինիկ, ի՞նչ է գետակներէն վեր ելնելը։

— Իմ փոքրիկ աղջիկս, ամենէն բարձր տեղն յառաջանայ, գետին ալիւնք գիմել է, ոսկից գետակը կ'ըլլի և վար կ'իջնէ, այս գետակին պէս։

— Գետակն այսպէս ո՞ր կ'երթայ։

— Ուրիշ գետի մը միանալու կ'երթայ որպէս զի անոր հետ հոսի։

— Եւ այսպէս գետակն ու գետը միասին ո՞ր պիտի երթան։

— Ծովը կ'իջնան և անոր մէջ կ'խառնուին։

— Այսպէս ակունքն սկիզբն է և ծովը վախճանը։

— Միթէ կարմրախայտներ տեսած ես, հարցուց Աշխէն Արշակին։

— Կարմրախայտներ և ուրիշ շատ տեսակ ձկներ տեսած եմ, պատասխանեց Արշակ մօտենալով։ Տեսած եմ ահագին լիւննուտներ, յողմէներ, օյմէներ։ Ուռկանով կ'բռնեն օձաձկները, բայց երբ ծովը ցած է ձկնորսը կրնայ բռնել իր ձեռքով այս ձկներն որ քարերու տակ կ'ընկնին։ Դմանապէս տեսած եմ ձկնորսներ որ ասորէ և ձկան ականջներ կը բռնէին։ Ասոնք կարգաւ կ'կապուին ժայռերուն կամ ծովուն առաջուտ ափանց։ Մեծ տրամխներով զանոնք կ'խլին, նաւակներու մէջ կ'դնեն և ապա ցամաքը կ'բերեն։ Ահա՛նա յոռի ալ տեսեր եմ, զարմանալի ձկներ են։ Երեւակայեցէք որ սափակ, կլոր են, մէկ կողմի վրայ կ'ըղան, և միւս կողմին վրայ երկու աչք ունին։

— Շատ աղել ձուկ մը պիտի լինի այդ, ըսաւ Տիբան։



— Այո՛, պատասխանեց Արշակ, բայց շատ բարի է :

— Խոհանոցը տեսեր են, ըստ Աշխէն, այնպիսի ձկներ որ անոր կ'ամանին, բայց զանոնք լեզուաշուկ, Կոմիտասի կ'անուանեն :

— Իրաւի, պատասխանեց Արշակ, բոլոր այդ ձկները լաւ են, բայց վահանաձուկն ալ ուրիշ բան է :

— Այս ալ կայ, յարեց մայրն, որ վահանաձուկն շատ աւելի խոշոր է, և աւելի սուղ կ'ծախուի :

— Ես ալ տեսայ, շարունակեց Աշխէն, տափակ ձուկ մ'որ Կոմիտասի կ'ընչուէր :

— Նոյն ձուկը չէ, վրայ բերաւ Արշակ, կատուաձուկը ծուռ բան մը չունի, փորի վրայ կ'ըղայ, երկու կողմէն իր թևերը լայն լայն կ'տարածուին, այնպէս որ կարծես թէ ջրին մէջ կ'լծուի՝ ինչպէս թռչուններն օդին մէջ : Զաւիագանց որկրամուկ է :

— Ես ալ ձողաձուկ տեսեր եմ, ըստ Ահսան. բայց նպարավաճառին խանութը տեսեր եմ, բացուած ու կտոր կտոր տակաւներու մէջ տափակ դրուած : Ուստի չգիտեմ թէ ձողաձուկ մը ինչ ձև ունի :

— Ես ալ աղէք և անչորսի տեսած եմ թիթեղէ տփերու մէջ դրուած, ըստ Աշխէն :

— Աղկերներն քանի մը ծովերու մէջ առատ են, ընդմիջեց հայրը, իսկ անձրուկներն Միջերկրական ծովուն մէջ շատ կ'դտնուին :

— Իսկ ես, ըստ Սաթինիկ, բնն տեսած եմ մանր սրուակներու մէջ, բայց ձողաձուկին պէս կտոր կտոր կտոր եղած էր, և չգիտեմ նաև թէ կենդանին ինչ ձև ունի :

— Ես ալ, ըստ Տիրան, Կոմիտասի տեսեր եմ :

— Իսկ ե՛ս, ես, ըստ Արշակ պարծենկոտ կերպով մը, այս ամէն ձկներուն որսը տեսած եմ :

— Լաւ ուրեմն, տեսածներդ մեղի սրտով, ըսին իր եղբայրներն ու քոյրերը :

— Երբոր սեղան նստինք, պոռայ բարի մայրը ծիծաղելով. վա՛ն զի այս խօսակցութեան ատեն խոտին վրայ նախաճաշը պատրաստէր էր :

— Սեղան նստինք, պատասխանեցին գուարթ տղայք իրենց կարթերը մէկի թողլով : Եւ շուտ մը ցատկելով սեղանին բոլորտիքը նստան :

Սփռոց ու անձեռոց չկար. ուստի մանչերն իրենց ոտից վրայ, և աղջիկներն իրենց ծնոցայ վրայ՝ սպիտակ թաշկիւնակներ փռեցին և նախաճաշին սկսան :

Տղայոց փոքրիկ ակուսներն լաւ և շուտ կերան. միշտ մարդ լաւ ակործակ կ'ունենայ երբոր կ'աշխատի :

Ասիկց զատ՝ այն մեծ ծառերուն տակ որչափ գուարձալի էր : Տերեւախիտ ճիւղերն հովանոց մը կ'ձևացնէին այն արտին մէջ տեղն ուր արևուն ճառագայթները կ'զարնէր :

Շախմատի մեղի պատմէ, ըստ Ահսան իր եղբորը, թէ ինչ ձկներու որսը տեսար :

— Շատ աղէկ, պատասխանեց Արշակ :

Եւ իր պատմութիւնը պիտի սկսէր, ամենքը լուռ կեցան որ մտիկ ընեն, երբ յանկարծ՝ այս լուր թեան ատեն՝ հեռուէն այլանդակ աղաղակ մը լսուեցաւ, կ'ը, կ'ը :

Քի՛նչ կենդանի է այս, հարցուցին տղայք :

— Գո՛րբ մ'է, ըստ հայրը : Սովորաբար իրիկունը կ'ըսէին գորտերը. բայց կ'երևի թէ այս գորտը գուարթ է :

— Բայց ո՞ր է, հայրիկ :

— Աստարակոյտ առուակի մը քարերուն մէջ պիտի լինի, որ այս դաշտին և մտակայ մարդադետներն մէջ տեղէն կ'անցնի :

— Իրաւ է որ, ըստ մայրը, առուակներու և ջրնղջիներու մէջ կ'որսան գորտերը :

— Միթէ գորտեր ալ կ'որսան, հարցուց Աշխէն, բայց ինչ կ'ընեն :

— Ս'ուտեն, ըստ մայրը :



— Ի՛նչ, գորտերը կ'ուտուի՞ն :

— Ինչո՞ւ չեն ուտուիր : Միթէ ձուկ, նապաստակ, վառեակ չե՞նք ուտեր :

— Բայց կ'ըսեն թէ գորտերը թունաւոր են :

— Բնու թունաւոր չեն, ինչպէս նաև օձերը : Բայց դարձեալ գորտերու ազդրները կ'ուտեն, և կ'ըսեն որ՝ եթէ լաւ համեմուն՝ շատ ընտիր կերակուր կ'զաւնայ :

— Միթէ խեցիկտինն ալ առուակէն չե՞ն որսար :

— Այո՛, պատասխանեց հայրը . կըր ու տափակ ցանցիւրով կ'ընեն դանոնք՝ որ կըրի մը նժարին ձեն ունի : Ասոր համար այս ցանցերը կ'ընեն կ'անուանեն : Ամէն մէկ ցանցի վրայ՝ հոտած մսի կտոր կ'դնեն իբրև խայծ, որ խեցիկտինը կ'հրապուրէ և կ'ընէ :

— Արդեօք այն անշահ մօծ խեցիկտիններն ալ կ'որսան, որ կարմիր են բոլորովին, հարցուց Տիրան :

— Հա՛, պատասխանեց Արշակ, երբոր եփեն այն ատեն միայն կ'կարմրին, երբ ողջ են մանր խեցիկտիններուն պէս սև են :

Յանկարծ այս ընտանեկան խօսակցութեան ժամանակ՝ դետակին կողմէն մարդու ձայներ և ջուրը զարնող թիակներու ծփանքը լսուեցան :

Ամէն տղայք իրենց զլուխը դարձուցին :

«Ասոնք ձկնորսներ են, ըսաւ հայրը, իրենց ուռկանը գետակը նետեր են :

— Նայինք, նայինք», պոռոցին տղայք, և ամենքը գետափը վազեցին :

Փղբրիկ նաւակի մը մէջ երեք մարդ տեսան : Երկուքը թիկեալէին, և երրորդն ուռկան մը կ'ձգէր ջուրը, և այս ուռկանին միւս ծայրը զիմացի գետափը գտնուող մարդեր բռնէր էին : Ուռկանին մէկ եզրին վրայ կապարէն լնդակներ կային որ զայն վար կ'մղէին . իսկ միւս եզրը՝ կըր սունկեր կային

որ ուռկանը ջրին երեսը կ'սպհէին, այնպէս որ ուռկանը վերէն վար ձգուած կ'երևէր գետակին մէջ :

Նաւավարները նաւը շուրջ դարձուցին ուռկանը քաշելով և իրենց մեկնած տեղը գալով : Այն ատեն ուռկանը ջրէն դուրս քաշեցին և նոյն շրջանին մէջ գտնուած բոլոր ձկները բռնուեցան :

«Այն նաև ձկնորսներ որ ծովը կ'երթան որսալու, ըսաւ հայրը :

— Նոյն ուռկանով, հարցուց Տիրան :

— Այո՛, ըսաւ Արշակ, այս ուռկանին պէս սունկեր և կապարներ ունի ծովու ուռկանն ալ, միայն ծայրը քսակ մը կայ ոսկից ձուկը չկրնար դուրս ելնել բռնուելէն ետե : Այս ուռկանով ամէն տեսակ ձկներ կ'որսան, մինչև անգամ՝ վահանաձուկ և լեզուաձուկ, թէ և ծովուն յատակը կ'զտնուին : Բայց ձկնորսներն պատիժ կ'ընդունին և տուգանք կ'վճարեն եթէ ծովեզրն որսան :

— Ինչո՞ւ համար :

— Չգիտեմ :

— Վասն զի, ըսաւ հայրը, ծովեզրերին մօտ գտնուող հաւկիթներն ու փոքր ձուկերը կրնան ջնջել :

— Արդեօք այս մանր ձկներուն հայրն ու մայրը զերենք չե՞ն պաշտպաներ, հարցուց Սամինիկ :

— Սմենիկ, պատասխանեց հայրը : Իզերը բիրաւոր ձկներ կ'ածեն, ապա կ'թողուն, և ձագիկները չեն ճանչնար իրենց ծնողքը :

— Ո՛հ, ի՛նչ անպիտան ծնողք են, ըսաւ Աշխէն :

— Միթէ ձողաձուկ կ'որսան, հարցուց Տիրան :

— Այո՛, բայց շատ քիչ, պատասխանեց Արշակ :

— Չողաձուկը կարթով կ'ընեն, ըսաւ հայրը, և ամէն ծովու մէջ քիչ շատ կ'գտնուի : Շատ անգամ Բլանկի ձկան պէս կ'աղեն զայն, անոր զլուխը կ'կտրեն, զայն կ'բանան և



տակաւորութիւն մէջ կ'ընեն : Այսպէս կ'պատրաստեն նաեւ ինչ-որ մէկը :

— Հապա ծովու պատէիք ո՞ր կ'որսան, հայրիկ, հարցուց Վահան :

— Տառելիք զլիաւորապէս Վանայ ծովը, Հոլանտայի եղբորը կ'որսան, ուսկիցով և մեծ առուտոր կ'ընեն մարդիկ : Քանի մը գիտուններ կ'ըսեն թէ տառելիներն ծովուն խորը կ'ապրին և ապա այնքան բազմութեամբ ջրին երեսը կ'ենեն որ երբեմն զիրար կ'սղլղեն :

— Այդ անհետիւտ կարծիք մ'է, ըսաւ Արշակ, վասն զի ծովը այնքան ընդարձակ է որ կարող է առանց դժուարութեան անհամար ձկներ պարունակել :

— Արեւմտառելիներն այն պանդուխտներն են մանին, ըսաւ Տիրան, որ Հայաստանի այլ և այլ կողմերէն կ'գան և մայրաքաղաքը կ'գիշերեն, մինչդեռ այնքան աղօր ու սիրուն դաշտեր կան հայրենիք՝ բնակութեան համար :

— Արդէն գիտնալ, ըսաւ Սաթիւնիկ, թէ ո՞ր ձկնորսն ամենէն առաջ տառելին աղելու գիտը հնարեց :

— Իրաւունք ունիս այդ հարցմունքն ընելու, աղջիկս : Ճշմարիտը, շատ օգտակար մարդ մ'եղաւ այն, քանի որ հնար մը դտաւ ածանցնելու առատ սնունդ մը մատակարարել ժողովրդեան : Այդ մարդը հոլանտայի մ'էր, Պութալց անուամբ : Հայրենակիցներն իրեն արձան մը կանգնեցին :

— Միթէ Պութալց միայն տառելիներն ամենէն առաջ աղելու փառքն ունեցաւ, հարցուց Տիրան :

— Արդեա՛կ իմ, պատասխանեց հայրը, մեր նմանեաց օգտակար լինին մարդու համար մեծ փառք մ'է :

— Արեւմտ, ըսաւ Արշակ, ձկներն, որ բարիք ընելու տեղ չարիք կ'գործեն, իբրեւ կ'ուսեն ու կ'լլղեն շատ թշուառ և չար են :

— Այո՛, ըսաւ Տիրան, և պէտք էր ամենքն ալ սպան-

նել : Ի՛նչ հայրեր ու մայրեր են որ իրենց մանր զաւակներն երեսի վրայ կ'թողուն . . . :

— Անկարելի բան և յիմարութիւն է, ըսաւ հայրը, բոլոր ձկներն մէկէն սպաննելը, վասն զի Աստուծոյ մեղի տուած ամենէն անդին սնունդներէն պիտի զրկուինք :

— Լաւ ուրեմն, ըսաւ Տիրան հանդիսաւոր կերպով մը, եթէ չենք կարող զանոնք սպաննել, դո՛նէ կրնանք դատապարտել :

— Եւ ուտել, ըսաւ Վահան :

— Տիրան, այնպէս կ'խօսիս ձկներու վրայ որպէս թէ մարդիկ լինէին, պատասխանեց հայրը : Միթէ Աստուած մեր վրայ դրած պարտաւորութիւններն անոնց վրայ ալ դրաւ : Միթէ անոնք մեղի պէս սիրելու համար հոգի մ'ունին, խելք ունին լուսաւորուելու համար, և մեղի պէս մարմին մ'որ հոգւոյն ծառայէ :

«Բայց նայէ՛ անդամ՝ մը, նայէ՛ օրչափ զուրկ են մեր ունեցած բարեմասնութիւններէն : Իրենց կաշին որ թեփով ծածկուած է, անդոյց է, զրեթէ ոչ ճաշակ ունին և ոչ հոտոտելիք, պաղ է իրենց արիւնը և թերի սրաւ մ'անցնելով ծանր կ'շրջի : Այնքան սափակ է իրենց դուխն, որ ըզնդի համար հաղիւ տեղ կայ : Իրենց կեանքն միօրինակ, մենաւոր է : Ո՛չ ուրախութիւն ունին, ո՛չ բարեկամութիւն, ոչ ընտանիք :


«Եւ ի՛նչպէս կ'ուզէք, աղայք, որ այսպիսի ստորին էակներ մեզի պէս պարտաւորութիւններ ունենան : Ո՛չ, Աստուած ամէն արարածի մտաւոր կարողութեան համեմատ պարտաւորութիւն տուած է :

— Արեւմտ, հայր իմ, ըսաւ Աշխէն, քանի որ Աստուած անօգուտ տեղը բան մը չտար, կրթութիւն, առողջութիւն, հարստութիւն ունեցող անձ մ'աւելի պարտաւորութիւններ ունի քան թէ այն մարդն որ հիւանդ, կամ աղքատ, կամ անխելք է :



— Ճշմարիտ ըսիր, աղջիկս, պատասխանեց հայրը, Աստուած որչափ շատ տայ մեզի այնչափ աւելի կ'պահանջէ . . . :

Իրիկուն եղեր էր. զեռակին միւս կողմը՝ ծառերուն ետեւն արեւը վար կ'իջնէր: Կարթեքն և ուռիանները ծրարեցին, և բոլոր ընտանիքը տուն գնալու համար ճամբայ ելան ուրախ զուարթ:



## ՅԱՆԿ ԴԼԽՈՅ

ԴԼՈՒԽ	Երես
Յառաջարան . . . . .	3
Ա. Փոքրիկ աղջիկն ու փոքրիկ կատուն . . . . .	5
Բ. Ծխանին վրայի բոյնը . . . . .	6
Գ. Գիւղը . . . . .	8
Դ. Բռնուած թռչնիկը . . . . .	11
Ե. Երկու կառք . . . . .	13
Զ. Սպասաւոր և բարեկամ . . . . .	16
Է. Կորեկի մը հատին պատմութիւնը . . . . .	19
Ը. Պարտեզին այծիկը . . . . .	24
Թ. Այգի . . . . .	29
Ժ. Հաւն ու իր ձաղիկները . . . . .	31
ԺԱ. Արեւ . . . . .	37
ԺԲ. Աչկապուկ . . . . .	40
ԺԳ. Գետնախնձոր . . . . .	42
ԺԴ. Թիթեռնիկ . . . . .	45
ԺԵ. Հինձու ծաղիկները . . . . .	47
ԺԶ. Ծեքը Կիրակոսին խորձը . . . . .	49
ԺԷ. Թրթուրներ . . . . .	50
ԺԸ. Զուլթակ . . . . .	56
ԺԹ. Շաքարի կտոր մը . . . . .	58
Ի. Մանիշակի փունջը . . . . .	60



ԳԼՈՒԽ	Երես
ԻԱ. Յորենի հասկերը . . . . .	64
ԻԲ. Թովմասին շունը . . . . .	65
ԻԳ. Շուն, աղւոր և աղուէս . . . . .	69
ԻԴ. Յափրուկ . . . . .	70
ԻԵ. Կով և դորտ . . . . .	78
ԻԶ. Ոսկի եղնակ . . . . .	79
ԻԷ. Փիլիսոփայ աղան . . . . .	84
ԻԸ. Թեթև բարեկամ . . . . .	88
ԻԹ. Աշխատասէր աղան . . . . .	93
Լ. Երկու ծառ . . . . .	95
ԼԱ. Բաղդաւոր Կովտասը . . . . .	98
ԼԲ. Իր վեճակէն դո՛հ հովիւ աղայ մը . . . . .	106
ԼԳ. Թռչնիկի մը պաամութիւնը . . . . .	110
ԼԴ. Որդեկան սէր . . . . .	120
ԼԵ. Ծեր հովիւ . . . . .	122
ԼԶ. Բարկութիւն . . . . .	135
ԼԷ. Փայտահատին այրի կիներ . . . . .	137
ԼԸ. Միդաս կամ ոսկի շօշափելիք . . . . .	139
ԼԹ. Պետրոս և հաւկիթները . . . . .	146
Խ. Եղջերու . . . . .	149
ԽԱ. Իշն ու իշախորը . . . . .	150
ԽԲ. Պայտ . . . . .	151
ԽԳ. Ի՞նչ օգուտ ունին շուները . . . . .	153
ԽԴ. Չկնորսութիւն . . . . .	167





363X



5708000

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008015



